№ 7—9 (213) XX ՏԱՐԻ ՅՈՒԼԻՍ—ՍԵՊՏԵՄԲԵՐ 1910

„Droschak"
ORGANE
de la Fédération
Révolut. Arménienne.

ԴՐՕՇԱԿ

Adresse:
RÉDACTION DU JOURNAL
„Droschak"
GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ" ՕՐԳԱՆ

ՄԻ ՄԵԾ ՇԱՐԺՄԱՆ ՍՏԻԵՐՆԵՐԸ

(ՌՈՒՍ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԵԱՆ ՎԻԺՄԱՆ ԱՌԻԹՈՎ)

(Վերջ)

III

Կոպենհագում, ռուսական կուսակցութիւնների յատուկ խորհրդաժողովի մէջ, „Դաշնակցութեան" ներկայացուցիչները բնորոշեցին մի քանիսը այդ „ստուերներից", մատնացոյց եղան մի երկու խոշոր „արատների" վրայ, որոնք ի շարս այլ գործօնների, պատճառ են եղել համառուսական յեղափոխութեան ֆիասկոյ։

Մենք նրանց վրայ բաւականաչափ ծանրացանք արդէն „Դրօշակի" անցեալ յօդուածների մէջ.—հարկ է, սակայն, վերադառնալ և աւելի երկար կանգ առնել մօտիկ անցեալի այդ անհրաժեշտ վերլուծման վրայ, որ պիտի տայ մեզ և ցուցմունքներ ու հրահանգներ ապագայի վերաբերմամբ։

Կուսակցութիւնների հակամարտութիւն և ռազմական ուժի թուլութիւն, գրեթէ կատարեալ բացակայութիւն — ահա երկուսը խոշորագոյն „ստուերներից", պատճառներից։

Երկու պատճառներ, որ չափազանց ակներև են ու աղաղակող և որ այսօր գրաւեցնում են բոլոր զգաստ, ու ողջամիտ տարրերին՝ ոչ միայն Ռուսաստանում, այլև դրսում, արտասահմանում։

Եւ արտասահմանը, դրդւած ռուսական հատուածների այդ ողբալի վիճակից, նրանց դիմադրական ուժերի ծայրայեղ տկարութեան հանգամանքից, արտասահմանը յանձին իր ամենազգայուն և ամենագործօն տարրի, Ֆրանսիական Սոցիալիստ Կուսակցութեան՝ եկաւ առաջադրեց Կոպենհագի Միջազգային Ատեանին իր բանաձևը՝ սոցիալիստական կուսակցութիւնների միութեան առթիւ։

Բանաձևն անցաւ միաձայն։ Ոչ մի բողոք և ոչ մի առարկութիւն։ Ի՞նչ օգուտ, սակայն։ Ի՞նչ հետևանք, անդրադարձում կարող է ունենալ Ինտերնացիոնալի վճիռը ռուսական հատուածների մտածողութեան, տրամադրութեան վրայ... Ռուս մարքսիստները ընդունում են այդ վճիռը, իբրև սոսկ պլատօնական մի բաղձանք, ընդունում են ոչ թէ իրենց կողմից ևս ջանալու համար գէթ համերաշխ միջկուսակցային գործակցութիւնն իրականացնելու, այլ լոկ միայն Ինտերնացիոնալին հաճելի լինելու նպատակով։

Եւ ահա արդէն „մենշեվիկների" պարագլուխ Գեօրգի Պլեխանովը, հազիւ հազ թափ տուած իր ոտքերից Կոպենհագի փոշին, ազգարարում է Ժընէվեան իր զեկուցում-դասախօսութեան մէջ—գրգռիչ, յաւակնոտ, պրովոկան տոնով, որ յատուկ է այդ մարդուն—թէ ռուսական սոցիալ-դեմոկրատիան ոչ մի առնչութիւն չունի ս.-ռ.-ական ու այլ կուսակցութիւնների հետ և թէ ամբողջ Ռուսաստանում պիտի տիրէ մէկ միայնակ սոցիալիստական հատուած—Սոցիալ-դեմոկրատիան։

Հակառակորդութեան, կուսակցական անհաշտութեան տենդը չի նւազում պարտութիւնների հետ։ Չի նւազում և մարդկանց, խմբումների յաւակնոտութիւնը։ Պրոլետարիատը—էլի նոյն հզօր, անպարտելի բանակն է այդ զարմանալի քրմերի համար և սոցիալ-դեմոկրատիան, չը նայեած ներքին աղէտալի մերկացումներին, լրտեսների, պրովոկատորների անսպառ շահատակութիւններին, չը նայեած աղանդական, հատուածային կռիւներին և ընդհանուր, յուսահատեցուցիչ կազմալուծման, — սոցիալ-դեմոկրատիան էլի նոյն տիտանն է, որ շուտով, շա՜տ շուտով, գալ տարի պիտի տապալէ „հոգեվարք-բռնապետութիւնը"...

Կարդացէ՛ք այդ կուսակցութեան հաստահատոր Զեկուցումը, ներկայացուած Կոպենհագի Համագումարին—և դուք կը զարնւէք ամեն բայլափոխում այդպիսի խրոխտ, յաղթական, աշխարհասասան ծանուցումների։

Դա մի ուշագրաւ ու հաղւագիւտ փաստագիր է, որ հարկ է օգտագործել։ Վաղուց, նոյնիսկ Շտուտգարտի Համագումարին, ռուսական սոցիալ-դեմոկրատիան այդպիսի տպագրւած և ընդարձակ հաշիւ չէր տւել սոցիալիստական Ինտերնացիոնալին իր գործունէութեան մասին։ Այժմ ահա երկարատև լռութիւնից յետոյ բաց է անում արամազդեան բերանը և յաղթական հանդիսաւորութեամբ պատմում է իր սխրագործութիւնները։

Դա մի ճշմարիտ հայելի է, այդ Rapport-ը։ Այդտեղ ցոլում է Ռուսաստանի ամենամեծ կուսակցութեան հարազատ պատկերը, ցոլում է և նրա ամբողջ տակտիկը մօտիկ ալէծուփ ու արհաւրալի անցեալի մէջ։

Այդտեղ, օրինակ, գրեթէ իւրաքանչիւր երեսի վրայ կը կարդաք սոցիալ-դեմոկրատիայի հանդիսաւոր հաւաստիացումները, թէ ինչպէս Յեղափոխութեան այլևայլ վայրկեաններում, սկզբից մինչև վերջ ռուս մարքսիստները ծրագրել են „զինուած ապստամբութիւն“ և քարոզել, յորդորել են պրոլետարիատին՝ կիրառել այն, ընդդիմադրել սուիններին սպառազէն ու զինավարժ „մասսաներ“։

Ահա մի զարմանալի յայտնութիւն։ Աւելի ևս զարմանալի է ապստամբութեան գաղափարի ս.-դ.-ական կիրառումը և այն եզակի „ճապարանքը“, որ նրանք գործ են դնում մասսաները զինելու և մանաւանդ նրանց զէնքի վարժեցնելու համար։

Զինման ու զինավարժութեան պահանջը ծագում է „յեղափոխական“ սոցիալ-դեմոկրատների մէջ.. վերջին վայրկեանին, երբ երկու թշնամի բանակները — բռնապետութիւնն ու ժողովուրդը — կանգնել էին դէմ առ դէմ, երբ փոթորիկը բռնել էր լայնատարած կայսրութիւնը, երբ, մի խօսքով, հասել էր վճռական ժամը, որից կախուած էր ամբողջ երկրի ճակատագիրը։

„Ամբողջ այդ շրջանը — ասում է ս.-դ.-ական Զեկուցագիրը 1905 թուականի մասին—բուռն, մոլեգին շարժման դրոշմ էր կրում... Սպանուածների ու վիրաւորների թիւը հասնում էր հազարների։ Միաժամանակ աճում է զէնքի պահանջը և զինավարժութեան մէջ ընտելանալու ցանկութիւնը, գէթ առաջապահիկ մարտիկների համար։ (*Le désir de se familiariser avec le maniement d'armes, au moins pour les militants d'avant-garde*)։

Վերջին ֆրազը — որ գուցէ ակամայ և սխալմամբ դուրս է թռել զեկուցագրող կուսակցութեան գրչի տակից—միանգամայն բնորոշ է այդ կուսակցութեան տակտիկի համար։

Ահա մի ուժ, միլիոնաւոր, „յեղափոխական“, պրոլետարական Սոցիալ-դեմոկրատիայի ուժը, որ յաւակնում է մեն-մենակ վարել հսկայական վերիվայրումի գործը, որ պատրաստւում է չափւելու մի ահարկու բռնապետութեան հետ, չափւելու զինուած ու հմտացրած ճակատամարտներում—և որ սակայն, նոյնիսկ ի դէմս իր առաջապահիկ մարտիկների դեռ չը գիտէ ճակատամարտելու ամենատարրական արուեստը, դեռ չը գիտէ զէնք գործածելու եղանակը...

„Սոց.-դեմոկրատիայի երրորդ կոնգրէսը—ասւած է նոյն Զեկուցագրի մի այլ տեղում—որոշում է, որ վայրկեանի (1905 թ.) առաջնագոյն պարտականութիւնն է՝ կազմակերպել պրոլետարիատը անմիջական կռուի համար, բռնակալ ռէժիմի դէմ, զինուած ապստամբութեամբ... Ուստի և կոնգրէսը յանձնարարում է կուսակցութեան բոլոր ճիւղերին... բացատրել պրոլետարիատին զինուած ու մասալուտ ապստամբութեան քաղաքական կարևորութիւնն ու գործնական արժէքը... Կոնգրէսը յանձնարարում է այդ նպատակով ձեռք առնել ամենակորովի միջոցներ՝ զինելու պրոլետարիատը, մշակելու զինուած ապստամբութեան նախագիծ, ըստեղծելով դրա համար „կուսակցական ռազմիկների յատուկ խմբեր“։

Կոնգրէսը որոշում է, յայտարարում է, յանձնարարում է..

Զափազա՜նց ուշ էր յանձնարարում նա... Զափազա՜նց տարաժամ էին զինւելու, զինավարժութեան ընտելանալու և մարտական խմբեր, կորիզներ պատրաստելու, կազմակերպելու այդ խելացի հրահանգները։ 30 տարի քնել էր մարքսիստական սոցիալ-դեմոկրատիան. 30 տարի շարունակ օրօրւել էր դիւրին, „տարերային“, „ճակատագրական“ յեղափոխութեան ալնուրջներով—և այժմ միայն, վերջին վայրկեանին, անցքերի գոռ, վճռական շրջանում՝ նա գալիս էր զէնքի վարժեցնելու իր „առաջապահիկ մարտիկներին“։

Դա՛ռն, ուշագրաւ, թէկուզ և ակամայ, խոստովանութիւն։

Ի՜նչ հոգն էր ռուսական մարքսիստների՝ զբաղւել այնպիսի անիծեալ խնդիրներով ինչպէս զէնքի փոխադրութիւն, զինում, զինավարժութիւն, մարտական կորիզների կազմակերպում ևն... Զէ՞ որ յեղափոխութիւնը ինքնին պիտի գար, „ճակատագրական անհրաժեշտութեամբ“, կապիտալիզմի ներքին խաղերով, հեգելեան տրիլոգիայով, հակասութիւնների բաղխումներով... Բաւական էր միայն քարոզել, անվերջ հոլովել Մարքսի ու Կաուցկու ֆօրմուլները, բաւական էր կրկնել շարունակ իրենց վարպետ-Պլեխանովի արձակած հռչակաւոր հրահանգը („Զարիա“ հանդէսի մէջ).

1. Կազմակերպւել.
2. Շարունակել քաղաքական ագիտացիան աշխատաւոր մասսայի մէջ.
3. Տալ այդ ագիտացիային աւելի լայն չափեր.
4. Տալ այդ ագիտացիային էլ աւելի լայն չափեր.
5. Նոյնը—աւելի մեծ չափով.
6. Նոյնը—էլ աւելի մեծ չափով.
7. Նոյնը—ամենամեծ չափով.
8. Իսկ յետո՞յ... բայց այդ մասին դեռ կը զրուցենք, դեռ ժամանակ կայ“...

Նոյն տեսարանը — մեզ մօտ, կովկասում։ „Յեղափոխական“ և ուղղափառ սոցիալ-դեմոկրատիան ամեն տեղ հաւատարիմ է ինքն իրեն։ Կոնտրաստը, հակադրութիւնը ցոլում է և այդտեղ, ֆրազէոլոգիայի և իրականութեան միջև։ Ֆրազէոլոգիան—ան-

հաշտ, կատաղի, որոտաշունչ, իսկ բուն ռազմական պարունակութիւնը—ողբալի։ Յեղափոխական—խօսքով, իսկ գործով — կրաւորական... Եւ դարձեալ ինքը, ս.-դ.-ական Rapport-ն է, որ գալիս է ակամայօրէն մի յայտնի չափով խոստովանելու այդ իրողութիւնը։ Մենք, ի հարկէ, պէտք չունինք այդ տպւած Զեկուցումին՝ ճանաչելու և գնահատելու համար կովկասեան, վրացական սոցիալ-դեմոկրատիային... Մեզան շա՞տ է թափւել այդ առթիւ մեր կովկասեան, դաշնակցական ազատ մամուլի էջերում։ Բայց արժէ, այնուամենայնիւ, առաջ բերել Զեկուցումի գէթ այս երկու տողերը.

„Գուրիայում ու Իմերեթիայում ժողովուրդը կազմակերպել էր նոր յեղափոխական կառավարութիւն, Սոցիալ-դեմոկրատիայի ղեկավարութեամբ։ Այդ վերջինը կացութեան տէր մնաց մինչև Ալիխանովի զօրքերի ժամանումը“...

Ցաւալի է, որ Զեկուցումը չի ասում, թէ ինչ եղաւ յեղափոխական սոցիալ-դեմոկրատիան Ալիխանովի գալուց յետոյ. ի՞նչ դիմադրութիւն ցոյց տւեց զանգւածների, դասակարգային գիտակցութեամբ մշակւած „մասսաների“ հրամանատար-կուսակցութիւնը, որ գիտէ ճառել շարունակ զինւած ճակատամարտների ու ապըստամբութիւնների մասին... Զէնքի ու դիմադրութեան հետքն անգամ չ'եղաւ, սոցիալ-դեմոկրատիան պարզապէս խաւարեց, շոգիացաւ... Նա բարգաւաճում է միայն „խաղաղ“ միջավայրում, ուր չը կայ զինւած հակառակորդ և ուր անարգել հնչում են բուն պրոլետարական յեղափոխութեան շանդալի „լոզունգները“։ Այդ, ի հարկէ, չէր արգելում կովկասեան քաջամարտիկ ուղղափառներին՝ խօսել մի տեսակ արգահատանքով ուրիշ, ոչ-մարքսիստ կուսակցութիւնների մասին, և հակայեղափոխական անունով մկրտել „Դաշնակցութիւնը“, որ մի քիչ աւելի ձեռնհասութեամբ էր ոչնչացնում Ալիխանովներին և որ գիտէր նաև զէնքով դիմադրել հակայեղափոխական ուրագաններին *)։

Տակտիկը նոյնն է—Նէվայի ափերից մինչև Բիօն ու Քուռ.—խոհեմ, զգուշաւոր համակերպութիւն՝ զինւած ոստիների դիմաց, կատարեալ անընդունակութիւն զինւած յարձակումների և դիմադրութեան համար...

Բայց.. Եթէ բռնապետութեան դէմ սոցիալ դեմոկրատիան անաջողակ եղաւ, գուցէ նա աւելի բախտաւոր էր հակայեղափոխական սև. հարիւրակեան խուժանների հանդէպ... Զէ՞, նա ամեն տեղ, ի սփիւռս ամբողջ կայսրութեան, ունէր իր մշակւած ու մարզւած, դասակարգային ոգով տոգորւած մասսաները, որոնք կ'աջողէին—եթէ կամենային ու կարենային—գէթ մասամբ յետ մղել „սև Ռուսաստանի“, հակայեղափոխական խաժամուժի գրոհները... Դիմենք դարձեալ ս.-դ.-ական Զեկուցումին։

*) Ռուս սոցիալ-դեմոկրատական Rapport-ի հետ միաժամանակ լոյս տեսաւ նոյն արտասահմանեան ս.-դ.-ական մամուլի տակից ուսերէն մի գրւածք „Բանւորական շարժումը և Սոցիալ-դեմոկրատիան Կովկասում“ խորագրով։ Ուշագրաւ խոստովանութիւններ և զւարճալի կուրեօզներ կան և այդտեղ։ Ի՞նչ ասել կուզէ, ըստ նախնաւանդ կուսակցական սովորութեան, ամենաչնչին դէպքերն անգամ փառաբանւում են, իբրև պատմական événement-ներ, մանրամասնօրէն ցուցադրւում են զանազան ժամանակ հրատարակւած ս.-դ.-ական բոլոր կոչերն ու թռուցիկները, ցուցադրւում են որպէս մի մի յաղթական ճակատամարտներ ուղղափառ սոցիալ-դեմոկրատիայի։ Խ՞ղճ „Դաշնակցութիւն“... Մէկն էլ ցուցադրէր նոյնքան մանրամասնօրէն քո իսկական ճակատամարտները, որոնք իրենց քանակով թերևս պակաս չը լինէին սոցիալ-դեմոկրատական թռուցիկներից... Բայց արի տես որ մեր ուղղափառ հայրենակիցները դեռ չեն հաւանում այդ կազմակերպութեանը և իրենց ռազմական բարձրութիւնից զլանում են շնորհելու նրան „յեղափոխականութեան“ վկայագիր... Անողոք է այդ տեսակէտից և պ. Արկօմէդ, վերոյիշեալ գրւածքի հեղինակը։ Թղթի հեռ. ր ս ս ը մի գերագոյն արգահատանք ունի... դէպի զէնքի ու մարտի հերոսը։

Ի՞նչ ասել կուզէ, այդ գրւածքի մէջ եւս կատաղի ամբաստանութիւնների առարկայ է „բուրժուական“, „կղերանացիոնալիստական“ „Դաշնակցութիւնը“, ռուս ու կովկասեան սոցիալ դեմոկրատիայի bête noire-ը։ Հեղինակը շարունակ ողբում ու անիծում է, որ „Դաշնակցութեան“ սիրական ազդեցութեան պատճառով, սոցիալ-դեմոկրատիան չը կարողացաւ հող գտնել անդրկովկասեան հայ պրոլետարիատի ու գիւղացիութեան մէջ։ Ցաւումով գրում է այն մասին, որ հայ աշխատաւորը սոցիալ-դեմոկրատ քարոզչից պահանջում էր նախ և առաջ դիրք բռնել դէպի թիւրքահայկական արիւնոտ խնդիրը, որով հայ մարքսիստը չէր հետաքրքրւում, իր իսկ պ. Արկօմէդի յայտարարութեամբ...

Հայ ու վրացի ս.-դ.-ները տեղիք ունին, ի հարկէ, ողբալու իրենց ձախորդութիւնները հայ աշխատաւոր դասակարգի մէջ, նոյնքան, որքան, մենք ինքներս տեղիք ունինք ուրախանալու այդ հանգամանքով։ Ի՞նչ կը լինէր, յիրաւի, եթէ կապկօրէն ընդօրինակւած ռուսական մարքսիզմը իր տարամերժ հաւատամքով ու տակտիկով հող բռնէր մեր հայկական միջավայրում, բերելով իր հետ կրաւորականութեան թոյնը հայ զանգւածներին ու երիտասարդութեանը։ Նա պիտի տափակացներ վերջիններին առանց այն էլ ոչ շատ ուժեղ ռազմական գիտակցութիւնը, ինչպէս որ տափակացրել էր Վրաստանում, և թաթարական ու այլ շղթայազերծ գուլումների դէմ պիտի պայքարէր — ինչպէս 1905—1906-ի պատմական օրերում—թռուցիկներով, կոչերով, թղթային ու ճառային ռմբակոծումներով...

Այդ յաղթական ասպետները շատ լաւ, ի հարկէ, գիտակ են իրենց ներքին „ռազմական“ պարունակութեանը, լաւ գիտեն և իրենց հակառակորդ կուսակցութեան ինչ լինելը։ Սակայն, պէտք է միամիտ լինել կարծելու համար, թէ նրանք երբևիցէ պիտի ձեռք բերեն ընդունակութիւն՝ շատ թէ քիչ օբ'եկտիվ ու շիտակ ձևով գնահատելու հասարակական և յեղափոխական արժէքները։ Ներքսիայի ոգեքով շարունակելու է — ինչպէս յիշատակւած շարադրութեան մէջ—հին, աւանդական, ծանծաղամիտ բէգմնեօրութիւնը, շարունակելու է ամբաստանութիւնների տարափը „Դաշնակցութեան“ դէմ։ Բայց այսօր աւելի քան երբևիցէ դիւրին է մեզ՝ պաղ ու անխռով դիտել ցասման ու վրէժի այդ պոռթկումները։ Իսկ ս.-դ.-ների մեր հասցէին ուղղած հին, ծանոթ մակդիրները՝ „բուրժուա-նացիոնալիստ“, „հակայեղափոխական“, բէակի ներ“ ևն՝ որ երբեմն ընկերների մէջ արհամարհանք էին յարուցանում, այսօր բնաւ չեն էլ ազդում... մի կազմակերպութեան վրայ, որ իր երկու մեծագոյն հատւածներով մտած է արդէն Ինտերնացիոնալի մէջ և որի ներկայացուցիչը նստած է նոյնիսկ Միջազգային Սոցիալիստական Բիւրոյում։ Ոչ ցասում, ոչ արհամարհանք — այլ միայն ծիծաղ...

Ս.-Դ. Երրորդ կոնգրէսը որոշում էր ի միջի այլոց.

„Կազմակերպել զինուած դիմադրութիւն սև-հարիւրակեան խմբերի և կառավարութեան ղեկավարութեամբ շարժուող բոլոր յետադիմական տարրերի դէմ“։

Սքանչելի՜, ոսկէ բէզոլիւսիոններ... Իրագործո՞ւմը...

Առաջին Դուման ցրելուց յետոյ, ինչպէս յայտնի է, պայթեցին պ ո գ ր օ մ ն ե ր ը։ „Կազմակերպուած մասսաների“ աչքերի առջև հրէաներն ու յեղափոխականները անխնայ ջարդւում էին, արիւնը հոսում էր վտակներով մեծ քաղաքների և հեռաւոր գաւառների մէջ... Սոցիալ-դեմոկրատիան, ի հարկէ, անգործ չէր։ Պէտք էր յարգել սեփական կոնգրէսի որոշումը։ Ի՞նչ արեց։ Զեկուցագիրն ասում է.

„Ֆրակցիան (Պետական Դումայի ս.-դ. հատուածը) ոչ մի առիթ չը խնայեց՝ իր կոչերը հրատարակելու։ Երբ կառավարութիւնը կազմակերպեց պոգրոմներ, ս.-դ.-ական ֆրակցիան, հակառակ կադէտների, առաջարկեց իր օրակարգը և պահանջեց, որ ամբողջ բարձր ադմինիստրացիան, վարչութիւնը դատի կոչւի և որ դատողը լինի ժողովուրդը“։

Բառե՜ր, բառե՜ր և բառե՜ր...

„Ֆ ր ա կ ց ի ա ն ո չ մ ի ջ ո ց չ ը խ ն ա յ ե ց ի ր կ ո չ ե ր ը հ ր ա տ ա ր ա կ ե լ ու“... Ի՞նչ կարող է լինել աւելի զաւեշտական, ընթերցող, քան այս ֆրազը, որ պերճախօս ազդարարն է մի կուսակցութեան յ ե ղ ա փ ո խ ա կ ա ն սնանկութեան։ Բայց արեան բաղանիքների հանդէպ „զաւեշտականը“ դառնում է արդէն... ողբերգական։

Այդպէս է „գործել“ սոցիալ-դեմոկրատիան ամենածանր, ամենաաղէտալի վայրկեաններում։ Այդպէս է եղել նա և մեր կովկասեան հօրիզոնների մէջ։ Այնտեղ ևս, հակայեղափոխական աւերիչ պոգրոմների հանդէպ, Թուրքական ու Ալիխանովեան բնաջնջող արշաւանքի դիմաց, սոցիալ-դեմոկրատիայի „ռազմիկները“ „չէն խնայել ոչ մի առիթ՝ իրենց կոչերն ու թռուցիկները հրատարակելու“... մանաւանդ, երբ պէտք է եղել „Դաշնակցութեան“ գործը անդամալուծել..

Հետևեալ երեսին Զեկուցագիրը ասում է. „Բէլոստոկի պոգրոմի միջոցին սոցիալ-դեմոկրատական ֆրակցիան առաջարկեց օրակարգ, յայտարարելով, որ „միակ միջոցը ապահովելու քաղաքացիների կեանքն ու գոյքը, ժողովրդի զինաւորումն է“։ Նա առաջարկում էր նոյնպէս հրաւիրել ժողովրդին՝ իր ձեռքն առնելու իր պաշտպանութիւնն ու ապահովութիւնը...

„Բայց այդ յեղափոխական (*sic!*) պատասխանը Բէլոստոկի պոգրոմների հանդէպ—շարունակում՝ է Զեկուցագիրը — հանդիպեց „կադէտների“ մեծամասնութեան կորովի դիմադրութեան, որը գերադասում էր թաղել հարցը անվերջ ճառերի մէջ“։

Ռուս ս.-դ.-ները իրենք, ի հարկէ, չէին „թաղում հարցը անվերջ ճառերի մէջ“, իրենք տալիս են բուն „յեղափոխական պատասխանը“ Բելոստոկի պոգրոմշչիկներին... Մեղաւորը իրենք չեն, որ այդ յեղափոխական պատասխանը գործով բնաւ չ՝արտայայտուեց, որ նա վերածուեց մի դատարկ, ողորմելի և յանցաւոր ճոռոմաբանութեան... Մեղաւորը այս անգամ բուրժուա „կադէտներն“ էին, որ արգելք եղան ռուս մարքսիստների ռազմական, ժողովրդապաշտպան գրոհին..

Վերջապէս, ահա ամենաողբերգական վայրկեանը... Առաջին Դումայի ցրումը բռնապետութեան սիններով գալիս է արդէն ազդարարելու Ռուսական Յեղափոխութեան ֆիասկոն։ Դուման իր կադետային մեծամասնութեամբ և իր նախագահ Մուրոմցեվի առաջնորդութեամբ փոխադրում է իր „նիստերը“ Ֆինլանդիայի Վիբօրգ քաղաքը և այնտեղից արձակում է Ռուսաստանի ժողովուրդներին իր պատմական կոչը։ Ի՞նչ է անում յեղափոխական սոցիալ-դեմոկրատիան, „կազմակերպուած մասսաների միակ գերագոյն և ռազմական հրամանատարը“... Եթէ դուք մոռացել էք, ընթերցող, սոցիալ-դեմոկրատիայի մեծ գործերը այդ յիշատակելի վայրկեանում,—ինքը ս.-դ.-ական Զեկուցագիրը սիրով կը յիշեցնէ ձեզ *)։

„... Դումայի մեծամասնութիւնը այստեղ ևս ցոյց տուեց իր չնչին ընդունակութիւնն ու կամքը՝ լրջօրէն պայքարելու... Նա իր ուղղամտութեան, լոյեալիզմի մտահոգութիւնն ունէր և Պետերբուրգից հեռանալով, հրաչակում էր լոկ „կրաւորական դիմադրութիւն“...

Սոցիալ-դեմոկրատիան ինքն, ի հարկէ, դէմ էր կրաւորական դիմադրութեան և ահա թէ ինչ ձեռնարկեց իր կողմից.

„Այսպէս անուանուած „Վիբօրգեան կոչը“ հարկաւ չէր կարող գոհացում տալ սոցիալ-դեմոկրատական ֆրակցիային։ Վերջինս, ստորագրելով հանդերձ այդ կոչը, շտապեց լրացնել այն և հրատարակեց „աշխատաւորական խմբի“ հետ երկու կոչ. մէկը ուղղուած զօրքին ու նաւատորմին, միւսը՝ „բոլոր գիւղացիներին“։

Կոչե՜ր, կոչե՜ր... Ընդհանուր գործադուլի կոչ ևս եղաւ... Բայց „կազմակերպուած մասսաները“ այլևս տրամադիր չէին հետևելու նոյնիսկ գործադուլի հրաւէրներին, ո՞ւր մնաց՝ դիմելու ապստամբութեան ու զինուած ճակատամարտների..

***

Ռազմական խղճալի ուժ—բայց տիտանեան յաւակնութիւններ։ Բուն, մարտական կազմակերպութեան կարիկատուր, ծաղրանկար...

Այդպէս է ներկայանում Սոցիալ-դեմոկրատիան ամենաօբ՝եկտիվ դիտողի աչքին։ Եւ այդպիսի ուժով էր նա ամեն օր ընդհանուր ապստամբութեան ծրագիրներ

*) Զեկուցագիր, եր. 92:

կազմում, այդպիսի ուժով էր նա ձգտում հաստատել Համառուսական Ռամկավարական Հանրապետութիւնը *), հրատարակել պրոլետարիատի դիքտատորութիւն **) ևլն։

Այդպիսի խղճուկ ռազմական պաշարով նա ոչ միայն խիզախեց մենամենակ, առանց ուրիշ հատուածների աջակցութեան, տապալել բռնապետութիւնը, այլ և շարժման կէս-ճանապարհին անհաշտ կռիւ յայտարարեց բուրժուազական-սահմանադրական տարրերին, որոնց ի վերջոյ մղեց դէպի ռէակցիայի միջնաբերդը։ Զեկուցագիրը չի թագցնում այդ, ընդհակառակը, մի առանձին հպարտութեամբ ծանուցանում է Եւրոպայի սոցիալիստներին։ Ոչ մի ջանք չի խնայուած այդ փաստագրի հեղինակների կողմից, որպէսզի ռուս սոցիալ-դեմոկրատիայի „հեգեմոնեան“ ներկայանայ սոցիալիստական և մանաւանդ „ուղղափառ“ Ինտերնացիոնալին իր բովանդակ շուքով, իր ռազմական, յեղափոխական հմայքով... Սոցիալ-դեմոկրատիան կատարելապէս իր կոչման բարձրութեան վրայ էր, նա մեն-մենակ կարողացաւ պատասխան տալ ժամանակի բոլոր ցաւոտ պահանջներին (նոյնիսկ զինուած ապստամբութեան)... Նա մեն-մենակ՝ Դումայում, մեն-մենակ՝ և Դումայից դուրս, ռազմի դաշտում, „սպառազէն ապստամբութիւնը“ շեփորելիս... Միայն թէ... այդ „ընդհանուր ապստամբութիւններն“ ու „պատերազմի դաշտերը“ այն տարբերութիւնն ունէին սովորական, կլասսիկ ապստամբութիւններից, որ այնտեղ, Ռուսաստանում, վառօդի բուրմունքը տարածւում էր միմիայն թշնամի բանակից, մինչդեռ սեփական, պրոլետարական, սոցիալական բանակի մէջ „առաջապահիկ մարտիկներն“ իսկ՝ դեռ նոր միայն պիտի փորձէին „ընտելանալու զինավարժութեան“ և հրացանի տեղ ունէին միայն իրենց ձեռքերում—Գործադուլի յարդաձողը։

Ռուսական յեղափոխութիւնը գտաւ իր զարգացման ծայրակէտը և իր հարազատ արտայայտութիւնը — Գործադուլի մէջ... Այդ հանգամանքի զօրութեամբ և՝ նա արմատապէս տարբերուեց բոլոր միւս, արևմտեան և արևելեան յեղափոխութիւններից։ Բայց գործադուլը էապէս տնտեսական պայքարի զէնք է, ոչ շատ յուսալի քաղաքական պայքարների համար։ Յամենայն դէպս՝ ոչ տևողական։ Ընդհանուր գործադուլի երկրորդ փորձը — առաջին Դումայի ցրուելուց յետոյ—տեսանք, վիժեց ցաւագինօրէն... Մասսաները յոգնել էին, իսկ մանր ու միջին բուրժուազիան, որ այնքան ուժեղ նեցուկ էր եղել առաջին մեծ ու յաղթական գործադուլին, այժմ արդէն քաշւում էին յեղափոխական հրապարակից... Այն ինչ՝ գիւղացիների վիթխարի զանգուածը յամառում էր իր պահպանողական անշարժութեան մէջ։ Սոցիալ-դեմոկրատական Զեկուցագիրը մի քանի անգամ դառնութեամբ ու ցասումով յիշատակում է գիւղացիների այդ յուսահատեցուցիչ համակերպումը, որի շնորհիւ և վիժել է յեղափոխութիւնը... Բայց նոյն Զեկուցագիրը ղլանում է յիշատակելու, թէ որքա՞ն ճիգ ու եռանդ է թափել „Ռուսաստանի ամենահզօր յեղափոխական կուսակցութիւնը“ իր երեսնամեայ գոյութեան ընթացքում՝ փոխելու համար գիւղացիական 60-միլիոնաւոր զանգուածի այդ զարհուրելի, պահպանողական մտայնութիւնը... Չե՞ն արհամարհել սոց.-դեմոկրատ ուղղափառները գիւղացիական պրոպագանդի ամեն ծրագիր, չե՞ն ասել նրանք շարունակ, թէ պրոլետարիատը միակ, ամենազօր յեղափոխական ուժն է, միակ կրողը և՛ սոցիալիզմի և՛ յեղափոխութեան, իսկ բոլոր մնացածը՝ „բուրժուա“, „մանր-բուրժուա“, անհետաքրքիր և անարժան ուշադրութեան ու զոհողութեան։ Չե՞ն յետ մղել իրենց դոգմային, անհամբերող աղանդականութեամբ բոլոր ոչ-պրոլետար դասակարգերն ու կուսակցութիւնները...

Աղանդականութիւն—մանաւանդ։ Դա է այն տխուր, պառակտիչ ոգին, որ սկզբից ի վեր ծւատել է Ռուսաստանի ազատագրական շարժումը, բաժանելով, հեռացնելով իրարից միևնոյն նպատակին ձգտող պատկառելի յեղափոխական հատուածներ։ Սկզբից ի վեր նա ուղղափառ սոց.-դեմոկրատիայի անխուսափելի ուղեկիցն էր, որ և անցաւ—աւելի խտացած—մեր կովկասեան միջավայրը։ Աղանդականութիւնը (*sectarisme*) բղխում է մասամբ աշխարհայեացքի նոյն դոգմայինէութիւնից, որի մի քանի բարեմասնութիւնները յիշատակել ենք այս էջերում։ Արևմտեան մարքսիզմի — Գեդերի ու Կաուցկիների — դոգմայնութիւնը նսեմանում է ռուսականի առջև։ Վերջինս հասնում է այլանդակ ծայրայեղութիւնների։ Վարդապետութեան այլևայլ դրութիւնները ընդունւում են բառացի կերպով և մարքսիզմը յայտնւում է, ռուս դոգմատիկների ըմբռնումով, ոչ թէ իբրև մի փուլ, հանգրուան (*étape*) սոցիալիստական աշխարհայեացքի զարգացման ճանապարհի վրայ, այլ իբրև գոց, միանգամ ընդմիշտ ձևակերպուած, վերջաւորուած մի սիստեմ, իբրև հասարակական գիտութեան վերջին ու ամենահարազատ ճշմարտութիւն...

Բացասական վերաբերումը այդ պատճառով շեշտւում է ոչ միայն դէպի այն բոլոր կուսակցութիւնները, որոնք չեն դաւանում մարքսիզմ և հետևապէս չեն կանգնած „գիտական ու յեղափոխական ուղիղ ճանապարհի վրայ“, այլև դէպի այն բոլոր դասակարգերը, որոնք դուրս են պրոլետարիատից։ Աղանդաւորների

---

*) Զեկուցագիր, եր. 30:

**) „ եր. 27. „Երրորդ կօնգրէսը որոշեց ընդունել պրոլեսարական եւ սոց.-դեմօկրասական տակտիկ, որ պիտի ձգտէր պրոլեսարիատի դիկտասորութեան“...

ըմբռնումով ամեն ինչ կենտրոնանում էր պրոլետարիատ-սֆինքսի մէջ. նա է ազատագրական շարժման սկիզբն ու վերջը, նա է ամբողջ երկրի, տիեզերքի „աղը“... Մոռացւում է, որ ուրիշ դասակարգեր ներանից շատ առաջ ծածանեցրել են ըմբոստացման ու կռուի դրօշը, մոռացւում է, որ մաւորականութիւնը, ուսանողութիւնը, ամբողջ այսպէս անուանուած „արտադասակարգային ինտելիգենցիան“, կազմուած ժողովրդի, ազնուականութեան, կղերի ու վաճառականութեան բոլոր ազնիւ, գաղափարական զա ակներից, կռուել, արիւնոտուել է տասնեակ տարիներ շարունակ, փտել է բանտերում ու աքսորավայրերում, ճօճել է բռնակալական կախաղանների վրայ... այն ժամանակ, երբ պրոլետարիատ դասակարգը դեռ համարեա գոյութիւն անգամ չի ունեցել։

Աղանդականութիւն — նոյնիսկ սեփական շարքերում։ Բաւական չէր Բունդի դէմ մղած հալածանքը։ „Միացեալ, անբաժան համառուսական Սոցիալ-դեմոկրատիան“ ուրիշ ցնցումներ ևս ունեցաւ իր ներսում։ Ուղղափառները ուզում էին անպատճառ ստեղծել միապաղաղ, „իդէալական“ կուսակցութիւնը, որի բոլոր անդամներն ունենային ոչ միայն մէկ ընդհանուր նպատակ ու տակտիկ, այլ և մէկ տեսական, փիլիսոփայական դաւանանք... Մի բան, որ չը կայ ոչ մի արևմտեան կուսակցութեան մէջ, չը կայ անգամ գերմանական մարքսիստ սոցիալ-դեմոկրատիայի շրջանակներում, ուր Կարլ Կաուցկի, իր մարքս-սպինոզայական մատերիալիզմով՝ գտնւում է միևնոյն բանակի մէջ բողոքական պաստոր Գեօրգի հետ, որի թեկնածութիւնը դրել էր սոցիալ-դեմոկրատիան Ռայխստագի ընտրութիւնների միջոցին, որը սակայն, ոչ միայն հակառակորդ է մատերիալիզմի, այլև... կրօնի սպասաւոր է։ Եւ երբ, մի քանի տարի սրանից առաջ, այդ պաստորը մտաւ գերմանական սոցիալ-դեմոկրատիայի գիրկը, կուսակցութեան տեսական պաշտօնաթերթը, „Die Neue Zeit“, ծանուցեց խմբագրութեան կողմից, թէ կուսակցական անդամների համար բնաւ պարտադիր չէ, օրինակ, „բնական մատերիալիզմի“ թէօրիան... Դեռ մի կողմը թողնենք Բերնշտայններին ու Ֆոլմարներին, որոնք տեսական աշխարհայեացքով անհաշտելի են ուղղափառների հետ, մի կողմը թողնենք և հանգուցեալ Իգնաս Ա ու է ր ի ն, մի հզօր ու ազնիւ դէմք, որ երկար տարիներ, իբրև մէկը հռչակաւոր „տրիումվիրատի“, Բեբէլի ու Զինգերի հետ միասին վարում էր կուսակցութիւնը (*Parteivorstand*-ի մէջ), և որը սակայն, կատաղի հակառակորդ էր մարքսեան „դիալեքտիկական մատերիալիզմի“ և դեռ պարիզեան համաշխարհային սոցիալիստական կօնգրէսի մէջ, 1900-ին, իր թունոտ ու մոլեգնոտ ոճով խարանում էր Ժիւլ Գեդի և այլոց մոլեռանդ աղանդականութիւնը՝ Ժօրէսի ու այլ „հերձուածողների“ վերաբերմամբ։

Անհնարին է դարբնել կուսակցութիւնը միևնոյն փիլիսոփայական աշխարհհայեացքի տէր մարդկանցից, կատարեալ անհեթեթութիւն է՝ պահանջել, որ պրոլետարիատի քաղաքական շարժումները վարող բոլոր անհատները միևնոյն հայեացքն ունենան բնութեան ու պատմափիլիսոփայութեան բարդ ու այլազան կնճիռների մասին։ Մի Մաձինի, որ միստիկ էր, պակաս ուժով ու յաջողութեամբ չը տարաւ յեղափոխական վարիչի իր պաշտօնը։ Մի Ժօրէս, որ իդէալիստ է իր փիլիսոփայական աշխարհայեցութեամբ, պակաս տաղանդով չի վարում սոցիալիստական առաջնորդի իր դերը։

Բայց այդ բոլոր իրողութիւնները գոյութիւն չունին Ֆանատիկոսացած ռուս „ուղղափառների“ համար։ Կուսակցութիւնը պէտք է հօմօժեն լինի, միապաղաղ... Եւ մանաւանդ Մարքսն ու Էնգելսը պէտք է մնան անխախտ, անսասան իրենց գիտական-փիլիսոփայական պատւանդանի վրայ, իրենց բոլոր յայտարարութիւնների, դարձուածների, բառերի և տառերի մէջ։

Սակայն ինքը, ռուս մարքսիստական աղանդը չը մնաց „անսասան“։ Պառակտումը ծայր տուեց նրա մէջ և հա տարիներից ի վեր մղւում է „մեծամասնականների“ ու „փոքրամասնականների“ ամօթալի մենամարտը *), որ մերթ ընդ մերթ փոխադրւում է նաև միջազգային սոցիալիստական արէօպագը, զայրոյթ ու ցասում յարուցանելով եւրոպացի սոցիալիստների մէջ **)։ Եւրոպայում ևս „ուղղափառութիւնը“ առհասարակ սիրահար է կռիւների ու բանադրանքների, իսկ ռուսական մարքսիզմը — եւրոպականի ծաղրանկարն է, կարիկատուրը։

Այսօր ևս, Յեղափոխութեան ցաւագին պարտութիւնից յետոյ, նոյն թափով շարունակւում է „բոլշեվիկների“ ու „մենշեվիկների“ կռիւը... Արտասահմանեան գրականութիւնը դարձեալ հեղեղւում է պամֆլէտներով, Պլէխանովների, Լենինների, Բոգդանովների պոլեմիկական մարգանքներով, ուր կիրքը սահման չի ճանաչւում։ Եւ մի աննման եռանդով ու ախորժակով մղւում է կռիւը... նոյն դժբախտ դօգմի շուրջը։ Նոյն

*) Այս երկու թևերից իւրաքանչիւրը նոյնպէս ենթարկւում է „դիֆֆերենցիացիայի“, զանազանաւորման։ Մեծամասնականների մէջ առաջացել է երկու նոր հոսանք. մէկը տարւում է նոր կրօն հիմնելու միստիկական տենչանքով և դրա մէջ նա նեցուկ է փնտրում պրոլետարական աշխարհայեացքի համար։ Միւսը „անարխո-սոցիալական“ հոսանքն է, որ յարում է յեղափոխական-սինդիկալիզմին։ Երկու հոսանքներն էլ արդէն ենթարկւում են բանադրանքի և նրանց ներկայացուցիչները դուրս են վտարւում կուսակցութիւնից։ Միւս կողմից, փոքրամասնականները ևս բնաւ չեն կազմում մի հաշտ բանակ. երևան են եկել նրանց շարքերում այսպէս կոչուած „լիկվիդատորները“, որոնք պահանջում են „վերջացնել հաշիւները“ արդի կազմակերպութեան հետ և անձնատուր լինել գործունէութեան այն բոլոր ձևերին, որ հնարաւոր են օրինական ճանապարհով։

**) Ռուսաստանում այսօր 5—6 կուսակցութիւններ կան, բոլորն էլ մ ա ր ք ս ի ս տ ա կ ա ն յորջորջումով ու դաւանանքով, բայց բոլորն էլ իրարու մէջ անհամաձայն, բաժանբաժան և հակամարտ։

անվերջ փիլիսոփայական տրակտատները, ուր այժմ պատմա-փիլիսոփայական հարցերի շարքում երևան են գալիս նաև զուտ իմացաբանական կնճիռներ... Մարքսի, Էնգելսի հետ—Մախ, Ավենարիուս, Կանտ և այլն։ Ծրնէվի *Handwerk*-ը նորէն ստանում է իր վաղեմի կենդանութիւնը... Նիզակները վերստին ճօճում են։ Մի օր Պլեխանով, միւս օր Բոգդանով... Վէճե՛ր... վէճե՛ր, քա՛փ ու բրտինք՝ „բացարձակ ճշմարտութեան“, *Ding an sich*-ի և այլ խրթին, խորհրդաւոր կնճիռների մասին, որոնց արծարծումը հեռաւոր առնչութիւն անգամ չունի Ռուսաստանի դժբախտ պրոլետարիատի և նոյնքան դժբախտ ազատագրական շարժման հետ...

Քաղաքական խնդիրները մոռացուելու չափ յետ են մղւում մետաֆիզիկական, բնազանցական սպեկուլացիաների առջև։

„Դօգմը“, ըստ երևոյթին, նորէն վտանգած է Ռուսաստանում—և ուղղափառները անասելի եռանդով հրապարակ են հանում իրենց բովանդակ գիտութիւնը, վիճաբանական հմտութիւնների իրենց պաշարը... մոռանալով, որ եթէ Յեղափոխութիւնը չի յաղթանակում Ռուսաստանի մէջ, պատճառն այն չէ՝ որ Կարլ Մարքսը բաւականաչափ չի ժողովրդականացած այդ տարաբախտ երկրում, այլ այն՝ որ պակասում է Մաձձինիի ոգին... վառօդն է պակասում հարիւր միլիոնաւոր ռուս ընդհանրութեան հոգեբանութեան մէջ, այն մեծագործ ու կենսարար վառօդը՝ որ ռուսական կուսակցութիւնները, տարաբախտաբար, շատ քիչ են արծարծել յիսուն տարուայ իրենց գոյութեան ընթացքում...

Քաղաքական յեղափոխութեան մտահոգութիւնները նորէն, այո, յետ են մղւում։ Բայց ե՞րբ են նրանք եղել առաջնակարգ, սթիպողական և հրատապ... Աշխարհը չի ծնել մի այլ ժողովուրդ, մի ուրիշ մտաւորականութիւն, որի մէջ այդքան ուժեղ շեշտուած լինի ապաքաղաքական տրամադրութիւնը (*apolitisme*)... Եւ երբեմն կարծես հաւանականութեան բնոյթ է ստանում որոշ յոռետես մտածողների մռայլ ու անհեթեթ գուշակութիւնը՝ թէ այդ ժողովրդին գուցէ վիճակուած չէ նուաճելու իր քաղաքական ազատութիւնը...

Կարլ Կաուցկի, մի ժամանակ, յափշտակուած 1905-ի դէպքերով, գրում էր, թէ ռուսական յեղափոխութիւնն անցաւ, բարձրացաւ 19-րդ դարու եւրոպական յեղափոխութիւնների մակարդակից և կանգնեց այն խորհրդաւոր „սահմանագլխի վրայ“, որ բաժանում է սոցիալիստական յեղափոխութիւնը բուրժուականից։

Ուղղափառ մարքսիզմի քրմապետը կարող է, ի հարկէ, մի նոր „ֆորմուլ“ ձևակերպել, հաւատարիմ իր հինաւուրց սովորութեան,—այդ չի արգելում, դժբախտաբար, արձանագրել, որ ռուսական յեղափոխութիւնը գահավիժելով իր „սոցիալիստական“ բարձունքից, ուր նա հասել էր եապոնական պատերազմի յարուցած տագնապի շնորհիւ — իջաւ և պիտի իջնէր ճակատագրօրէն, դէպի պարտութեան ու ստրկութեան նոր ստորգունդներ, և այսօր անհունապէս աւելի ցած է իր մակարդակով, քան արևելեան, մահմեդական յեղափոխութիւնները...

***

Ամփոփենք մեր ասածները յօդուածների այս շարանում։ Այդպէս, ուրեմն, Ռուսաստանի ամենաքաղմանդամ, ամենածաւալուն կուսակցութիւնը իր դօգմային անօրինակ մտայնութեամբ, իր տարամերժ „սոցիալական“ տակտիկով, սկզբից ի վեր բռնեց մի ուղղութիւն, որ պիտի տանէր անհրաժեշտօրէն դէպի յեղափոխական ուժերի կրաւորացում և ջլատում։

Պառակտիչ ոգին ճակատագրական պատուհասի պէս հետամտեց միշտ Ռուսաստանի յեղափոխութեանը. շարժումը դատապարտուեց մնալ ցրիւ, սպօրադիկ, կըտրատուած, բաժան-բաժան... և դրան պակաս չը նպաստեցին թէօրիական մրցումները, կռիւները։

Խնկարկուեցին, միստիկական պաշտամունքի առարկայ եղան այնպիսի ուժեր, որոնք—թէև իրենց տնտեսական կացութեամբ ու հոգեբանութեամբ առաւելապէս մատչելի են ըմբոստացման կրակին—դեռ կարօտ էին ուժեղ, վարպետ ձեռքերի մարզման ու դաստիարակման՝ որպէսզի դառնային յեղափոխական ցանկալի աղդակ։

„Տարերայնութեան“ ու կրաւորականութեան դօգմը հոչակուեց այնտեղ, ուր անհրաժեշտ էին կամքի ու նախաձեռնութեան վիթխարի թափեր՝ մի հերքուլեսեան ճիւաղի տապալելու համար։

Նեղ, տարամերժ աղանդի յանկերգը երգուեց մի տխուր խանդավառութեամբ, այնտեղ, ուր պէտք էր օգտագործել ընդհանուր դատի համար յեղափոխական կորովի ամենաչնչին մասնիկներն անգամ, ուր պէտք էր ուղղել ըմբոստացումի բոլոր առուները՝ ի մի ընդհանուր, համառուսական հեղեղ...

Ընդօրինակման և մերկ սխեմացման (*schématisme*) տենդը հասաւ ծայրայեղութեան և բառացի ձևով կիրառուեց գործնականի մէջ Կարլ Մարքսի նշանաւոր յայտարարութիւնը, թէ՝ „բանուորական ազատագրութիւնը պէտք է կատարուի բանուորների ձեռքով“։

Բուրժուական ռամկավարութեան և ժողովրդի ու մտաւորականութեան ուրիշ խաւեր յետ մղեցին աղանդաւորների շանթերի տակ, սոցիալական մոմենտը շարժման պրոցէսում յաղթահարեց, գրեթէ դուրս մղեց քաղաքականը, կռիւն ուղղուեց թափով, կատաղութեամբ գլխաւորապէս տնտեսական հողի վրայ, կապիտալիզմի ու բուրժուազիայի դէմ—և վերջինը, երկիւղ կրելով պրոլետարիատի ու սոցիա-

լիզմի վերահաս դիմադարձութիւնից՝ շտապեց դէպի ռէակցիայի ու պահպանողականութեան շարքերը...

„Պրոլետարական դիկտատորութեան“ ուրուականն իսկ հրապարակ նետուեց—այնքան վաղաժամ—անակնկալի տպաւորութիւնը ձգելով նոյնիսկ միջազգային բուրժուազիայի վրայ, որը տենդային աճապարանքով բաց արեց իր միլիարդների տոպրակները ռուս ազատասպան կամարիլլայի առջև...

Յեղափոխական ուժերը անհունօրէն չափազանցուեցին, գաղափարները օժտուեցին մի տեսակ դիւթական զօրութեամբ. խօսքի ու իրականութեան անհամապատասխանութիւնը հասաւ իր գագաթնակէտին։ Խօսքով—մոլեգին յեղափոխականներ, գործով—չափաւոր դեմոկրատներ և „էկոնոմիկներ“... Վարդապետութիւնն իսկ մանրացաւ, սիրապղծուեց, չափազանց ի չարը գործ դրուելուց, մարքսիզմն ու սոցիալիզմը տեղ-տեղ իջան մինչև կարիկատուրի աստիճան։ Պրոլետարիատի համակրելի անունն էլ վարկաբեկուեց՝ մի սանձարձակ ու խելագար ապօթէօզի մէջ...

Եւ վճռական մարտի ժամին այդ կոնտրաստը, հակադրութիւնը ֆրազէօլոգիայի ու իրական ուժերի միջև ցոլաց իր անհուն ողբերգականութեամբ, պայթեց ցաւագին „կրախ“-ով ու արհաւիրքով...

Եւ Եւրոպան հանեց պատշաճ եզրակացութիւնը ռուսական Sturm und Drang-ի փորձութիւններից,—տխուր, ցաւեցնող արտասուելի եզրակացութիւն. „Une Révolution impuissante contre un gouvernement incapable“... „Մի անկարող յեղափոխութիւն՝ մի անընդունակ կառավարութեան դէմ“։

Դօգմատիզմի ու ֆրազամոլութեան պատուհասը շարունակեց ճարակել և ծանր պարտութիւնից յետոյ։ Նոյն վարդագոյն „պրոլետարական լաւատեսութիւնը“—զարթ, անխռով ու յաւակնոտ—շարունակեց աղմկել մթնոլորտը։ Դարձեալ լսեցին ռուս մարքսիստների խորհրդաւոր գուշակութիւնները կապիտալիզմի սրարշաւ պրոցէսի, բռնակալութեան մօտալուտ ու „տարերային“ խորտակման մասին։ Դարձեալ սկսեց „մարքսիստական, դիալեքտիկ-մատերիալիստական դիագնոզների“ անվերջանալի շարքը — թէ հրապարակական ամբիոններից և թէ ռուս ու օտար գրական հանդէսներում։ Մէկը հաւատացնում է, թէ ռուս բուրժուազիան „ներքին, իմմանենտ օրէնքների“ ուժով պէտք է շուտով „յեղափոխականանայ“ ու կանգնի պրոլետարիատի հետ բռնապետութեան դէմ“ *)։ Մի ուրիշը, ընդհակառակը, ծանուցանում է — նոյն „դիալեքտիկ-մատերիալիստական“ դիագնոզի համաձայն—թէ ռուս բուրժուազիան չի կարող յեղափոխականանալ և թէ ռուսական կապիտալիզմի ուռած սահմանադրական կարգերը ճակատագրօրէն „պէտք է յաղթանակեն հակառակ իսկ կապիտալիստների կամքի“ *)...

Եւ հազար ու մի ձևով կրկնւում է ս.-դ.-ական օրգաններում վաղուց ի վեր շաբլօն դարձած յայտնի փրազը, թէ „ոստիկան-ճորտատիրական պետութիւնը ինքն արդէն փորում է իր գերեզմանը, արտադրելով գերեզմանափորներին“... Այդ գերեզմանափորը մերթ պրոլետարիատն է, մերթ բուրժուազիան։ Այսօր առանձնապէս ծանրանում են բուրժուազիայի վրայ։ Ռուս մարքսիստների մի մասը—թերևս արդէն հիասթափուած „պրոլետարիատ-տիտանի“ նկատմամբ—պինդ կպել է բուրժուազիային, համարում է նրան ռուսական գալոց վերիվայրումների միակ առաջատար, շարժիչ ուժը։ Նա ընդնշմարում է այդ առաջապահի շարքերում՝ անգամ հոկտեմբերեան „ձախացող“ բուրժուազիային, իր արքայապաշտ գուչկովներով։ Մի ուրիշ մասը դնում է իր յոյսը ռամկավարական բուրժուազիայի—այն է՝ գիւղացիութեան ու մանր-բուրժուականութեան վրայ։ Այդ վերջինները, ասում է նա, „օբ'եկտիվ կերպով դրուած են կուի յեղափոխական պայմանների մէջ“։

Այսպէս թէ այնպէս, ռուս օրթոդոքս մարքսիստները հաւատացած են իրենց „դիագնոզի“ անսխալականութեան մէջ, նրանք գիտեն, որ հասարակական դասակարգերի զարգացող յարաբերութիւնները „պիտի ընդհարին անխուսափելիօրէն և ավտոմատօրէն“, ճիշտ այնպէս, ինչպէս ֆիզիկական տարերքները... և յեղափոխութիւնը պիտի ժայթքի, ինչպէս ժայթքում են դիցուք հրաբուղխները։ „Դիալեքտիկական մատերիալիզմը“, հեգելեան հռչակաւոր „հակադրութիւններն ու բաղխումները“, թեզիներն ու անտիթեզները ճակատագրականօրէն կը կատարեն իրենց պաշտօնը։ Ռուսական սոցիալ-դեմոկրատիան կարող է դարձեալ հանգիստ սպասել, նա կարող է դարձեալ անխռով նայել ապագայի վրայ և յամառել իր գձուձ աղանդականութեան մէջ, հոլովելով աջ ու ձախ Պլեխանովի անմոռանալի հրահանգը. „Դեռ կըսպասենք, դեռ ժամանակ կայ“...

Այո՛, տարաբախտաբար, դեռ ժամանակ կայ՝ որոճալու դօգմային կրաւորականութեան ծոյլ ու իներտ ֆորմուլները, աղմկելու հրապարակը մերկ ու ճչան ֆրազներով, մարքսիզմի ու մախիզմի վերացական անալիզներով և վարդագոյն գուշակութիւններով „հակադրութիւնների, տարերային, ավտոմատիկ բաղխումների ու ժայթքումների“ ու գալոց յեղափոխական վերիվայրումների մասին...

*) Տես. Die Neue Zeit, 1908, No 27, Th. Dahn, Die Bedingungen eines erneuten Aufschwungs der russischen Revolution.

*) Neue Zeit, 1908 No 42, A. Maletzki, Der bürgerliche Liberalismus in der russischen Revolution.

Կէս դարից աւելի է, ինչ գոյութիւն ունի ռուսական կեանքի այդ հիմնական „հակադրութիւնը“—Բուրժուա-ճորտատիրական անտագոնիզմը. 20 տարուց աւելի է, ինչ ռուս մարքսիստները կըրկնում են անխոնջ ու անդադրում այդ ֆօրմուլը — և այնուամենայնիւ, „տարերային ու ավտոմատիկ“ ժայթքումը մինչև օրս էլ չ'եկաւ...

Ժամանակը, սակայն, համբերում է... Համբերում է և հարիւր միլիոնաւոր ռուս ժողովուրդը իր չնաշխալ-հիկ, ծովածաւալ համբերողութեամբ...

Գուցէ դեռ ևս կարելի է յուսալ, որ պատմութեան ծանր, կսկծալի դասերը միանգամայն անպտուղ չեն անցնի, որ ռուսական սօցիալ-դեմօկրատիան—որի մէջ չեն պակասում զգաստ ու իրապաշտ մտածողներ, որ տուել է իր պատկառելի զոհերը բռնապետական Մողոքին, որի բազմաթիւ պրոպագանդիստները այսօր ևս խմբերով նստած են բանտերում, աքսորներում—խրատուած երէկուայ արհաւրալի „կրախից“, կը ձգտէ, այնուամենայնիւ, սրբագրել իր տակտիկը, դուրս վտարել լաւատես ուտոպիականութիւնը և մտցնել փոքր ինչ աւելի ռէալիզմ իր առօրեայ գործելակերպի մէջ, փոքր ինչ աւելի արդարութիւն ու շիտակութիւն իր յարաբերութեան մէջ՝ գէթ ձախակողմեան կուսակցութիւնների հետ։ Որովհետև—չը պէտք է մոռանալ—եթէ անցեալ աննախընթաց տագնապը, պատերազմի ու բիւրոկրատական սնանկութեան ահեղ իրարանցումը չ'օգնեց Յեղափոխութեանը, եթէ ցարիզմը ճողոպրեց անգամ այդ անլուր օրհասից, ապա աւելի ևս դժուար պիտի լինի գործ տեսնել նրա հետ այսուհետև... քանի որ նա անդուլ ու տենդային եռանդով վերակազմուրում է, շտկում կորացած իրանը, նորոգում է իր Բաստիլը, կատարելագործում է իր մահառիթ, բնաջնջող գործիքները—զօրք ու զինաւորութիւն, գաղտնի ու յայտնի ոստիկանութիւն, լրտեսութիւն — և վստահ եւրոպական բանկիրներ՝ աջակցութեան վրայ, հպարտ զօրքի ու սև-հարիւրակեան վոհմակների անձնուրաց հաւատարմութեամբ՝ յաւակնում է շարունակել իր տիրապետութիւնը սարկութեան ու տառապանքի ովկիանի մէջ։

Գուցէ, այո՛, դեռ կարելի է յուսալ, որ ռուս մարքսիստ ստւարաթիւ կուսակցութիւնը փոխանակ անձնատուր լինելու իրերի տարերայնութեան, փոխանակ տարուելու „էկսթազիզմով“ *) ու կրաւորական դիմադրութեամբ, կը ջանայ այսուհետև փոքր ինչ աւելի մշակուել բուն քաղաքական, հակաբռնապետական կուսի դպրոցում, փոքր ինչ աւելի ռազմական, յարձակողական թափ հաղորդել իր լէգէօններին,—որ գլխաւորն է—ի տեղի յետ մղելու ուրիշ, աշխատաւորական ու դեմօկրատ խաւերն ու կուսակցութիւնները, ի տեղի գիտակցաբար կազմալուծելու Յեղափոխութիւնը մանր, անարժան հակառակորդութեամբ — կը ձգտէ ուրիշ ուժերի հետ թև թևի տուած՝ միացնելու ընդհանուր, համադրական մի աւազանում այն բոլոր դրժգոհութիւնները, բողոքները, խլրտումները, որ յարուցանում է մի անորակելի ռէժիմ։

Թւում է թէ այդտեղ է յաղթանակի գրաւականը...

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՆՈՐ ԹԻՒՐՔԻԱՆ

III

Միդատ փաշայի սահմանադրութեան համաձայն Թիւրքիան մէկդի պիտի թողնէր բռնապետական-միապետական վարչաձևը, որ մեծագոյն պատճառն է եղած իր անկումի և պիտի որդեգրէր եւրոպական քաղաքական կազմը։ Առանց այս հիմնական, արմատական փոփոխութեան, երկիրը չպիտի կրնար ազատուել սպառնացող քայքայումէն և թերևս պիտի կորցնէր իր անկախութիւնն ու ամբողջութիւնը։ Մէկ մարդու փոխարէն՝ պետութեան օրէնսդրական իշխանութիւնը կը յանձնուէր ժողովրդական ներկայացուցչական մարմնի մը, որ խորհրդարան, պարլամենտ կը կոչուէր և առանց որու համաձայնութեան ոչ մէկ օրէնք չէր կրնար գործադրուել երկրին մէջ։ Ժողովրդի կամքն է այսուհետև թագաւորելու և անոր ընտրեալներու իմաստութիւնն է կառավարելու ընդարձակածաւալ պետութիւնը։ Միապետը ունի, անշուշտ, բազմաթիւ արտօնութիւններ և կայսերական առանձնաշնորհումներ—սակայն ատոնք անցեալին անհրաժեշտ ու անխուսափելի մնացորդներն են, վերապրումները, որոնք չպիտի կրնան ազաւաղել սահմանադրական սկզբունքը։

Կայսրութեան բոլոր քաղաքացիները ընդհանուր անունով օտտոման կը կոչուին և կը վայելեն ճշգրտօրէն նոյն իրաւունքները, առանց կրօնի և ազգի խտրութեան։ Բոլոր քաղաքացիները ազատ են։ Անհատական ազատութիւնը բացարձակապէս անձեռնմխելի է։ Բնակարանը անձեռնմխելի է։ Մամուլը, պարբերական հրատարակութիւնները ազատ են։ Գումարումները, միութիւնները, ընկերութիւնները, կրթութիւնը ազատ կը հռչակուին։ Դպրոցները կը հանուին կրօնքի ազդեցութեան ու հսկողութեան շրջանակէն և կը դրուին պետութեան հսկողութեան ներքև։ Գործադիր իշխանութեան վարիչները՝ նախարարները պատասխանատու են իրենց գործերու համար։

Գաւառները, նահանգները պիտի ունենան իրենց տեղական խորհուրդները. պիտի հսկեն կեդրոնական կառավարութեան պաշտօնեաներու վրայ և պիտի սրբագրեն անոնց սխալները։ Ապակեդրոնացման սկզբունքը պիտի կիրարկուի կայսրութեան մէջ։

Միդհատ փաշայի այս պատմական գործը տարաբախտաբար չունեցաւ այն յարատևութիւնը, որուն արժանի էր և որ անհրաժեշտ էր Թիւրքիոյ մեծու-

---

*) Յափշտակութիւն ցնեսական, հակակապիտալիստական բնոյթ ունեցող պայմաններով։

թեան համար։ Աբդիւլ-Համիդ նեղ մնալով համաձայնած էր սահմանադրութեան հրատարակութեան և միջոցներ կը փնտրէր, ինչպէս և ըլլայ, թաղել զայն։

Սահմանադրութեան հիմնադիրը իր անկեղծութեան և համարձակութեան համար աքսորուեցաւ, սակայն անկարող եղան անմիջապէս պատռել անոր յիշատակագիրը։ Եւրոպական պետութիւններու պնդումները, արտաքին բարդութիւնները, Միդհատ փաշայի ժողովրդականութիւնն ու ազդեցութիւնը, ներքին խռովութիւններու հաւանականութիւնը ստիպեցին, որ պարլամենտը հանդիսաւորապէս բացուի և սուլթանը սահմանադրական ճառ արտասանէ։

„Պարոններ պատգամաւորներ—այսպէս կը դիմէր սուլթան Համիդ, 1877 թուականի մարտի 4-ին, ժողովրդական ներկայացուցիչներուն—մեծ հաճոյքով է, որ ես այսօր կը բանամ Թիւրքիոյ պարլամենտը։ Դուք գիտէք, որ պետութիւններու զարգացման և ուժին մեծութիւնը, ինչպէս և ժողովուրդներու բարգաւաճումը հիմնուած է արդարութեան սկզբունքին վրայ։ Մեր նախորդները սկսած են արդէն պետութեան վերակազմութեան գործը և մեր երկիրը դրած են եւրոպական քաղաքակրթութեան ճանապարհին։ Իմ անուանի հայրը, սուլթան Աբդիւլ-Մէջիդ հրատարակած է թանզիմաթը, որ կ'երաշխաւորէր մեր բոլոր հպատակներու կեանքը, գոյքը և պատիւը...

„Քաղաքակիրթ պետութիւններու յառաջադիմութիւնը, անոնց վայելած ապահովութիւնն ու բարեկեցութիւնը արդիւնք են այն մասնակցութեան, որ ամենքը ունին օրէնքներ մշակելու և հասարակական գործերը կառավարելու մէջ։ Ես անհրաժեշտ կարծեցի հետևել միևնոյն ճանապարհին և հոն որոնել մեր փրկութիւնը — օրէնսդրական սիստեմի հիմք դարձնել երկրի ընդհանուր ձայնատուութիւնը։ Այդ նպատակով է, որ հրատարակեցի Սահմանադրութիւնը։

„Օտտոման անունը, որ մինչև այսօր կը մարմնացնէր ուժի և զօրութեան գաղափարը, ապագային պիտի խորհրդանշէ—ես համոզուած եմ—իմ բոլոր հպատակներու նոյնանման շահերու պաշտպանութիւնը։

„Ես բացարձակ անհրաժեշտութիւն համարեցի ապահովել ազատութիւնն ու հաւասարութիւնը իմ բոլոր հպատակներու, վերջ դնել կամայականութեան ռէժիմին, ենթարկել օրէնքներու գործադրութիւնն ու գործերու վարումը երկրի կամքին և հսկողութեան. մէկ խօսքով՝ կառավարել սահմանադրական սկզբունքներու համաձայն“...

Այս բոլորը գեղեցիկ խօսքեր էին միայն։ Իրականութիւնը ամենևին չէր համապատասխաներ գահակալ ճառին։ Պալատը, թաքուն թէ բացայայտ, ընդդիմութիւն ցոյց կուտար պետական վերակազմութեան։ Աբդիւլ Համիդ կըսկսէր կեղծիքի և դաւադրութեան քաղաքականութիւնը, որով այնքան համբաւաւոր դարձաւ իր երեսնամեայ գահակալութեան միջոցին։ Երիտասարդ Թիւրքերը ասպարիզէն հեռացան, կառավարութիւնը խլեցաւ անոնց ձեռքէն, Միդհատ փաշան—ինչպէս ըսինք—արտաքսուեցաւ Եւրոպա, խորհրդարանը խրատիլակ հանդիսացաւ, ժողովրդական դժբախտ ներկայացուցչութիւնը—հաւաքուած պաշտօնեաներու կամքով և անոնց աջակցութեամբ—կամարիլայի ձեռքին անպատիւ գործիք դարձաւ։ Եւրոպական պետութիւնները հասկացան թիւրք կառավարութեան գաղտնի նպատակն ու մտադրութիւնը, հաւատնին կորսնցուցին և բնաւ արգելք չեղան Ռուսաստանի պատերազմական պատրաստութիւններուն։ Ինքը Համիդի կառավարութիւնը կողմնակից էր պատերազմին։ Անոր կարծիքով ատիկա լաւագոյն միջոցն էր լուծելու ներքին դժգոհութիւնները, թաղելու ժողովրդական ներկայացուցչական մարմինը, ոչնչացնելու սահմանադրութիւնը և ի մի հաւաքելու բովանդակ օսմանեան երկիրը՝ ընդդէմ արտաքին վտանգներու ու փորձութիւններու։

Պատերազմը վերջացաւ։ Թիւրքիան ամօթալի պարտութիւն կրեց։ Գրեթէ ամբողջ եւրոպական մասը անջատուեցաւ օսմանեան պետութենէն։ Վերանորոգութեանց փորձերը խեղդուեցան։ ազատութեան ձայնը մարեցաւ. խորհրդարանը լուծուեցաւ. անոր ըմբոստ և հայրենասէր անդամները դատապարտուեցան ու հեռաւոր վայրեր աքսորուեցան։ Յետաշարժումը տիրեց հրապարակին։ Սկսուեցաւ օսմանեան պատմութեան ամենադժբախտ, ամենասև շրջանը։ Աբդիւլ Համիդի հրամանով պատուեցաւ Թիւրքիոյ սահմանադրութիւնը և գլխատուեցաւ անոր հայրը։

Այսպէս։ Երկրի ազատական տարրերը չը կրցան յաջողիլ իրենց կուի մէջ։ Պետական վերակազմութեան պահանջը ընդհանուր չէր։ Հասարակութեան լայն շրջանները մասնակից չեղան մեծ գործին։ Վերին շերտերու տարտամ տրամադրութիւններն ու ցանկութիւնները վայրկենի մը մէջ օդը ցնդեցան, երբ զարնուեցան խուչընդոտներու։ Մտաւորականութիւնը հասունացած չէր քաղաքական-հասարակական ուղղութեամբ։ Զինուորականութիւնը անգիտակից ու խաւար—անգամ անոր վերին մասը—անընդունակ եղաւ որևէ դրական դեր կատարել։

Ժողովուրդը, աշխատաւոր հասարակութիւնը, վաճառական-առևտրական դասերը չունէին կազմակերպուած իդէալներ և պահանջներ։ Երիտասարդ Թիւրքիան տակաւին շատ էր երիտասարդ։ Այս բոլոր անպատշաճ գործոններու բովէ կրօնական նախապաշարումներն ու սնոտիապաշտութիւնները իրենց բաժինն ունեցան։ Սուլթան Աբդիւլ Համիդի անձնական-անհատական կամքն ու ազդեցութիւնը, նաև միւս հակառակորդներու ջանքերը նուազ դեր չխաղացին սահմանադրութեան տապալման մէջ։ Պատճառները աւելի լրիւ կը դառնան, երբ ի նկատ առնենք նաև արտաքին ոտնձգութիւններու չարաբախտ խաղը և յատկապէս Ռուսաստանի բացարձակ թշնամութիւնը։

Տակաւին սահմանադրութենէն շատ յառաջ՝ ռուս կառավարութիւնը բարեկամական հայեացքով չէր դիտեր Միդհատ փաշայի վերանորոգչական գործունէութիւնը Բուլգարիոյ մէջ թէ այլուր, որ նպատակ ունէր յանուն օսմանեան վերածնունդի և ամբողջութեան՝ երկիրը դնել քաղաքակրթութեան ճամբուն վրայ։ Այդ ջանքերը ռուս կառավարութիւնը չափազանց կը գրգռէին։

Այդպիսով անոր ծրագիրները—Թիւրքիան թուլացնել, բաժան-բաժան ընել, անջատել քրիստոնեայ երկիրները—չէին կրնար իրականանալ։ Եւ ռուս կառավարութիւնը ամեն ճիգ ի գործ դրաւ խանգարելու համար Միդհատի հայրենասիրական գործունէութիւնը և անոր ամենամեծ յաղցումը—սահմանադրութիւն։

Անգլիան սկիզբը պաշտպան հանդիսացաւ օսմանեան սահմանադրութեան և կամեցաւ չէզոքացնել Ռուսաստանի ներգործութիւնը։ Սակայն տեսնելով Թիւրքիոյ ներքին պայմանները, ազատականներու թուլութիւնը և կառավարութեան խարդախութիւնները՝ չյամառեցաւ իր քաղաքականութեան մէջ և ըստ երևոյթին համաձայնեցաւ Թիւրքիոյ անդամահատման գաղափարին։

Այսպէս. արտաքին և ներքին նպաստաւոր պայմանները վերացան ի նպաստ արտաքին և ներքին անպաստ պայմաններու, որոնք զուգորդելով, յարակցելով միմեանց հետ առաջ բերին օսմանեան սահմանադրութեան տապալումը և վիժումը։

Բայց, այնուամենայնիւ, ամեն բան կանգ չ'առաւ այդտեղ։ Վերսկսեցաւ ազատագրական և յեղափոխական գաղտնի ու հանդարտ գործունէութիւնը։

Համառօտակի ներկայացնենք այն այլազան գործօնները, որոնք նպաստեցին օսմանեան վերածնունդին։

Երիտասարդ Թիւրքերու կուսակցութիւնը, որ վերանորոգութեանց անցեալ փորձերու միջոցին իբրև ուրոյն կազմակերպութիւն հանդէս չէր եկած՝ եօթանասունական թւականներէն սկսեալ քաղաքական ասպարէզ իջաւ։ Այդ կազմակերպութիւնը տակաւին թոյլ էր, համեստ, փոքրիկ, սակայն այնուամենայնիւ կազմակերպութիւն էր։ Ժամանակի ընթացքին մէջ անիկա հանդարտ և կամացուկ քայլերով կը մեծանար և կը տարածուէր։ Անոր անդամները՝ ցրուած օսմանեան պետութեան զանազան վայրեր՝ ժողովրդական խաւերուն մէջ կը ցուցնէին տիրող ռէժիմին անպիտանութիւնն ու անիրաւութիւնը։ Ցաճախ կառավարական հալածանքները դրական հետևանքներ առաջ կը բերէին ազատագրական շարժման համար։ Աքսորավայրերը կը դառնային քաղաքական քարոզութեան և գործունէութեան կէտեր։ Երկրին մտաւորական և զինուորական դասերուն մէջ էր գլխաւորապէս, որ կը զարգանար երիտասարդ Թիւրքերու կուսակցութիւնը։ Դասակարգային շերտաւորում և հասարակական զտում տակաւին իրագործուած չէր օսմանեան պետութեան մէջ։ Նպատակին առաջնութիւնը, Հայրենիքին անկախ և ամբողջական գոյութիւնը, պետութեան ընդհանուր բարգաւաճումը սահմանադրական ձևերու մէջ յաջողած էին իրարմէ տարբեր հասարակական դասեր համախմբել մէկ դրօշակի տակ, մէկ կազմակերպութեան շուրջ։ Համիդեան ռէժիմին տապալումը ամեն մէկուն որոշ գոհունակութիւն կը պատճառէր և ամենը մէկը իւրատեսակ օգտակարութիւն, անհրաժեշտութիւն ու շահ կը տեսնար անոր ոչնչացումին մէջ։ Տնտեսական նկատումներով տոգորուածներն ու տիրապետութեան ձգտող խառնուածքները, իդէալական մղումներով գործողներն ու Հայրենիքի բարգաւաճման նախանձախնդիրները, հասարական ընդներն ու անհատական տրամադրութիւնները՝ բոլորն ալ անխտիր ոգևորուելու հիմքեր ունէին։ Մտաւորականութիւնը կը ներշնչէր, քաղաքական և պետական իդէալներ կը հաղորդէր, Զինուորականութիւնը կը պատրաստուէր իրագործելու այդ իդէալները։ Եւ տարուէ տարի, կամաց-կամաց ազատականներու բանակը կըսաւարանար։ Եւրոպական քաղաքակրթութիւնը, որքան և դանդաղ, այնուամենայնիւ կը փոխանցուէր Թիւրք միջավայրին։ Տնտեսական, աշխարհագրական, քաղաքական և գիտական կապերը արևմուտքի հետ այսպէս թէ այնպէս կ'ազդեն Թիւրքիոյ ազգաբնակութեան վրայ և ազատութեան պահանջը փոքր առ փոքր զգալի կը դառնայ։ Բռնապետութիւնը որքան և ուժեղ ըլլայ՝ անկարող է պատնէշ կանգնել բնական այս անխուսափելի երևոյթին առջև, որ հրամայական է և որ հասարակական-պատմական օրէնք դատուելու բնոյթն ունի։

Երկրին տնտեսական քայքայումը, հարկերու ծանրութիւնը, միջոցներու կատարեալ բացակայութիւնը, ժողովրդական լայն մասսաներու աղքատացումը, զօրքերու մերկութիւնն ու թշուառութիւնը, գիւղացիներու մշտական սովերը ունեցան իրենց անդիմադրելի ներգործութիւնը և ինքը Թիւրք ժողովուրդը սկսաւ շարժիլ։ Դարերու համրը, կրօնական-հասարական նախապաշարումներու վաղեմի զոհը, ազատութիւններու ու քաղաքակրթութեան դէմ աքացող այդ նախապատմական անգիտակցութիւնը սկսաւ երերալ։ Ռէժիմի փոփոխութեան պահանջը հարկադրական դարձաւ։ Այլ ևս դժգոհութիւնը մարդկանց դէմ չէր, այլ իրաւակարգի, պետական քաղաքական ձևի։

Հարևան երկիրներու զարթնումը ևս, Ռուսաստանի ու Պարսկաստանի ազատագրական շարժումները որոշ հարուած հասցրին Թիւրքական բռնապետութեան։ Հին, անիրաւ գահերու դէմ ծառացած հասարական զայրոյթն ու կատաղութիւնը փոխանցուեցան Թիւրքիոյ ժողովուրդներուն։ Ազատութեան գաղափարը շրջան գործեց սահմանէ սահման և խաւարամած ու ստրկական ըմբռնումները խռովեց։ Պատմութիւնը անգամ մը ևս ապացուցուց, որ ընտրեալ ժողովուրդներ չկան տիեզերքին մէջ և որ քաղաքակրթութեան նուաճումները „առանձնաշնորհեալ" ազգերու և համախմբումներու սեփականութիւնը չէ միայն։ Բնաշրջումը, էւոլիւսիոնը աւելի զօրաւոր գործօն է, քան մահմեդական ու Թիւրք տարրին համբաւուած „ճակատագրական յետամնացութիւնը"։

Օսմանեան երկրին քաղաքական վերածնունդին մէջ նուազ դեր չկատարեցին նաև միւս ժողովուրդները։

Հայաստանը հեռաւոր բարձրութիւններու վրայ, յեղափոխական անձնուէր գործունէութեամբ ու զմայլելի մարտիրոսութեամբ, ցոյց կուտար Թուրք ու քիւրդ տարերուն, որ Համիդեան իրաւականգէն կը տուժեն օսմանեան երկրին բոլոր ժողովուրդները և որ արդարութեան ու ազատութեան օրը պիտի գայ միայն անոնց ամենուն համերաշխութեամբ ու գործակցութեամբ։

Մակեդոնիան ազատասիրական իր բուռն պայքարներով ու ապստամբութիւններով կը փորէր կամաց-կամաց Համիդականութեան հիմքը և բարբարոս բացարձակապետութեան վախճանը կ'արագացնէր։

Արաբիան իր յարատև խլրտումներով հանդէս կը բերէր թիւրք կեդրոնական կառավարութեան ապիկար և անիրաւ քաղաքականութիւնը, կը մատնանշէր տիրող ռէժիմին բոլոր փտութիւններն ու ախտերը և ակներև կը դարձնէր նոր իրաւակարգի մը անհրաժեշտութիւնը։

Ժամանակի ընթացքին մէջ այս բոլոր գործօնները զուգորդուելով միմեանց հետ ստուարացուցին Երիտասարդ Թիւրքիոյ բանակը և շարժումները սկսան ընդհանուր դառնալ։ Սալոնիկ, Կոստանդնուպոլիս, Սամսոն, Քաստէմունի, Էրզրում, Պիթլիս, Տիարպէքիր, Վան և միւս վայրերը նշանակելի դժգոհութիւններ հանդէս բերին ու հակակառավարական, հակահամիդեան գործողութիւններ կազմակերպեցին։ Թացարձակ միապետութեան դէմ էին և սահմանադրական վարչաձև կը պահանջէին։ Երկրին այս ընդհանուր ցանկութիւնները արտայայտուեցան ընդդիմադիր ու յեղափոխական կուսակցութիւններու համերաշխ կօնգրէսով մը, որ տեղի ունեցաւ Փարիզի մէջ 1907 թուականի դեկտեմբերին, որ սրբագործեց յեղափոխական-տէրրորական կռիւը, որ հրահանգեց քաղաքական-տնտեսական գործադուլը և որ իբրև կազմակերպուած մարմիններու միահամուռ ու համերաշխ ուժ՝ որոշ դեր ունեցաւ օսմանեան վերածնութեան գործին մէջ։

Ներքին այս կարևոր շարժումներու, յեղափոխական-ազատական տրամադրութիւններու յառաջխաղացման հետ՝ արտաքին պայմանները ևս արագացուցին համիդեան ռէժիմին անկումը։ Եւրոպական պետութիւններու պահանջները աւելի վճռական և խիստ հանգամանք ընդունեցին. յուզմունքը մեծցաւ մակեդոնական խնդրին պատճառով. արտաքին միջամտութեան հաւանականութիւնը հետզհետէ աւելի սարսափելի դարձաւ։ Պետութեան անդամահատման վտանգը մէկ վայրկեան տնկուեցաւ Թիւրք հայրենասէր տարրին առջև։ Ազատական և յառաջադիմական շարժումը մէկէն հսկայական թափ առաւ. ժողովուրդը ցնցուեցաւ, մտաւորականութիւնը բորբոքուեցաւ, բանակը շարժման մէջ մտաւ, յեղափոխութիւնը պայթեցաւ... Հին ռէժիմին օրհասական փորձերը, միապետութեան ճիգերը, համիդեան ջղաձգումները օգուտ չունեցան։

Հետևանքը՝ Հին Թիւրքիոյ անկումը և Նոր-Թիւրքիոյ յաղթանակը։

Օսմանեան պետութիւնը պատմութեան գիրկը նետեց անփառունակ ու մահահոտ անցեալ մը, քաղաքական տարկութեան սև ու երկարատև շրջան մը և ոտք կոխեց սահմանադրական իրաւակարգի մէջ...

IV

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՇՐՋԱՆ.—ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՐԱԾՆՈՒՆԴ.—ՊԱՐԼԱՄԵՆՏԱՐԻԶՄ.—

Եթէ համեմատելու ըլլանք հին և նոր Թիւրքիան քաղաքական տեսակէտով՝ կը տեսնանք, որ տարբերութիւնը ահագին է։ Օսմանեան պատմութեան մէջ այդ իրողութիւնը դարագլուխ կը կազմէ և մէկ նոր հասարակութեան հիմքերը կ'երաշխաւորէ։ Տասնիններորդ դարու ամբողջ ընթացքին, թերևս ոչ մէկ բռնակալութիւն այնչափ յանդուգն, ապերասան, աւերիչ ու անմարդկային չէ եղած, որքան թուրքականը։ Նախապատմական բարբարոս անցեալը վերածնուած կերևար այդ պետութեան մէջ և ներոններու անփառունակ գործերն ու դիւային ոճիրները ամենօրեայ երևոյթ կը կազմէին հոն։ Ամենուրեք կը տաւառնէր սուլթանի բացարձակ ու անդիմադրելի հրամանը։ Անոր խօսքը օրէնք էր։ Անոր կամքը՝ գերագոյն ու աստուածային։ Իր հպատակներու տէրն էր ան և բոլոր օսմանցիներու միակ պետը։ Մարդիկ չէին կրնար, չպիտի յանդգնէին տրանջալ անոր իշխանութեան դէմ։ Այդ իշխանութիւնը երկինքներէն կուգար նախախնամութեան աթոռէն կը սրբազնաւորուէր։ Անոր ծագումը „աստուածային" էր։

Այս աշխարհիս վրայ անիկա ոչ ոքի պարտական չէր հաշիւ տալ իր արարքներու համար։ Անպատասխանատու էր և անքննելի։ Ամպերու մէջ թաղուած — հինաւուրց ու հեքիաթիական—գերագոյն էակը միայն կրնար հաշիւ պահանջել իրմէ։ Անիկա պատասխանատու էր երկնքի գահոյքին առջև...

Մէկ մարդու տիրապետութիւնը հասած էր իր ծայրայեղ գագաթնակէտին և բացարձակ միապետութեան։ բռնապետութեան սկզբունքը կը թագաւորէր ամենուրեք,

Այսպէս էր հին Թիւրքիան...

Նոր Թիւրքիան, տարբեր է։ Հոս ջախջախուած է բացարձակ միապետութեան դարաւոր սկզբունքը և սկիզբն է առած սահմանադրական վարչաձևը։

Քաղաքական այս չափազանց կարևոր փոփոխութեան մէջ Թիւրքիան հետևած է այն ուղիին, որով անցած են եւրոպական ազգերը տասնիններորդ դարու ամբողջ տարածութեան վրայ—միապետական վարչակարգէն՝ դէպի սահմանադրական վարչակարգ։

Հետաքրքրական է գիտնալ՝ թէ այդ ազգերը ո՞րչափով են զարգացուցած, կատարելագործած սահմանադրական սկզբունքներն ու ձևերը, թէ Թիւրքիան ի՞նչ է ձեռք բերած արդէն և ի՞նչ ունի սառանալիք տակաւին այդ ճանապարհի վրայ...

Նոր ժամանակներու քաղաքական իմաստութիւնը, նոր ազգերու քաղաքական հանճարը չի կրնար հաշտուիլ բացարձակ միապետութեան սկզբունքին հետ։ Քաղաքական, վարչական այս ձևը պատմութեան սեփականութիւնն է դարձած արդէն և մեզ համար այլևս տխուր ժամանակաւրէպ մը կը ներկայանայ։

Անցեալին մէջ—ընկերաբանական և պատմական ուսումնասիրութեանց հիման վրայ — քաղաքական այդ ձևը ունեցած է թերևս իր օգուտները և հանդիսացած է իր ժամանակին իբրև յառաջադիմական հաստատութիւն։ Նախնական ցաքուցրիւ, խառնիխուռն, քաոսական հասարակութենէն յետոյ, միապետական հասարակութիւնը մէկ քայլ դէպի առաջ էր։ Անկարգութեան ու անկանոնութեան, անիշխանութեան ու համայնատարած անիրաւութեան զանգուածի մէջ նախնական միապետը կրցաւ փոքր ինչ կարգ, իրաւունք մտցուներ։ Աւելի ուժեղ, քան ընդհանրութիւնը, աւելի դիմացկուն, աւելի կարող՝ հասարակական և իրաւական յարաբերութեանց աւելի կանոնաւոր ձև տուաւ։

Հասարակական-հաւաքական ապահովութիւնը և անհատական բարեկեցութիւնը այդ ռէժիմի ներքոյ աւելի

էր երաշխաւորուած՝ համեմատելով նախնական բիրտ ու բարբարոս կենցաղի հետ։

Ժամանակի ընթացքի մէջ, սակայն, այդ հիմնարկութիւնը դարձաւ հասարակական չարիք։ Այլևս հզօրութիւն, կարողութեան, խելացիութեան յատկութիւնները չէին միապետի իշխանութեան հիմունքը։ Հասարակութիւնը, ընդհանրութիւնը բնաւ ստոր չէր միապետէն իր ֆիզիքական, մտաւոր ու բարոյական առաքինութիւններով։ Ընդհակառակը։ Միակ ժառանգութեան սկզբունքը բաւական էր, որ ապուշի, անբարոյականի, թուլամորթի, ցաւագարի մէկը դառնար հասարակութեան պետը, երկրի վարիչը։

Բացարձակ միապետութիւնը սնանկ յայտարարուեցաւ։ Ժողովրդի մասնակցութիւնը պետական-քաղաքական-հասարակական գործերուն կարևոր ու անխուսափելի դարձաւ։

Այս կարևոր ու արմատական փոփոխութիւնը քաղաքական ձևի մէջ, անկասկած, կարճ ժամանակի գործ չէր։ Եւ ոչ ալ ամեն բան իրականացաւ խաղաղութեամբ ու մեղմութեամբ։ Հասարակական, ինչպէս և բնական փոփոխութիւններուն կցած ճակատագրային ընդհարումները հոս ալ տեղի ունեցան։ Եւ դարեր շարունակ մարդկութիւնը ականատես եղաւ երկու խոշոր ուժերու — միապետութեան և ժողովրդական իշխանութեան — կատաղի ու աւրիւնոտ ըմբշամարտին։ Համաշխարհային պատմութեան էջերը լեցուն են այդ հակամարտութեան, այդ եղերական բաղխումի նկարագրութեամբ։ Կեանքի անսասան տնօրինութիւնն է այդ և պատմութեան գերագոյն իմաստը...

—

Հին աշխարհը և միջին դարը անծանօթ չեն սահմանադրական վարչաձևի զանազան արտայայտութիւններուն։ Աթէնքը, Հռոմը, Վենետիկը, Ֆլորանսը և ուրիշ քաղաքներ իրագործած են սահմանադրութեան մէկ քանի սկզբունքները, հասած են ռամկավարական որոշ բարձրութեան, տապալած են միապետութիւնը անգամ և հաստատած են հանրապետական ռէժիմ։ Այսօրուայ ռամկավար և սահմանադրական պետութիւնները շատ բան են պարտական Հին և Միջին դարերու քաղաքական յղացումին և իմաստութեան։ Անոնք հեռաւոր և խաւար ժամանակներու մէջ կրցած են իրագործել նոր մարդկութեան իդէալներէն շատերը։ Սակայն ատով հանդերձ՝ անոնց սահմանադրականութիւնը եղած է անկատար և ժողովրդական իշխանութիւնը չափազանց թերի։

Հասարակութեան փոքր մասն է տիրապետած քաղաքականապէս և անոր մասնակցութիւնն է միայն տեղի ունեցած պետական օրէնսդրութեան գործերու մէջ։

Կանայք, ստրուկներու մեծաքանակ դասը, օտարները միշտ զրկուած են եղած քաղաքական-պետական իրաւունքներէ։ Հին և Միջին դարերու քաղաքական կեանքը իր ամենառամկավարական արտայայտութիւններու միջոցին անգամ հանդէս է բերած այս աղաղակող, այս հիմնական անհաւասարութիւնը։ Քաղաքական-իրաւական հաւասարութիւնը այդ դարերու ռամկավարութեանց հիմունքը չէ եղած։

Պարլամէնտարիզմը էապէս նոր ժամանակներու ծնունդ է։ Անիկա նոր Եւրոպայի և նոր ազգերու քաղաքական ստեղծագործութիւնն է։

Այս ասպարիզին վրայ առաջնութեան պատիւը անգլիական ժողովրդին կը պատկանէ։ Ան էր, որ միջնադարեան խաւարը տակաւին չփարատած, 1215 թուականին հրատարակեց „Ազատութիւններու մեծ հրովարտակը“ և բարձրաձայն անհատի ազատութիւնը նիրհական հռչակեց։ Պատմական այդ գործողութեամբ անգլիական քաղաքական բեմին վրայ միապետին քով երևցին նաև իշխանները, բարոնները—ազնուականութիւնը։

Քաղաքական իշխանութիւնը բաժնուեցաւ միապետութեան և աւատականութեան միջև։ Իրաւունքը և ուժը մէկ ատենն իջան պետական սանդուխքի վերին ծայրէն դէպի հասարակութեան միւս խաւերը։ Միապետութեան նախնական սկզբունքը, բացարձակ կամքը խախտուեցաւ և ներկայացուցչական ռէժիմին սաղմը հրապարակ իջաւ յանձին պարլամենտի։ Այնուհետև անգլիական պատմութեան կիսէն աւելին գրաւեց այդ պայքարը — թագաւորի և պարլամէնտի ընդհարումը։

Ազնուականութիւնը՝ դաշնակցած խոշոր դրամատիրութեան ու խոշոր արդիւնաբերողներու հետ՝ կրցաւ յաջողութեամբ ճակատել միապետական հինաւուրց իշխանութեան դէմ, տիրացաւ պարլամէնտին և ատոր միջոցով հաստատեց իր կառավարութիւնը։ „Le roi regne et ne gouverne pas“—„Թագաւորը կը թագաւորէ և չէ կառավարեր“—այս սկզբունքը դարձաւ անգլիական նորագոյն պատմութեան իմաստը։

Միապետութեան և ժողովրդական գերիշխանութեան դարաւոր կռիւի մէջ ֆրանսական յեղափոխութիւնը նոր արտայայտութիւններ մտցուց։ Այդ տիեզերական իրողութիւնը կրցաւ, մէկ քանի տարի շարունակ, յաջաճուն բարձրութեան վրայ պահել ժողովրդական եռանդը, աւիւնը, մարտական տրամադրութիւնը ընդդէմ բիրտ ու անմարդկային միապետութեան։

Անգլիայէն և Հիւսիսային Ամերիկայէն փոխառած գաղափարները՝ ֆրանսական յեղափոխութեան յիշատակելի օրերուն զարգացան, կատարելագործուեցան, ընդհանրացան և դարձան մէկ ամբողջական ուսմունք, իդէալ՝ նոր ժամանակներու քաղաքական և հասարակական վերակազմութեան համար։ Մէկ քանի դարերու, մէկ քանի սերունդներու, մէկ քանի ժողովուրդներու նախապատրաստած գործը այդ յեղափոխութեան միջոցով արտայայտուեցաւ և ֆրանսական վատասերուած միապետութիւնը իր հանդէպ տեսաւ ժողովրդական ուժի լայնածաւալ զարթնումը։ Համաշխարհային պատմութեան արիւնոտ ողբերգութիւնն էր, որ կը ծաւալուէր և երկու դարաւոր թշնամիներու ճակատագրական բաղխումը։ Երբէք այդ ընդհարումը այնքան սարսափելի չէ եղած և երբէք ժողովրդական ուժը այդքան վճռական շարժումներ չէ ունեցած։

Բացարձակ միապետութիւնը վերջնականապէս թաղելու նպատակով, հին Ֆրանսան նոր, ազատ Ֆրանսիայէն միանգամ ընդմիշտ բաժանելու համար՝ յեղափոխութեան հեղինակները մեքենայի տակ դրին թագաւորին գլուխը։ Տեղի ունեցաւ պատմութեան մէջ

չտեսնուած մահավճիռ։ Ժողովրդական ներկայացուցչական մարմինը, երկրին գերագոյն ատեանը հրահանգեց, ազդարարեց, որ ոճրագործ միապետը յանուն արդարութեան և յանուն հասարակական խղճի պէտք է մահուան պատժի ենթարկուի։

Քաղաքական-պետական սանդուխքի վրայէն ընկաւ ոչ միայն թագաւորը, միապետութիւնը, այլև ազնուականութիւնը, այլև կղերականութիւնը։

Յեղափոխութեան վերջին տարիները, Ռոբէսպիէրի կառավարութեան միջոցին, կօնվանսիօնի (convention) ժամանակ, վտանգի ենթարկուեցաւ նաև մեծ բուրժուազիան, արդիւնաբերողներու դասակարգը։

Այսպէս. ֆրանսական Մեծ Յեղափոխութիւնը տապալեց բացարձակ միապետութեան սկզբունքը, կոտրեց անոր պաշտպան և անոր յարակից դասակարգերու տիրապետութիւնը, քաղաքական-հասարակական դաշտին վրայ նոր տարրեր ու նոր խաւեր դրաւ — բուրժուա, արհեստաւոր, անգամ գիւղացի և բանւոր—նիւթագործեց ժողովրդական գերիշխանութեան սկզբունքը, հրաչակեց անհատի ազատութիւնը առհասարակ, հրատարակեց մարդուս անբռնաբարելի իրաւունքները, պետութեան հիմք դարձուց քաղաքական-իրաւական հաւասարութիւնը։

Տասնիններորդ դարը այս յեղափոխութեան իդէալներով սնուեցաւ և ամենուրեք նկատուեցան քաղաքական այս մեծ յեղաշրջման հետևանքները։ Տնտեսական և գաղափարական-իդէական գործօնները միւս կողմէ—մերթ իբրև պատճառ և մերթ իբրև հետևանք—եկան հաստատելու քաղաքական վերածնունդը, ամրապնդելու անոր յաղթանակը և ամբողջացնելու բնաշրջումը...

Դրամատիրութեան հսկայական զարգացումը, արդիւնաբերութեան և ճարտարարուեստի աճումը, նոր դասակարգերու ծնունդն ու ծաւալումը հիմնովին փոփոխութեան ենթարկեցին հինաւուրց նահապետական տնտեսութիւնը։ Մեռաւ—կամ աւելի ճիշտ, սնանկացաւ հնադարեան և միջնադարեան պատերազմիկ հասարակութիւնը։ Անոր փոխարէն պատմութեան ասպարէզն իջաւ նոր տեսակի հասարակութիւն — արդիւնաբերական հասարակութիւն (société industrielle)։ Տնտեսական խնդիրը ահագին կարևորութիւն ստացաւ։ Կեանքը չէր կրնար յառաջադիմել, քաղաքակրթութիւնը չէր կրնար ծաւալուիլ, պատմութիւնը չէր կրնար շարժուիլ և պետութիւնը չէր կրնար ապրիլ առանց տնտեսական բարգաւաճման։ Իսկ վերջինիս համար ամենէն աւելի անհրաժեշտ են ազատ քաղաքական կացութիւն, ազատ հասարակակարգ։

Հին պետական կազմը, կառավարական վաղեմի ձևերը ընդունակ չէին երաշխաւորել նոր հասարակութեան անկաշկանդ ընթացքը։ Անհրաժեշտ էր վերացնել այն անները դաշնակութիւնը, որ գոյութիւն ունէր տնտեսական և քաղաքական ձևերու միջև. պէտք էր հեռացնել այն անհամերաշխութիւնն ու անհամակերպութիւնը, որ կը բաժնէր և կ'անջատէր կեանքին այդ երկու կարևոր արտայայտութիւնները։ Հարկադրական էր դարձած խախտուած հաւասարակշռութեան վերականգնումը և քաղաքական հին ձևերու փոփոխութիւնը։ Բացարձակ միապետութիւնը չէր կրնար վերապրիլ տնտեսական-դասակարգային այն նոր միջավայրի մէջ, որ ստեղծուած էր արդէն։ Նոր ժամանակներու պահանջը հրամայական էր...

Տնտեսական այս կարևոր ու նշանակելի փոփոխութենէն բացի՝ տասնիններորդ դարու քաղաքական վերածնունդին նպաստեց նաև ժամանակի փիլիսոփայութիւնը, գիտութիւնը, գաղափարական-իդէական գործօնը։

Մարդկային միտքը ազատագրուեցաւ հին, աստուածաբանական տիրապետութենէն։ Աշխարհի ստեղծագործութեան ու մարդուս ծագման վրայ այլևս չնայեցին Սուրբ գրքի աւանդութիւններով։ Քննադատական և գիտական մտահայեցողութիւնը հսկայական նուաճումներ ըրաւ։ Բնական-փիլիսոփայական գիտութիւններու առջև աշխարհը և մարդը Աստուծոյ ստեղծագործութիւններ չհանդիսացան այլևս։ Խորտակուեց մարդու ծագման աստուածային, երկնային տեսութիւնը։ Բոլոր մարդիկ առաջացած համարուեցան ամենահամեստ ծագումէ մը, չափազանց դանդաղ կերպով, անընդհատ զարգանալով ու բնաշրջուելով...

Մարդու ծագման այս հաւասարութիւնն ու համեստութիւնը բնական-փիլիսոփայական գիտութիւններէն անցաւ ընկերաբանական-քաղաքական գիտութիւններու տիրոյթը։ Եթէ մարդս ծագած չէ Աստուծմէ, եթէ իրենց նախնական ծագման մէջ մարդիկ մի են՝ ուրեմն չկան աստուածասերունդ անհատներ և ընտանիքներ։ „Մարդիկ կը ծնանին և կը մնան հաւասար"։

Միապետները աստուածներէ չեն սկզբնաւորուեր. անոնց իշխանութիւնը երկնքէն չէ, որ կուգայ, անոնց իրաւունքը աստուածային չէ։ Անոնք ևս նոյն ծագումն ունին, ինչ որ իրենց հպատակները, ինչ որ բովանդակ մարդկութիւնը...

Մտքի և գիտակցութեան այս կարևոր փոփոխութիւնը խորունկ շարժումներ հաղորդեց հասարակական-քաղաքական կեանքին։ Անոր ազդեցութիւնը մեծ եղաւ այդ ուղղութեամբ։

Այսպէս. ամեն կողմէ զարգանալով՝ տասնիններորդ դարը քաղաքական և պետական յեղաշրջման դար եղաւ գերազանցապէս։ Բացարձակ միապետութեան հիմունքները խախտուեցան, միապետներու անսահման իշխանութիւնը սահմանափակուեցաւ, ժողովրդական գերիշխանութեան սկզբունքը կամաց-կամաց պատմական բեմն իջաւ, պետութեան նախնի գաղափարը բնաշրջուեցաւ, թագաւորները թափուեցան իրենց երկնային բարձունքներէն, ստորին շերտերէն ժողովուրդը դուրս ելաւ և հաստատուն քայլերով դէպի իր նիւթական իրաւունքները յառաջացաւ...

Ռամկավարութեան յաղթանակը տակաւին կատարեալ չէ և բնաշրջումը այդ ուղղութեամբ դեռ ևս չէ հասած իր գագաթնակէտին։ Աշխարհիս պետութիւններու մեծ մասը, յիրաւի, բաւական հեռու է իսկական և անաղարտ ռամկավարութենէն։ Այնուամենայնիւ քաղաքակիրթ երկիրներու մէջ—Եւրոպա թէ Ամերիկա—մէկէ աւելի ժողովուրդ և մէկէ աւելի պետութիւն շօշափելի նուաճումներ են ըրած և բաւական կարևոր դիրքեր են գրաւած ռամկավարութեան ճանապարհի վրայ։

Գաղափարը հասունցած է արդէն, միապետութեան

հիմքերը փորուած են այլևս, հինաւուրց իշխանութիւններու դժբախտ մնացորդները հոգեվարքի մէջ են և ռամկավարութեան ապագան որոշ է ու հաստատ։

Պետական մեքենայի հիմքը ժողովուրդն է այլևս։ Քաղաքական կազմուածքի բունը, արմատը „ռամիկն“ է։ Անոր մասնակցութիւնը օրէնսդրութեան, կառավարութեան և առհասարակ պետական գործերուն անվիճելի է այլևս։ Թագաւորները, կղերականները, ազնուականները որքան ալ դաւադրեն, որքան ալ ճգնին՝ չպիտի կրնան պատմութեան անիւը յետ դարձնել և կորցրած դիրքերը վերստին գրաւել։

Ռամկավարութեան, իսկական ժողովրդապետութեան ամենալուրջ, ամենավտանգաւոր թշնամին դրամատէրն է այսօր, կապիտալիստը, արդիւնաբերող դասակարգը, որ սակայն հարկադրուած է խոշոր զիջումներ ընել անոր յառաջացող վազքին։

Թիւրքիան ալ՝ հետևելով պատմութեան պահանջներուն, նոր քաղաքակրթութեան հրահանգներուն և հանճարաւոր ազգերու օրինակին՝ մէկ կողմ է նետած միապետութեան բացարձակութեան սկզբունքը, պետական շէնքի վերին ծայրէն վար է առած ինքնակալ ու ինքնիշխան թագաւորը, մերժած է անոր „աստուածային իրաւունքն“ ու երկնային ծագումը և առաջ է քաշած ժողովուրդը իբրև վարիչ, իբրև տէր պետութեան։

Օսմանեան երկրի քաղաքական-պետական վերակազմութեան սկիզբն է դեռ ևս և անոր վերածնունդի արշալոյսը տակաւին։ Անիկա պիտի աշխատէ կանգ առնել իսկական ռամկավարական ճանապարհի վրայ, իրագործել ժողովրդական գերիշխանութեան անխառն սկզբունքը, երաշխաւորել բովանդակ մեծամասնութեան զարգացումը և բարգաւաճումը։

Անիկա տեր է այսօր այն բոլոր նուաճումներուն, որոնք ձեռք են բերուած նախկին մարդկութեան պայքարի և արեան միջոցով։ Անիկա առջևն ունի քաղաքական-ընկերաբանական գիտութիւններու բաւականաչափ հաստատ և կայուն ճշմարտութիւնները։ Անիկա ծանօթ է միւս ազգերու քաղաքական փորձերուն։ Թիւրքիան պէտք է ձգտի օգտիլ այդ բոլորէն, պիտի խուսափէ աւելորդ ու վնասակար յետաձգումներէ, պիտի գիտէ կեանքը, ուսումնասիրէ պատմութիւնն ու գիտութիւնը և համարձակ կերպով կիրարկէ իսկական ռամկավարական սկզբունքներ, անաղարտ ժողովրդապետական հիմունքներ։

Ինչ որ ուրիշ ազգերը, առաջին անգամ ըլլալով, ըրին դժուարութեամբ ու մեծամեծ ճիգերով՝ Թիւրքիան պիտի աշխատէ ընել որքան կարելի է շուտ և առանց տատանումներու։

Աւելորդ ժամանակը և աւելորդ ջանքը կորուստ են քաղաքակրթութեան և մարդկութեան համար։

Յառաջադիմութիւնը իզուր և դատարկ բառ կ'ըլլայ, եթէ բոլոր սերունդները և բոլոր ազգերը նոյն նուաճումներու համար նոյնչափով եռանդ գործածեն...

—

Ժողովուրդը պետական-քաղաքական գործերուն կը բնայ մասնակցիլ երկու կերպ—կամ անմիջապէս, ուղղակի օրէնսդրութեամբ և կամ պատգամաւորներու միջոցով, ներկայացուցչական կազմով։

Այսօրուան հասարակութիւններու մէջ, ժամանակակից խոշոր պետութիւններու մէջ առաջին սիստեմը—ուղղակի օրէնսդրութիւնը—չէ գործադրուեր։ Ամենուրեք, ուր կայ ռամկավարական, սահմանադրական հասարակակարգ՝ ժողովուրդը կ'ընտրէ որոշ թիւով անհատներ. այս անհատները, ներկայացուցիչները, կը հաւաքուին միասին, կը կազմեն պարլամենտ, օրէնքներ կը մշակեն և այդ ձևով կը վարեն պետութիւնը։

Իսկական ռամկավարութեան կողմնակիցներէն ոմանք խնդիր են յարուցած՝ թէ արդեօք այս ձևով, ժողովրդական գերիշխանութեան սկզբունքը, ժողովրդին նուիրական կամքը չէ՞ ոչնչաւորուեր, չէ՞ աղաւաղուեր։ Արդեօք պարլամէնտները, ներկայացուցչական մարմինները չե՞ն դաւաճաներ ընտրող ժողովրդին. արդեօք երբևիցէ այդ հիմնարկութիւնները պիտի կրնան իրագործել զուտ և անխառն ռամկավարութեան սկզբունքը։ Արդեօք աւելի լաւ չէ՞, աւելի նպատակայարմար չէ, որ ժողովուրդը ինքը ուղղակի կերպով, անմիջապէս, առանց պատգամաւորներու, մշակէ իր օրէնքները, կառավարէ իր երկիրը և վճռէ իր դատերը։

Հին ժամանակները, փոքրաթիւ և սահմանափակ հասարակութիւններու մէջ, հնարաւոր է եղած կիրարկել այդ սիստէմին մօտիկ սիստէմը։ Գիւղի կամ քաղաքի բնակիչները անխտիր—իրացառեալ իրաւազուրկները—հաւաքուած են միասին հրապարակի վրայ կամ որևէ շէնքի մէջ և ուղղակի կերպով տնօրինած են իրենց հասարակական գործերը։

Նախնական մանր և անկազմակերպ հասարակութիւններու մէջ, ուր պետական գործառնութիւնները չափազանց քիչ են, ուր ընդհանուր շահերը տակաւին ծնուած չեն, ուր կեդրոնաձիգ տարրերը դեռ ևս զարգացած չեն՝ թերևս հնարաւոր եղած ըլլայ որոշ չափով գործադրել ուղղակի օրէնսդրութիւնը և անմիջական կառավարութիւնն ու դատավարութիւնը։

Սակայն ժամանակի ընթացքին մէջ, կեանքի բարդանալով, շրջաններու ընդարձակումով, տնտեսութեան զարգացումով, պետութեան ստեղծումով և լայնանալով՝ օրէնսդրական-վարչական այդ սիստէմը անբաւարար է ճանաչուած և մէկ կողմ է նետուած։

Բնաշրջումի զօրեղ ազդեցութիւնը և աշխատանքի բաժանմանմեծ սկզբունքը հոս ալ վճռական ու տիրական են եղած։ Փոխանակ ամենքը միասին օրէնքներ մշակելու ու խմբագրելու, փոխանակ ամենքը միասին կառավարելու, ամենքը միասին դատելու՝ պաշտօնները և աշխատանքները բաժանուած են ու առանձնացած։

Այսօրուան հասարակութեան բարդ ու բազադրեալ կազմի մէջ, ներկայիս խոշոր ու լայնածաւալ պետութիւններու մէջ աւելի ևս անկարելի է կիրարկել ուղղակի օրէնսդրութիւնը և անմիջական կառավարութիւնը։ Մարդիկ ամենը միասին չեն կրնար և վճռական ըլլալ և ուսուցիչ և բժիշկ և փաստաբան և արհեստաւոր և դատաւոր և օրէնսդիր և կառավարիչ և զինուոր և զօրավար ևայլն ևայլն... և այդ ամենը հաւասար յաջողութեամբ, արտադրելով ամենամեծ բարիքը ամենաքիչ ջանքերով և ամենափոքր ժամանակի մէջ...

Մինչև անգամ, եթէ կարելի և հնարաւոր ըլլար ուղղակի օրէնսդրութիւնը՝ վնասակար և յառաջադիմութեան խոչընդոտ պիտի ըլլար։ Կեանքը պիտի կորսնցնէր իր կարգն ու կանոնաւորութիւնը, տնտեսութիւնը պիտի աղաւաղուէր, քաղաքական-պետական-իրաւական դրութիւնը պիտի կազմալուծուէր և քաոսը պիտի թագաւորէր ամենուրեք...

Ներկայ ժամանակներու քաղաքական իմաստութիւնը մերժած է ուղղակի օրէնսդրութիւնը և ջատագոված, որդեգրած է ներկայացուցչական ռէժիմը, որպէս ամենէն յարմարագոյնը։ Հասարակութիւնը, երկիրը, ժողովուրդը պէտք է մասնակցէ կառավարութեան, օրէնքներու մշակութեան, ոչ թէ ուղղակի, անմիջապէս, այլ պատգամաւորներու միջոցով, ընտրուած ներկայացուցիչներով։ Միայն թէ՝ պէտք է կանոնաւորել ընտրութիւնների գործը այնպէս, որ հասարակութիւնը ամբողջովին ներկայացած ըլլայ։ Եթէ ուղղակի կառավարութիւնը հնարաւոր չէ և ոչ ալ գործնական — ապա միանգամայն հնարաւոր է և հասարակական ու պետական տեսակէտներէ ցանկալի, որ ժողովուրդը լայնօրէն ու խորապէս մասնակցէ ներկայացոյցչի ընտրութեան գործին։ Խորհրդարանները, ներկայացուցչական մարմինները, պարլամենտները, մէկ տարամերժ դասակարգի, մէկ որոշ խմբակի արտայայտութիւնը չպիտի ըլլան, այլ բովանդակ երկրի։ Անոնք գործիք չպէտք է հանդիսանան այս կամ այն զօրեղ տարրին ձեռքը — ընդհանրութիւնը, աշխատաւոր „ռամկութիւնը" ստրկացնելու և շահագործելու։ Ժողովրդական գերիշխանութեան սկզբունքը՝ սահմանադրութիւններու այդ անհրաժեշտ նախապայմանը՝ մեռած տառ չպիտի մնայ, այլ պիտի գործադրութիւն ստանայ։ Այդ պատճառով բացարձակ միապետութեան տապալումէն և սահմանադրական վարչակարգի հաստատելէն ետքը՝ անմիջապէս պէտք է հոգալ, որ քաղաքացիական իրաւունքները իրողութիւն դառնան և միայն թղթի վրայ չմնան։

Ժամանակակից ռամկավարութիւնը մշակած է ընտրութիւններու այնպիսի կանոն, որ ամենէն աւելի ընդունակ է երաշխաւորել իսկական ժողովրդապետական կառավարութիւն մը և երկրին բովանդակ կամքը։ Ընտրութիւնները այդ կանոնին համաձայն—պիտի ըլլան ընդհանուր, ուղղակի, գաղտնի և հաւասար։ Առանց այս հրահանգներու իրականացման, առանց այս կանոններու գործադրման՝ ժողովրդական ներկայացուցչութիւնը հարազատ չէ և պարլամենտը ազգի, ընդհանրութեան արտայայտութիւնը չէ։

Հին դասակարգերը, միապետութեան երդուեալ բարեկամներն ու պատմական գործակիցները ամեն կերպ աշխատած են, ծածուկ թէ բացայայտ, կռիւ մղել ռամկավարութեան այդ պահանջներուն դէմ։

Ցաճախ՝ անկարող ըլլալով արգիլել բացարձակ միապետութեան անկումը և սահմանադրութեան հրատարակումը, կորսնցնելով ձևը, երևոյթը, անունը—անոնք ձգտած են էութիւնը պահպանել, հին յարաբերութիւններու և հին կեանքի ոգին չխախտել։ Ընտրողական սահմանափակ օրէնքներ հրատարակել, այս կամ այն պատրուակով պարլամենտի դռները գոցել աշխատաւոր ու աղքատ դասակարգերու առջև—այս ամենը մէկ նպատակ են ունեցած,—երկարաձգել միապետութեան եթէ ոչ անուանական, գէթ իրական տիրապետութիւնը, խոչընդոտ հանդիսանալ ժողովրդական կամքին ու գերիշխանութեան և ռամկավարութեան յաղթանակին։

Այս է պատճառը, որ պարլամենտական ընտրութեանց վերոյիշեալ կանոններու իրագործումը նոյնքան կարևոր է ժողովրդի համար, որքան միապետութեան տապալումը և նոյնքան նշանակալի, որքան սահմանադրութեան հրատարակութիւնը...

Ընդհանուր ձայնաւորութեան հիման վրայ իւրաքանչիւր չափահաս քաղաքացի իրաւունք ունի ընտրելու և ընտրուելու։ Բանւոր, գիւղացի, արհեստաւոր, վաճառական, արդիւնաբերող, կալուածատէր, հարուստ աղքատ — ամենը հաւասար են ընտրողական օրէնքի առջև։

Երկար ժամանակ տիրապետող դասակարգերը չէին հաշտուեր այս հիմնական իրաւունքին հետ։ Պարլամենտը, անոնց կարծիքով, հասարակութեան „ընտրեալ, „զաւգացած", „յառաջադէմ" մասին արտայայտութիւնը պէտք է ըլլայ և ոչ „ամբոխի" ժամադրավայրը։ Եւ „ընտրեալ" դաս ըսելով՝ անոնք ի նկատ ունէին այն տարրերը, որոնք տէր են որոշ եկամուտի, որոշ հողերու, անշարժ կալուածներու, տներու, դրամագլուխի, նաև երբեմն որոշ տիպլոմի...

Այսպիսով հասարակութեան ունևոր, հարուստ, երջանիկ խաւերն էին, որոնք կրնային խորհրդարան կազմել, ներկայացուցչական մարմնի անդամ ըլլալ, օրէնքներ մշակել և երկրին կառավարութեան մասնակցել։ Միւս տարրերը — սեփականազուրկ, բայց աշխատաւոր ընդհանրութիւնը—հեռու պիտի մնար պարլամենտէն այնպէս, ինչպէս հեռու է եղած նախկին կառավարութենէն և պիտի յաւիտենապէս շահագուծուէր...

Այս էր միապետութեան, ազնուականութեան, կղերականութեան, դրամատիրութեան հասարակական-քաղաքական իդէալը։

Իրաւազուրկ ժողովուրդը, չունևոր „ռամիկը" տասնիններորդ դարու ամբողջ տարածութեան վրայ, քանի-քանի անգամ, նշանակալից ու արիւնոտ պայքարներ է մղած իսկական ժողովրդապետութեան իրականացման համար։ Ընդհանուր ձայնաւորութեան յաղթանակը պահանջած է յաճախ նոյնքան զոհաբերութիւն՝ աշխատաւոր և մարտական դասակարգերու կողմէ, որքան միապետութեան անկումը և սահմանադրութեան ծնունդը...

Եթէ հասարակութեան մէկ մասը անտարբեր է և անհետաքրքիր քաղաքական խնդիրներու նկատմամբ եթէ երկրին մէկ հատուածը անպատրաստ է ըմբռնելու դատելու, հասկնալու պետութեան բազմակողմանի և բազմաթիւ գործերը—տարիկա, նախ և առաջ, չէ նշանակեր՝ թէ անպատրաստ և անտարբեր մասը չունևորներն ու սեփականազուրկներն են։

Ընդհակառակը, ասոնք, իրենց դասակարգային մասնայատուկ պայմաններու շնորհիւ՝ աւելի են շահագրգռուած պետութեան գործերով և աւելի են ցանկացող անոր առաջադիմութեան, քան այն երջանիկները, որոնց նիւթական-տնտեսական նախանձելի կացութիւնը նետած է զանոնք ծոյլ ու շլայտ կեանքի մէջ։ Երջանիկները, ունևորները չեն, որոնք կը հետաքրքրուին հա-

սարակական խնդիրներով, կ'ապրին անոնց համար և կը խորհրդածեն անոնց շուրջը։

Միւս կողմէ՝ եթէ ճշմարիտ անգամ ըլլար շահագործող դասակարգերու „կարծիքը“ սեփականազուրկ դասակարգերու վերաբերեալ — թէ իբր վերջիններս „պատրաստ“ չեն քաղաքական կեանքի համար—ապատիկ բնաւ պատճառ չէ զրկել զանոնք քաղաքացիական իրաւունքէ և հալածել պետական-հասարակական ասպարիզէն...

Ժողովուրդներու քաղաքական դաստիարակութիւնը և հասարակական հասունութիւնը անգործութեան և հալածանքի մէջ չէ, որ կը մշակուի, կը զարգանայ, այլ գործունէութեան և իրաւունքի մէջ։ Մէկերկու տարուայ փորձառութիւնը բաւական է, որպէսզի „անպատրաստ“ և „անտարբեր“ բանւորն ու գիւղացին աւելի պատրաստ և հետաքրքիր դառնան՝ քան անոնց հասարակական հակառակորդները...

Եւրոպական պարլամենտներու օրինակներն ու փորձերը ցոյց կուտան, որ աշխատաւորական կուսակցութիւններն ու համախմբումները աւելի են պատրաստ քաղաքական պայքարի, աւելի են ուշադիր պետական խնդիրներուն, քան հին դասակարգերն ու անոնց արտայայտիչները։

Առանց ընդհանուր ձայնաւորութեան՝ պարլամենտները ժողովրդական ներկայացուցչութիւն անուանելու իրաւունքը չունին։ Այդպիսի խորհրդարանները գործիք են ժողովրդի հակառակորդներուն ձեռքը՝ ընդդէմ ժողովրդական շահերու և հասարակաց բարօրութեան։

Ռուսական Պետական Դուման, գումարուած ընտրողական սահմանափակ իրաւունքով՝ արտայայտիչն է միապետութեան, կղերականութեան և ազնուականութեան։ Անիկա նոյնքան թշնամի է ռուս ժողովրդի նուիրական իրաւունքներուն, Ռուսաստանի մէջ ապրող բազմաթիւ ազգերու արդար դատին, որքան և ռուսական միապետութիւնը։ Սահմանադրութիւնը այսպիսի պայմաններու մէջ կեղծիք է միայն, խաբուիլակ և քաղաքական խաբէութիւն։ Իսկական սահմանադրութիւնը և ժողովրդական գերիշխանութեան սկզբունքը կ'իրագործուին միայն այն ժամանակ, երբ վերնան ընտրողական սահմանափակումները և բոլոր քաղաքացիները քաղաքացիական անխտիր իրաւունք ունենան ընտրելու և ընտրուելու...

Թիւրքիոյ խորհրդարանը աւելի ռամկավար և աւելի ժողովրդական չէ։ Աւատապետներու, բէկերու, կղերականներու—մէկ խօսքով՝ հասարակութեան վերին շերտերու—ներկայացուցչական մարմինն է անիկա։ Տարրեր, որոնք պետութիւնը արտաքին վտանգէ փրկելու համար գլխաւորապէս սահմանադրական դարձած են և ոչ համոզմունքով, անկեղծօրէն։ Այդ խորհրդարանը իր կարճ տևողութեան միջոցին հանդէս բերաւ դասակարգային միակողմանի ու տարամերժ ոգի՝ արգիլելով բանւորական ընկերակցութիւններու ազատութիւնը, յետմղելով յառաջատեսական տուրքը (impot progressif), երեսի վրայ ձգելով հողային դժբախտ հարցը, անուշադրութեան մատնելով աղքատ գիւղացիութեան յուսահատական ճիչը...

Քանի որ սահմանադրութիւնը փրկութեան միակ գործիքն է պետութեան բայքայման ու անդամահատման դէմ՝ լաւ է ու տանելի։ Երբ անիկա ճշնշուած ու հարստահարուած ընդհանրութեան պաշտպանն է՝ ընդդէմ շահագործող փոքրամասնութեան՝ մերժելի է ու աւելորդ։ Այսպէս է թիւրք խորհրդարանական մեծամասնութեան տրամաբանութիւնը և հասարակական իդէալը։ Անոնք—խորհրդարանի պատգամաւորները շատերը, այո՛—պատրաստ են ամեն անգամ, գաղտնի թէ բացայայտ, դաւադրել սահմանադրութեան դէմ, մատնել հայրենիքը, դաւաճանել պետութեան՝ եթէ իրենց շահերը ապահովուած չեն և դրուած չեն պետութեան բարձրագոյն պաշտպանութեան ներքև...

Ընդհանուր ձայնաւորութիւնը Թիւրքիոյ մէջ պիտի կրնար ազատել սահմանադրութիւնը ամեն տեսակ պատահականութիւններէ և ապահովել երկիրը — անոր ահագին մեծամասնութիւնը գէթ — արտաքին և ներքին դաւադիրներէ...

Ռամկարութեան յաղթանակի իրականացման համար անհրաժեշտ է, որ ընդհանուր ձայնաւորութեան սկզբունքը զուգորդուի, ընկերանայ գաղտնի ձայնաւորութեան։ Առանց այդ վերջին կանոնի՝ ընդհանուր ձայնաւորութիւնը — ժամանակակից հասարակական, տնտեսական ռէժիմի ներքև—չի կրնար այն հետևանքները հանդէս բերել, ինչ որ կ'ակնկալուէ անորմէ։ Տիրապետող դասակարգերը բացքէարկութեան միջոցին միշտ կրնան —ուղղակի թէ անուղղակի—ճնշում գործադրել ընտրողներու կամքին և խղճմտանքին վրայ։ Տնտեսապէս անազատ և անկախութենէ զուրկ գիւղացիներն ու բանւորները չեն կրնար—առանց արտաքսուելու և հալածուելու վտանգի — իրենց ուզած պատգամաւորին քէարկել։ Եւրոպական երկիրներու պարլամենտական տարեգրութիւնները բազմաթիւ փաստեր են արձանագրած՝ այս ճշմարտութիւնն ապացուցանող։

Չի կարելի պահանջել, որ թշուառ, քաղցած, անօգնական ընդհանրութիւնը ունենայ այն աստիճան կամք և այն աստիճան հերոսութիւն՝ հրապարակով ու բացայայտ սեցնելու համար իր տիրոջը, իր մեծաւորին։ Տնտեսական դժբախտ կախումը—ներկայ հասարակարգի ոգին—կը հարկադրէ սեփականազուրկ աշխատաւորին քէարկել հակառակ իր ցանկութեան, որպէսզի վաղը չը զրկուէ պաշտօնէն, որպէսզի վաղը սովամահ չ'ըլլայ ընտանիքով միասին...

Գաղտնի քէարկութիւնը որոշ չափով — դժբախտաբար միայն որոշ չափով—կազատէ ընտրողական իրաւունքը այս աստիճան գռեհիկ ու բիրտ աղաւաղումէն և այլանդակութենէն։

Այսպիսով, գէթ մասամբ — այնքան, որքան կրնայ գաղտնի մնալ գաղտնի ձայնաւորութիւնը—կը վերնայ տիրապետող դասակարգերու ճնշումը աշխատաւոր ընդհանրութեան վրայէն...

Ընտրողական գործի հիմնական հարցերէն մէկն ալ ուղղակի կամ անուղղակի ձայնաւորութիւնն է։ Ժողովուրդը մէկ անգամով, ինքը անմիջապէ՞ս կընտրէ արդեօք իր ներկայացուցիչը, որ պէտք է տեղ գրաւէ խորհրդարանին մէջ, թէ՞ նախնառաջ կընտրէ որոշ թիւով պատուիրակներ, որպէսզի ասոնք միայն ընտրեն պատգամաւոր պարլամենտի համար։ Առաջին սիստեմով մենք կը կունենանք ուղղակի ընտրութիւն, երկրորդով՝ անուղղակի ընտրութիւն։

Ըստ երևոյթին այս տարբերութիւնը ձևական է միայն և չունի էական, սկզբունքային նշանակութիւն։ Պատգամաւորը անմիջապէս ժողովուրդէն է ընտրւեր, թէ ժողովուրդէն ընտրւած պատւիրակներու համախմբումէն—միևնոյնը չէ՞ արդեօք։ Երկու պարագային մէջ ալ ժողովրդական կամքը չէ՞ արդեօք, որ կը տնօրինէ, կը հրամայէ, կը գործէ։ Ընտրեալ պատւիրակները չէ՞ որ ժողովրդական ձայնին արտայայտիչներն են և չեն կրնար անոր ցանկութեան հակառակ քայլեր ընել։

Այդպէս չէ, սակայն, իրականութիւնը։

Առաջին աստիճանին վրայ, այսինքն պատւիրակներու ընտրութեան մէջ, շատ յաճախ կրնայ տեղի ունենալ—բազմաթիւ պատճառներու հետևանքով—ժողովրդական կամքին աղաւաղումը։ Պատւիրակներու ամբողջ հաւաքումը, բովանդակ կազմը անհրաժեշտօրէն ժողովրդական պահանջներուն արտայայտութիւնը չէ։ Ընտրութիւնները որքան ալ ռամկավարական ըլլան՝ այնուամենայնիւ որոշ հեռաւորութիւն, որոշ տարածութիւն միշտ գոյութիւն ունի ժողովրդական անմիջական կամքին և ընտրւած մարմնի միջև։ Պատւիրակներու կողմէն ընտրւած պատգամաւորը կամ պատգամաւորական խումբը կրկնակի կը հեռանայ ժողովուրդէն և անջատման տարածութիւնը աւելի ևս կը մեծնայ։

Երկաստիճան, անուղղակի ընտրութիւններու մէջ ռամկավարութեան սկզբունքը դիւրաւ կրնայ զոհաբերւիլ և ժողովրդական կամքը կրնայ տեղի տալ անոր թշնամիներու կամքին։

Ուղղակի ձայնտւութիւնը ունի, անկասկած, որոշ գործնական դժւարութիւններ սահմանադրական նոր երկիրներու մէջ, ուր ժողովուրդը՝ անվարժ ու անծանօթ քաղաքական գործերուն և պետական անձնաւորութիւններուն՝ չի կրնար թերևս յաջողութեամբ ընտրութիւն կատարել։ Սակայն այս դժւարութիւնը վաղանցիկ է միայն և ժակերևոյթական։ Կարճ ժամանակեայ փորձառութիւնը, ընտրողական պայքարը, կուսակցութիւններու ազատ փրօփականտը, հասարակական կարծիքը, անկաշկանդ և գաղափարական մամուլը շատ բան կրնան փոխել։

Անուղղակի ձայնտւութիւնը—այսպիսի պայմաններու մէջ—հասարակութեան թշնամիներու իդէալը միայն կը մնայ։ Ռամկավարութեան և ժողովրդապետութեան պահանջը ուղղակի ձայնտւութիւնն է...

Ընտրական սիստեմին վերոյիշեալ երեք կանոնները—ընդհանուր, գաղտնի և ուղղակի—եւրոպական և ամերիկեան շատ երկիրներուն մէջ կը գործադրւին արդէն։ Ֆրանսա, Անգլիա, Զւիցերիա, հիւսիսային և հարաւային Ամերիկա, Գերմանիա և այլն—աւելի կամ նւազ տարբերութեամբ—որդեգրած են ժողովրդական բւէարկութեան այդ սկզբունքները։ Գերմանիա՝ շատ տեսակէտներով ուշացած ռամկավարութեան ճամբուն վրայ ընդհանրապէս՝ կրցած է նւաճել գէթ ընտրական այդ բարեմասնութիւնները։

Քաղաքական ընաշրջումը և կատարելագործումը այդ ուղղութեամբ կը յառաջանան...

Ընտրական գործին ամենատխուր, ամենամռայլ էջերէն են կանանց քաղաքական իրաւունքի խնդիրը։

Հասարակութեան մէկ նշանաւոր մասը—կին սեռը—դարերու ընթացքին մէջ զրկւած է եղեր ամենատարրական մարդկային իրաւունքներէ։ Մերթ իբր հաճոյքի ու զւարճութեան առարկայ, մերթ իբր խոհանոցի մասնագէտ, մերթ իբր ծննդաբերութեան պաշտօնեայ՝ կինը եղած է դարեր շարունակ տղամարդուն անպատիւ և անարգ ստրուկը։ Ամենաբիրտ գերութեան և ամենաբարբարոս շահագործումի փաստն է ատիկա, որ պատմութիւնը երբևիցէ արձանագրած ըլլայ։

Ընտանիքի մէջ անձայն և իրաւազուրկ, հասարակական և քաղաքական գործերուն մէջ բոլորովին բացակայ։

Քաղաքակրթութեան և յառաջադիմութեան հետ կնոջ ճակատագիրը փոքր առ փոքր կը սկսի ամոքել։ Օրէնքները հետզհետէ կը մեղմանան կիներու նկատմամբ. բարքերը կամաց-կամաց կը բնաշրջւին, հասարակութիւնը աւելի ու աւելի համբերողամիտ կը դառնայ։

Սկիզբ կ'առնէ կնոջ ազատագրումը, որ ժամանակակից պատմութեան և ընկերական կեանքի ամենազգայուն խնդիրն է։ Ընտանիքի մէջ կինը իրաւապէս կը հաւասարւի տղամարդուն։ Այսպէս է գէթ եւրոպական երկիրներու մէջ։ Հասարակական կեանքին այս կամ այն ասպարէզները կը բացւին անոր առջև։ Կինը կը դառնայ բժիշկ, փաստաբան, պաշտօնեայ։ Անոր քաղաքական-ընտրական իրաւունքը, սակայն, մինչև այժմ յարգւած չէ բազմաթիւ երկիրներու մէջ։ Մէկ թէ երկու երկիր միայն ունեցած են հասարակական առաքինութիւն և քաղաքական հասունութիւն՝ ճանաչելու համար կիներուն նոյնպէս իրաւատէր պետական-պարլամենտական խնդիրներու մէջ, ինչպէս և տղամարդուն։

Ֆինլանդիան—այդ փոքրիկ քաղաքակիրթ, յառաջադէմ երկիրը, ունի արդէն իր ներկայացուցչական բարձրագոյն մարմնին մէջ կին պատգամաւորներ։

Ասկէ չորս տարի առաջ, 1906 թւականին, հայերուս մէջ ալ—թէև կարճ ժամանակով—իրագործւեցաւ կիներու ընտրական իրաւունքը։

Էջմիածնի կեդրոնական ժողովին—որ ռուսահայերու ազգային պատգամաւորական հաստատութիւնը եղաւ և որ մեռաւ ռուս կառավարութեան վայրենի կարգադրութեամբ—հայ կիներն ալ մասնակցած էին ընտրողական հաւասար իրաւունքով։

Այսպէս. քաղաքակիրթ ժողովուրդներու մէջ սկսւած է արդէն մէկ նշանակալից, պատմական շարժում՝ ի նպաստ կիներու ընտանեկան, հասարակական, քաղաքական ազատագրման, որ՝ յառաջադիմութեան և ռամկավարութեան յաղթանակի հետ միասին՝ պիտի հանգչի իր դրական շարժման։

Արևելքի մէջ, մասնաւորապէս, կնոջ ճակատագիրը սարսափելի է եղած։ Դարերու խաւարն ու բարբարոսութիւնը հոտ ստեղծեր են կնոջ գերութեան ամենացայտուն, ամենասև տիպը։ Մահմեդական հասարակութիւններու մէջ աղէտքի կերպարանք է առած կիներու կացութիւնը։

Այդ շարաշուք աւանդը և այդ մռայլ իրողութիւնը հին ժամանակներէ անցած է մինչև մեր դարը։ Կինը իրաւազուրկ, կինը տգէտ, կինը ծառայ, կինը հաճոյքի ու տրփանքի առարկայ, կինը ստրուկ, ընտանիքի մէջ,

հասարակութեան մէջ, ամուսնու համար, ծնողներու համար, բոլորի համար—այս է դժբախտ իրականութիւնը մահմեդական աշխարհի։

Երիտասարդ Թիւրքիան ահագին աշխատանք ունի կատարելու՝ մարդկութեան այդ ծանր նախատինքը մեղմելու համար։ Թիւրքիոյ իսկական վերածնունդը, Թիւրքիոյ քաղաքական, հասարակական, տնտեսական ազատագրումը պէտք է իրագործուի կնոջ ազատագրման հետ միասին, առանց որուն ամեն վերածնունդ անկատար կ'ըլլայ։

Նոր Թիւրքիան չպիտի հանդուրժէ հին Թիւրքիոյ ամենաանարդ ժառանգութիւններէն մին—մարդկութեան կէսին այդ աստիճան բիրտ ստրկութիւնը։

Ամեն ջանք, ամեն աշխատանք պէտք է թափուի, որպէսզի Թիւրքը կինը ելնէ այսօրուան դժբախտ կացութենէն, որպէսզի հնարաւոր դառնայ անոր հասարակական-քաղաքական իրաւունքին իրագործումը...

ՍՕՑԻԱԼԱԿԱՆ

VIII ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՍՕՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԿՈՆԳՐԷՍ

(Կոպենհագ, օգոստ. 28 | սեպտ. 3)

Համագումար աշխատաւոր ժողովուրդների, համագումար աշխարհի բոլոր ճնշածների ու կեղեքածների, պայքարողների և տանջուողների։ Մի տեսակ Տիեզերական Խորհրդարան, պարլամենտ, ուր հաւաքուում են իւրաքանչիւր 3 տարին հարիւրաւոր պատգամաւորներ բոլոր քաղաքակիրթ ազգութիւններից՝ մշակելու համար գործունէութեան ընդհանուր ծրագիր ու տակտիկ, խորհելու համար պայքարի նորնոր միջոցներ։

Այդպէս է ներկայանում միջազգային այն մեծ Ատեանը, որ կոչուում է բոլոր քաղաքակիրթ լեզուներով՝ „Ինտերնացիոնալ" (Internationale) և որի ութերորդ համաժողովը տեղի ունեցաւ Կոպենհագում, օգոստոսի վերջերին։

Նոր աշխարհն է դա—նոր մարդկութիւնը։ Նոր հաւատամքն է, որ ծառանում է բոլոր հնացած կամ հնացող դօգմերի, աշխարհայեացքների դէմ։ Նոր, արմատական, յեղափոխական յորձանքն է, որ գալիս է հիմքից շրջելու երկրագունդը, մաքրելու հարստութեան, բռնի ուժի, տգիտութեան և առանձնաշնորհումների վրայ հիմնուած բոլոր անիրաւութիւններն ու տարկանոնութիւնները և սահմանելու ճշմարիտ մարդկային իրաւակարգը—բոլոր ազգերի ու անհատների ազատութեան ու հաւասարութեան մէջ...

Աշխատաւորութեան 8-րդ տիեզերական պարլամենտն է։ 900-ի չափ պատգամաւորներ—բոլոր երկրներից, որոնք այսպէս առած, մտել են եւրոպական քաղաքակրթութեան աւազանի մէջ։ Թիւրքիան առաջին անգամը մուտք է գործում, ի դէմս հայկական (դաշնակցական) պատգամաւորութեան։ Սալօնիկի միջազգային աշխատաւորական կազմակերպութիւնը ընդունուած է Հ. Յ. Դաշնակցութեան միջնորդութեամբ, բայց նա առայժմ չի կարող զրկել սեփական պատգամաւորութիւն և ինքզինքը ներկայացնելու լիազորութիւն էր տուել բուլգար սոցիալիստներին։

Հ. Յ. Դաշնակցութիւնը ներկայ է յանձին իր 4 պատգամաւորների — Դ...ման, Շիրակունի, Բարսեղեան և Վարանդեան, որոնցից 2-ը ներկայացնում են օսմանեան, միւս երկուսը ռուսական Հայաստանը։

Բացումը իրաք հսկայական է։ Դանիմարկի սոցիալիստները — հրաշալիօրէն մարզուած, կազմակերպուած — ճիգ չեն խնայել դարձնելու համար այդ բացումը ըստ կարելւոյն շքեղ ու տպաւորիչ։ Կոպենհագը չէր տեսած իր կեանքում այնպիսի հոյակապ թափօր, որպիսին անցաւ օգոստոսի 28-ին նրա կենտրօնական փողոցներից։ 120—150 հազար մարդ և կին—բոլոր արհեստներից, աշխատանքի բոլոր ճիւղերից... Մայրաքաղաքի ազգաբնակութեան քառորդ մասը՝ կազմակերպուած սոցիալիստական դրօշակի ներքոյ։ Ամբողջ մէկ ու կէս ժամ այդ հսկայ զանգուածը քայլում էր երաժշտութեան հնչիւնների տակ, անակնկալ ու ապշանք պատճառելով ոչ միայն Կոպենհագի հարուստ բուրժուազիային, որ դիտում էր թափօրը պատշգամներից ու լուսամուտներից, այլ և արևմտեան Եւրոպայի սոցիալիստներին, անգամ ֆրանսիացիներին, որոնք սովոր են տեսնել իրենց մայրաքաղաքում զանգուածային մեծ թափօրներ։

Իրիկնադէմին այդ գեղեցիկ զօրաշարժը հասնում է իր վերջին հանգրուանին, Sondermarken-ի վիթխարի այգուն, ուր կառուցուած էին հռետօրների համար չորս ամբիոններ։

Տասնեակ հազարաւոր ունկնդիրներ—իւրաքանչիւր ամբիոնի շուրջը։ Ճառերը հնչում են երեք գլխաւոր լեզուներով — ֆրանսերէն, գերմաներէն և անգլիերէն — ապա թարգմանւում են դանիերէն։ Ահագին parc-ը թնդում է ծափերից։ Ի՞նչ ասել կուզէ, Ժորէսը, այստեղ ևս օվսանների առարկայ է։

„Յաւում եմ, ասում է համբաւաւոր տրիբունը, դիմելով դանիացիների խաւռն բազմութեան, — յաւում եմ, որ չեմ կարող ձեր լեզուով խօսել։ Բայց չէ՞ որ բոլոր սոցիալիստները իրաք մէկ լեզու ունին—արդարութեան լեզուն... Սոցիալիզմի առաքինութիւններից մէկն այն է, որ նա չի հանդուրժում այլազան ցեղերի առանձնայատկութիւնները, այլ ընդհակառակը, շեշտում է նրանց, և իւրաքանչիւր ցեղ բերում է նրան—սոցիալիստական շարժումին—իր ինքնատիպ հանճարի բաժինը։

„Սոցիալիզմի պատասխանատուութիւնները — շարունակում է Ժորէս—աճում են նրա զօրութեան հետ։ Նա միակ ուժն է, որ առաջնորդում է այսօր ամենուրեք ռամկավարները դէպի կռիւ, յանուն ազատութեան և ընդդէմ այլևայլ բռնակալութիւնների, աւատական ազնուականութեան, բուրժուազական օլիգարշիի, ընդդէմ կապիտալի և նա է, որ պիտի կարողանայ եղբայրացնել մարդկանց"։

Կարգադիր Յանձնաժողովի կողմից նախօրօք հրաւիրուած ու գրուած են հռետօրների ցանկում. Ժորէս, Ժիւլ Գեդ, Վայեան (Ֆրանսիա), Կաուցկի, Մօլկենբուր (Գերմանիա), Վիկտօր Ադլեր, Պերներտօրֆեր (Աւստրիա), Վանդերվելդ, Անզէլ (Բելգիա), Կէր Հարդի, Մակդոնալդ (Անգլիա), Հիլկուիթ (Հիւս. Ամերիկա), Վան-Կոլ (Հոլլանդիա), Բուխինգեր (Ունգարիա), Նեմեց (Բոհեմիա), Պլեխանով և Ռուբանովիչ (Ռուսաստան), Բոգա Լիւքսեմբուրգ (Լեհաստան), Պաբլո Իգլեսիաս*) (Սպանիա), Վարանդեան (Թիւրքիա, Հայաստան)։

„Դանիական կուռ, հսկայական կազմակերպութիւնը, ասում է Ադլեր, խրախուսիչ օրինակ կը լինի մեզ համար՝ թէ քաղաքական և թէ արհեստակցական (սինդիկատային) տեսակէտից... Սակայն մենք աւստրիացիք ևս պատկառելի նուաճումներ ենք արել... Մենք գերմանական կայզերի պէս չենք, որ կուզէ թագը միմիայն իր գլխին դնել, մենք կուզենք թագ դնել իւրաքանչիւր մարդու գլխին"...

Կէր Հարդի, անգլիական Labour Party-ի (աշխատ. կուսակցութեան) պերճախօս առաջնորդը տաք խօսքերով ներբողում է անգլօ-դանիական ժողովրդական համերաշխութիւնը „ընդդէմ բռնաւոր կապիտալիզմի, յանուն կուլտուրայի"։

Պլեխանով ռուսական սոցիալիստների կողմից իր ջերմագին շնորհակալութիւններն է ուղղում Դանիմարկի սոցիալիստներին, այն սիրալիր հիւրընկալութեան համար, որ վերջինները ցոյց են տուել ռուս սոցիալիստներին՝ ցեղափոխութեան տագնապների նրանց փախուստի միջոցին...

„Առաջին անգամը, քաղաքացիներ, — ասաց Հ. Յ. Դաշնակցութեան պատգամաւորը — ես բախտ ունիմ խօսելու Ինտերնացիոնալի առջև, որպէս Արևելքի ձեր ծանօթ հին ու փոքրիկ կուլտուրական ժողովրդի մի զաւակ, ժողովրդի՝

*) Խորին յուզմունք ու ցասում են յարուցանում սպանիական սոցիալիստ առաջնորդի խօսքերը դժբախտ Ֆերրերի նահատակութեան եւ նրա դահին կղերի շահատակութիւնների մասին։

որ լեհութեան պէս յօշոտուել ու բաժնուել է երեք բռնակալ պետութիւնների միջև, բայց որ դարերի արիւնոտ արկածներից յետոյ այսօր վերստին գտնում է ինքզինքը ազատութեան րէժիմի տակ և տնում է, այսպէս ասած, իր յարութիւնը։

„Խօսողը Հ. Յ. Դաշնակցութեան պատգամաւորն է, մի կազմակերպութեան, որ 30 տարի պայքարել է Աբդիւլ-Համիդեան անօրինակ բռնակալութեան դէմ, միացրել է իր ճիգերը Երիտասարդ Թիւրքիոյ ու մակեդոնական յեղափոխականների ճիգերին և որ միաժամանակ մասնակցել է վերջին տարիներս Պարսկաստանի ու Կովկասի բոլոր յեղափոխական կռիւներին։

„Լսելով մեր եւրոպացի ընկերների խանդավառ ճառերը, որ ներբողում էին սոցիալիզմի փայլուն նուաճումները Արևմտեան երկրների մէջ, ես մտքով տարուում էի դէպի Արևելք, այն դժբախտ վայրերը — Թիւրքիա, Պարսկաստան — որոնք երկար դարերից ի վեր որրան են եղել ամենամռայլ բռնապետութիւնների։ Համեմատութիւնը քաջալերիչ չէ։ Սոցիալիստական նուաճումների մասին մեր երկրի մէջ ես տակաւին չեմ կարող խօսել, բայց կայ դրա փոխարէն մի ուրիշ պատկառելի վաստակ—պարլամենտական և տարրական ազատութիւնների նուաճումը մի երկրի մէջ, որ ընդամենը 3 տարի առաջ թուում էր յաւիտենօրէն դատապարտուած ամենաբիրտ, անասնացնող ստրկութեան, ուր դեռ երեկ տասնեակ միլիոնաւոր ազգաբնակութեան ճակատագիրը ենթակայ էր մի անօրինակ բռնաւորի քմահաճոյքին։

„Ո՞վ կարող էր դուշակել, քաղաքացիներ, ընդամենը 3 տարի առաջ, այդ նշանաւոր փոփոխութիւնը Աբդիւլ Համիդի կայսրութեան մէջ... Երիտասարդ Թիւրքիոյ—և աւելացնենք՝ Երիտասարդ Պարսկաստանի—այդ սրամտիչ աջողութիւնների առջև, պող, օր՝եկտիվ դիտողը ստանում է անխուսափելի տպաւորութիւն՝ որ մարդկութիւնը—ամբողջ մարդկութիւնը, առանց ցեղի ու մորթու խտրութեան—դիմում է հաստատուն ու անդիմադրելի առաջխաղացութեամբ դէպի տիեզերական Ռամկավարութեան պայծառ իդէալը։

„Մի նոր մարդկութիւն է բարձրանում այդ հեռաւոր ու մռայլ անապատներում — մահմեդական մարդկութիւնը, մինչև օրս այնքան ֆատալիստ, ճակատագրապաշտ ու ստրկապաշտ։ Եւ վերջին տարիների արևելեան անցքերը ունին, անտարակոյս, համաշխարհային նշանակութիւն, նրանք շահագրգռում են ամբողջ երկրագնդի մարդկութիւնը և արդէն իսկ անդրադառնում են ուրիշ մուսուլման երկրների մտայնութեան վրայ—Ասիայում և Աֆրիկայում, Հնդկաստան, Եգիպտոս, Մարոկկո։

„Հարիւր միլիոնաւոր այդ մահմեդական զանգուածների հոգեբանութեան մէջ կատարւում է ծանրակշիռ փոփոխութիւն։ Արթնանում է մի տեսակ կրօնական շովինիզմ, յղացւում են որոշ կարգի պօլիտիկոսների ուղեղներում համիսլամական ըմբոստ ու անհաշտ քաղաքականութեան ծրագիրներ։

„Դա մահմեդական զարթնումի բացասական կողմն է։ Կայ և դրականը։

„Այո, անշուշտ, օսմանեան յեղափոխութիւնը տուել է հանրային իշխանութեան ղեկը տիրող, „նուաճող“ ազգութեան ներկայացուցիչներին, որոնք լինելով հանդերձ փոքրամասնութիւն երկրի մէջ, ձգտում են—նման մայրաշէնների և աւստրիական գերմանացիներին — բռնագրել իրենց հեգեմոնիային, գերիշխանութեանը միւս „նուաճուած“ ազգութիւնները — հայեր, յոյներ, բուլգարներ, արաբներ-եայլն—որոնց դիտում են իբրև սոսկ կրօնական համայնքներ, և դա յիրաւի բացասական մի երևոյթ է։

„Բայց միւս կողմից, մենք ուրախ ենք, որ տարրական ազատութիւնների յաղթանակը հնարաւորութիւն է տալիս մեզ՝ կազմակերպել մեր ազատարար գործը բոլոր մինչև օրս հակամարտ ազգերի աշխատաւոր զանգուածների մէջ, քարոզել նրանց համերաշխութիւնը՝ աշխատանքի ու սոցիալիզմի աւետարանի շուրջը։

„Ինչ վերաբերում է ազգայնական վէճերին, մենք յուսով ենք, որ երիտասարդ Թիւրք կառավարութիւնը վաղ թէ ուշ պիտի փոխի իր ազգայնամոլ ընթացքը, ներշնչուելով պատմութեան դասերից, հրահանգուելով արևմտեան մեծ պետութիւնների փորձերից, իմանալով, որ ոչ մի հեգեմոնիա, ոչ մի ազգային գերիշխանութիւն չի աջողել ոչնչացնել ազգայնական դիտակցութիւնը „հպատակ“ ժողովուրդների մէջ։ Վկայ են Լեհաստանը և Իրլանդիան, Էլզաս Լոտարինգիան և ձեր դանիական Շլեզվիգ-Հոլշտայնը։

„Հեգեմոնիայի և բացառիկ օրէնքների րէժիմը դատապարտուած է վաղ թէ ուշ խոպառ խաւարելու և տեղի տալու ամենուրեք ազգայնական շատ թէ քիչ ընդարձակ ավտոնոմիային, ինքնօրինութեան։

„Մեր, սոցիալիստներիս, պարտքն է՝ փութացնել այդ անխուսափելի էվոլիւցիայի ընթացքը։ Մեր պարտքն է՝ ընդդիմադրել իշխողների ազգայնամոլ ձգտումներին՝ ազատ ու ինքնայորդոր համաձայնութիւնը աշխատաւոր ժողովուրդների... Եւ այսօր արդէն, բարեբախտաբար, լեգէօն են սոցիալիստ մտածողներն ու գործիչները, անգամ այդ յետամնաց երկրների մէջ—Սալոնիկից մինչև Հայաստան—մեծ մասամբ դեռ զուրկ նորադոյն կապիտալիզմից, բուրժուազիայից ու պրոլետարիատից. նրանք համարձակ պատեցնում են Ինտերնացիոնալի ու սոցիալիզմի դրօշը ստրկութեան ու թշուառութեան որրաններում...

„Իր ծրագրի զօրութեամբ, իր անցեալին ու աւանդութիւններին հաւատարիմ՝ Հ. Յ. Դաշնակցութիւնը իբրև ամենամեծ ժողովրդական կուսակցութիւնը բիբլիական Արարատի շուրջը փռուած երկրների մէջ, պիտի շարունակէ կոչ անել ու կազմակերպել աշխատաւոր ժողովուրդներին, մղել նրանց դէպի սոցիալիզմի վերջնական, ազատարար իդէալը։

„Թէ Թիւրքիայում, թէ Պարսկաստանում ու Կովկասում, մենք պիտի ձգտենք—ներշնչուած մեր աւստրիացի ընկերների օրինակից—հիմնել մեր փոքրիկ ինտերնացիոնալը, մէկը անհամար կորիզներից տիեզերական մեծ Ինտերնացիոնալի։

„Եւ դա կը լինի պակը ձեր ճիգերի, ձեր, եւրոպացի սոցիալիստ մտածողներ ու գործիչներ, դուք որ եղել էք մեր վարպետներն ու ներշնչողները՝ մեր երկար, յուսահատ, արիւնալի պայքարների մէջ՝ *)։

✱

Հետևեալ օրը—իսկական բացումը։ Հսկայական դահլիճը ծայրէ ծայր լի։ Եւ հնչում է երաժշտութիւնը, 500 հոգու

*) Աւստրիացի սոցիալիս պարագլուխները, բնականաբար, գոհ են, որ արեւելեան նորածին սահմանադրական երկրի մէջ մտածում են ընդօրինակել իրենց (աւստրիացոց) ներքին ազգամիջեան խաղաղականութեան մեթոդները։ Նեմեց, չեխ սոցիալիս. առաջնորդը, հրատարում է „Դաշնակցութեան“ ատենախօսին Պրագա, իր հայրենի մայրաքաղաքը, ի մօտոյ ծանօթանալու համար իրենց գործելակերպին՝ ազգամիջեան յարաբերութիւնների նկատմամբ։ Իսկ Պերներսորճեր, գերման-աւստրիացի սոց. առաջնորդ եւ մէկը Ռայխսրատի (աւստր. խորհրդարանի) փոխ-նախագահներից, հատուկ վերջանալուց յետոյ, դիմում է Վարանդեանին հարց ու փորձով Թիւրքիոյ կացութեան եւ մասնաւորապէս ազգային կնճռի վերաբերմամբ եւ զարմանք ու դժգոհութիւն է յայտնում, որ „Դաշնակցութեան“ պատգամաւորը իր հրապարակային ճառի մէջ համեմատութիւն էր դնում թիւրքական եւ գերման-աւստրիական օվէնների միջեւ՝ ազգային գերիշխանութեան ձգտումների տեսակէտից։ Երանի թէ, ասում է նա, երիտասարդ-թիւրք պօլիտիկոսներ մեր աւստրիական գերմանների չափ միայն լինէին օվէն, ազգայնամոլ... Մաջառների օրինակը համոզիչ է Պերներսորճերի համար, բայց աւստրիացիք (գերման-աւստրիացիք) նրա կարծիքով բնաւ չունին գերիշխանութեան, հեգեմոնիայի ախորժակներ. ընդհակառակը, նրա ասելով, աւելի շուտ՝ իրենք են նեղւում ուրիշ տարրերից եւ ձգտում են միայն պանպանել իրենց ազգային ինքնութիւնը։ Հետեւում է վէճ ազգային ինքնութեան եւ նրա անհրաժեշտութեան մասին.

„Ես ջերմ սոցիալիս եմ, սիրելի բարեկամ, բայց եւ ջերմ ազգային ու հայրենասէր“—շեշտում է Պերներսորճեր իր ուժեղ առոգանութեամբ։ „Սոցիալիս լինելով հանդերձ, ես երբէք չեմ մոռանում, որ պատկանում են գերմանական ազգին, բաժանում եմ նրա մտաւոր, կուլտուրական ժառանգութիւնը, բաժանում եմ նրա լաւ եւ վատ առանձնայատկութիւններ“։

— Այդ ինձ շատ լաւ յայտնի է—պատասխանում է Վ., եւ հայ սոցիալիսները միանգամայն համաձայն են ազգայնական այդ թէորիայի հետ. ապացոյց, որ „Դաշնակցութիւնը“ հրատարակել է հայերէն լեզուով ձեր, Պերներսորճերի, զրածը „Ազգային խնդրի“ մասին։ Իմ ակնարկածը պանգերմանիզմի հոսանքն է, որի գոյութիւնը Աւստրիոյ մէջ չէք կարող հերքել։“

Վէճը դրանով դադար առաւ եւ Պերներսորճեր հեռացաւ գոհ սրտով։ Հանելի անակնկալ էր նրա համար՝ իր զրածի հրատարակութիւնը հայերէն լեզուով։

բերաններից սրոտում են ռազմական, պրոլետարական երգերը։ Դահլիճը մերթ ընդ մերթ ձայնակցում է բեմին։ Տպաւորութիւնը զօրաւոր է, կախարդիչ, անմոռանալի. տպաւորութիւն՝ ուժի, գեղեցկութեան, վսեմութեան։ Ամբողջ դահլիճը ասես զառանցում է...

Երաժշտութիւնից յետոյ—բացման ճառերը։

Բեմը դատարկւում է 500 երգիչներից և այնտեղ փոխադրւում է Միջազգային Սոցիալիստական Բիւրօն, մէկ-մէկ կամ երկուական ներկայացուցիչներ իւրաքանչիւր երկրից, որ կազմում են Ինտերնացիօնալի Executif-ը, գործադիր մարմինը։ Նոյն հին անդամներն են. Ժորէս և Վայեան Ֆրանսիայից, Կաուցկի և Մոլկենբուր Գերմանիայից, Վանդերվելդ և Անգել Բելգիայից, Հիլկուիթ Ամերիկայից, Ադլեր և Նեմեց Աւստրիայից, Վան-կոլ Հոլլանդիայից, Բրանտինգ Շվեդիայից, Իգլեզիաս Սպանիայից, Կէյր Հարդի և Մակդոնալդ Անգլիայից, Դիման Լեհաստանից, Բակովսկի Ռումանիայից, Լենին և Ռուբանովիչ Ռուսաստանից և այլն։ Մի նոր տարր է միայն մուտք գործել այս տարւանից. Միջազգային Բիւրօի մէջ նստած է և Թիւրքահայաստանի („Դաշնակցութեան") ներկայացուցիչը։

Խօսում է նախ դանիական սոցիալիստների կողմից՝ Կոպենհագի քաղաքապետութեան անդամ Բանդ։ Ողջոյն է ուղղում կօնգրէսին և բարի գալուստ։ Յիշատակում է միջազգային համերաշխութեան մի քանի դրւագներ, երբ Դանիմարկի սոցիալիստները ապաստան են տուել գերմանացի իրենց գաղափարակից ընկերներին բիսմարկեան բացառիկ օրէնքների ժամանակներում (1878—1890), յիշում է և վերջին տարիների ռուսական տագնապը, երբ ցարական ճիրաններից փախած սոցիալիստները ապաստան ու աջակցութիւն էին գտնում նոյն Դանիմարկի սոցիալիստների մօտ։ Յիշում է, վերջապէս, 1899-ի դանիական մեծ բանւորական ճգնաժամը, (lock-out), երբ միւս երկրների սոցիալիստ կազմակերպութիւնները օգնութեան էին հասնում և նիւթապէս աջակցում դանիացի աշխատաւորներին։

Բանդին յաջորդում է Շտաունինգ, գլխաւոր լիդերը դանիական սոցիալիզմի։

„Մեր փոքրիկ երկիրը հպարտ է, ասում է նա, որ Ինտերնացիօնալը պատիւ է արել նրա մայրաքաղաքում գումարելու իր 8-րդ համաժողովը... Յուսով ենք, որ այստեղ ընդունելիք որոշումները մի քանի քայլ պիտի մօտեցնեն մեզ խաղաղութեան ու ազգերի եղբայրութեանը... Իւրաքանչիւր սոցիալիստ կուսակցութիւն պիտի պայքար է հարկաւ իր երկրի շրջանակներում, բայց բովանդակ աշխատաւոր ընդհանրութեան ազատագրումը պիտի կատարւի միջազգայնօրէն, բոլոր երկրների աշխատաւորների գործակցութեամբ՝ ընդդէմ տիեզերական կապիտալիզմի"։

Վանդերվելդ նախագահում է այդ ճառերին։ Եւ նա ինքը արտասանում է իսկական բացման ճառը, իբրև նախագահ Միջազգային Սոցիալիստական Բիւրօի։ Խորին, պատկառոտ ուշադրութիւն ամբողջ դահլիճի կողմից։ Հրաշակաւոր հռետորը տալիս է ամբողջական մի պատկեր համաշխարհային սոցիալիզմի զարգացման ու առաջադիմութեան։ Նախ—Դանիմարկ։ 1878-ին ընդամենը 700 ձայն ուներ սոցիալիզմը օրէնդրական ընտրութիւնների միջոցին, այսօր ձայների թիւը հասնում է 98,000-ի։ Բայց այդ բոլորը չէ։ Կան այդ փոքրիկ երկրում 120,000 աշխատաւորներ կազմակերպած սինդիկատների, արհեստակցական միութիւնների մէջ (բուռն ծափահարութիւն)։

Սոցիալիստական Ինտերնացիօնալին — շարունակում է Վանդերվելդ—յարած են այսօր 33 ազգութիւններ, այն է՝ Եւրոպայի բոլոր երկրները և հիւսիսային ու հարաւային Ամերիկայի ամենակարևոր երկրները, ապա և Եապօնիա, Հարաւ-Աֆրիկա, Աւստրալիա։

„Մենք մի ուժ ենք, յարաճուն ծաւալումի մէջ։ Գրեթէ ամեն տեղ շեշտւում է աճելութեան այդ պրօցէսը։ Բացառութիւն—վերջին երեք տարիներում—կազմում են Ֆինլանդիան, Ունգարիան, Ռուսաստանը և Արգենդինը, ուր նկատւում է յետախաղաց շարժում, այն էլ, հարկաւ, շնորհիւ արտաքին դրակօնական ճնշումների։ Անգլիայում Աշխատաւորական կուսակցութիւնը, իր մէկ ու կէս միլիօն կազմակերպած անդամներով, ունի պարլամենտում 40 պատգամաւոր։ Աւստրիայում սոցիալիստական մարմինը ունենալով պարլամենտի մէջ 87 ներկայացուցիչ, կազմում է Ինտերնացիօնալի ամենաուժեղ պարլամենտական հատուածը։ Սոցիալիստ ընտրողների թիւը շարունակւում է աճել անդիմադրելի կերպով։ Գերմանիայում, վերջին ընտրութիւններից ի վեր սոցիալիստ պատգամաւորների թիւը Ռայխստագի մէջ բարձրացել է 43-ից 52-ի, այնինչ սոց. ընտրողների թիւը ամբողջ երկրում մօտենում է արդէն չորս միլիօնի. և մեծ հաւանականութիւն կայ, որ առաջիկայ նոր քաղաքական ընտրութիւնների միջոցին—գալ տարի—Ռայխստագի սոցիալիստական հատուածը կը կրկնապատկւի, կը բարձրանայ 52-ից մինչև 100 հոգի։

Խոշոր առաջադիմութիւններ է արել շարժումը նաև՝

1. Ֆրանսիայում, ուր վերջին ընտրութիւնների միջոցին պարլամենտի սոցիալիստական թևը 53 հոգուց բարձրացաւ յանկարծ 75-ի...

2. Բելգիայում, ուր նոյն սոց. հատուածը պարլամենտում աւելացաւ ամբողջ 10 հոգով (25-ից 35)։

3. Իտալիայում, ուր դարձեալ վերջին օրէնդրական ընտրութիւնների ժամանակ—երկու տարի առաջ—պարլամենտի սոցիալիստ անդամների թիւը գրեթէ կրկնապատկւեց բարձրանալով 23-ից մինչև 43...

Անվիճելի, անդիմադրելի պրոգրէս, յառաջխաղացութիւն—ամենուրեք... „Կարմիր ուրւականն" է, որ հետզհետէ սեղմում է իր զօրաւոր ու ազատարար ճանկերի մէջ ամբողջ կապիտալիստ երկրագունդը, հին ու փտող, կազմալուծւող աշխարհը, որ դատապարտւած է վաղ թէ ուշ կործանւելու և որի աւերած-շէնքերի վրայ այժմից արդէն հրաշակերտւում է սոցիալիզմի, համայնականութեան ու հաւասարութեան նոր աշխարհը։

Վանդերվելդ գծում է վառ ու ոգևորիչ գոյներով սոցիալիստական առաջխաղացութեան ընդհանուր պատկերը, ապա անցնում է շարժման վետերաններին ու մեռելներին, յիշատակում է Անդրեա Կոստայի (իտալական սոց. պարագլուխ) ցաւագին մահը, մտաբերում է Զինդերին, որ մինչև օրս գրեթէ միշտ նախագահել է Ինտերնացիօնալի համագումարներին, բայց որ այժմ կիսով չափ արդէն անդամալուծւել է ծերութեան ու հիւանդութեան ճիրաններում... յիշում է, վերջապէս, Բեբելին, որ նոյնպէս անցել է արդէն փառահեղ ինվալիդների շարքը...

Յուզմունքի, խրախոյսի, ոգևորութեան բուռն ծափերը ընդգծում են այդ թանկագին անունների յիշատակութիւնը։

Այնուհետև Միջազգային Բիւրօի քարտուղար Հայման առաջ է բերում անթիւ հեռագիրներն ու ուղերձները, ըստացած աշխարհի այլևայլ ծայրերից. երկուսը Հ. Յ. Դաշնակցութեան երկրի մարմինների կողմից։ Որովհետև ընթերցումը ամբողջ ժամեր պիտի տևէր, ուստի որոշւում է սահմանափակւել հեռագիրների լոկ տղբիւրները յիշատակելով. նրանք բոլորը կը հրատարակւին առաջիկայում Բիւրօի խոշոր հաշուետուի մէջ։

Դիմում են օրակարգին։ Կօնգրէսին հերթով պիտի նախագահեն սկանդինաւեան երեք երկրների ներկայացուցիչները—Դանիմարկի, Շվեդիայի և Նորվեգիայի։

Կօնգրէսի քննութեանը առաջադրւած են հետևեալ հիմնական խնդիրները.

1. Կօոպերատիվների (գործակցական ընկերութիւններ) և քաղաքական կուսակցութիւնների յարաբերութիւնը։

2. Անաշխատութեան խնդիրը (chômage)։

3. Իրաւարար ատեաններ և զինաթափութիւն։

4. Աշխատաւորական ապահովութեան օրէնքների միջազգային արդիւնքները։

5. Ինչպէ՞ս կազմակերպել միջազգային ցոյց մահւան պատժի դէմ։

6. Ինչպէ՞ս իրագործել ըստ կարելւոյն շուտ՝ միջազգային կօնգրէսների որոշումները։

7. Ինչպէ՞ս կազմակերպել միջազգային համերաշխութիւնը։
8. Մի շարք բեզոլիւսիօնների քննութիւն։

Այդ վերջին յօդուածի մէջ մտնում է.

1. Արհեստակցական միութեան խնդիրը Աւստրիայում։
2. „Դաշնակցութեան" առաջադրած բանաձևը ռուս քաղաքականութեան նկատմամբ՝ Պարսկաստանում և Թիւրքիայում։
3. Բանաձև-բողոք Ֆինլանդիայի վերաբերմամբ։

Ընտրւում են 5 մասնաժողովներ, որոնց և բաշխւում է այդ ընդարձակ նիւթը։

Մասնաժողովների մէջ հարցերը մանրամասնօրէն ծեծւելուց յետոյ, անցնում են ընդհանուր, համագումար ժողովների մէջ, ուր և վերջնականապէս քւէարկւում են ընդունւած բեզոլիւսիօնները։

Այստեղ, բնականաբար, չենք կարող կանգ առնել մասնաժողովների այդ ընդարձակ աշխատանքի վրայ, որ ամբողջ հատորի նիւթ կարող է լինել։

Չենք կանգ առնի և Միջազգ. Սօց. Բիւրօի նիստերի վրայ, որոնք տեղի էին ունենում ամեն օր, ժամը 9-ից մինչև 12-ը, կանոնաւորելու և ընթացք տալու համար Կօնգրէսի աշխատանքներին (Համագումար-ժողովները տեղի էին ունենում կէսօրից յետոյ)։

Առաջ բերենք քւէարկւած մի քանի էական որոշումների պարունակութիւնը։

Մեծ հետաքրքրութիւն է յարուցանում կօօպերատիվների և սօցիալիստ կուսակցութիւնների յարաբերութեան խնդիրը։ Երկու ծայրայեղ կարծիքներ բախւում են իրար։ Մէկը ներկայացնում է ֆրանսիական մարքսիստների պարագլուխ Ժիւլ Գեդ, որ առաջարկում է կարևորութիւն չը տալ գործակցական ընկերութիւններին, ժխտում է նրանց արժէքը բուն սօցիալիստական, դասակարգային կուսի տեսակէտից։

Միւսը բելգիացի Անզէլ, ընդհակառակը ծանրակշիռ կարևորութիւն է տալիս այդ գործակցական ընկերութիւններին (սպառողական կամ արդիւնաբերական) և բուն իսկ աշխատաւորութեան դասակարգային կուսի տեսակէտից՝ յանձնարարում է ամենասերտ յարաբերութիւններ ստեղծել կօօպերատիվների և սօցիալիստ-քաղաքական կուսակցութիւնների միջև։ Անշուշտ, ասում է Անզէլ, իբրև առևտրի ու դրամի հաստատութիւններ՝ այդ գործակցական ընկերութիւնները կրում են անհրաժեշտաբար կապիտալիստական արատաւոր կարգերի դրոշմը, բայց հարկ է աստիճանաբար բարելաւել, կատարելագործել նրանց և շահագործել աշխատաւորական հանուր պայքարի համար։

Կօնգրէսը միջին ճանապարհն է բռնում։ Նա ոչ տրամադիր է չափազանցնել կօօպերատիվների արժէքը, ոչ էլ նսեմացնել այն։

Ահա կօնգրէսի որոշումը.

Նկատելով, որ սպառողական գործակցական ընկերութիւնները չեն հայթայթում միայն անմիջական նիւթական շահ իրենց անդամներին, այլ և սահմանւած են՝

1. Ամեցնելու աշխատաւոր դասակարգի ուժը, վերացնելով միջնորդներին կամ մասնաւոր առևտրականներին և ստեղծելով սեփական արտադրողական գործառնութիւններ՝ կազմակերպւած սպառողների համար.
2. Բարելաւելու աշխատաւորական կեանքի պայմանները.
3. Դաստիարակելու աշխատաւորներին, վարժեցնելու նրանց՝ ինքնագլուխ, անկախ վարելու իրենց սեփական գործերը, և այդպիսով օգնելու նրանց՝ պատրաստելու արդիւնագործութեան ու փոխանակութեան միջոցների ռամկավարացումն ու համայնացումը։

Նկատելով, որ կօօպերացիան մենամենակ անկարող է իրականացնել սօցիալիզմի նպատակը, այսինքն նւաճել քաղաքական, հանրային իշխանութիւնը, որի միջոցով միայն հնարաւոր է համայնացնել, հաւաքական սեփականութիւն դարձնել աշխատանքի բոլոր գործիքները, արդիւնաբերութեան բոլոր միջոցները։

Միջազգային Սօց. Համագումարը — զգուշացնելով հանդերձ աշխատաւորներին ընդդէմ նրանց, որոնք պնդում են, թէ կօօպերացիան ինքն իրեն կը բաւէ—յայտարարում է, որ աշխատաւոր դասակարգը ամենամեծ շահ ունի՝ դործադրելու իր պայքարի մէջ այդ կարևոր զէնքը, որի անունն է գործակցական, կօօպերատիվ շարժում։

Նա—Համագումարը—պարտաւորեցնում է բոլոր սօցիալիստներին և արհեստակցական միութիւնների (սինդիկատների) բոլոր անդամներին՝ մասնակցել գործօն կերպով կօօպերատիվ շարժման, որպէսզի զարգացնել նրանց մէջ սօցիալիզմի ոգին և հսկել, որ կօօպերատիվ հիմնարկութիւնները չը շեղւին իրենց դերից. իսկ այդ դերն է՝ դաստիարակել աշխատաւորութիւնը, արծարծել նրա մէջ համերաշխութիւն։

Սօցիալիստ-կօօպերատօրները պարտաւոր են ամեն միջոց ձեռք առնել, որպէսզի՝

1. „Ցաւելեալ գումարները" կամ եկամուտները չը բաժնին բացառապէս անդամների միջև, այլ և որ նրանց մի մասը յատկացւի ֆօնդի—լինի կօօպերատիվ միութիւնների ձեռքով, լինի ֆէդերացիաների (կօօպ. դաշնակցութիւնների) —մի ֆօնդ, որ պիտի ծառայէ անդամների ապահովութեան համար, որ պիտի գործադրւի՝ կօօպերատիվ արդիւնաբերութիւնը լայնացնելու, զարգացնելու նպատակով, մի ֆօնդ, վերջապէս, որ պիտի նպաստէ միաժամանակ աշխատաւոր դասակարգի կրթութեանն ու դաստիարակութեանը։
2. Սօցիալիստ կօօպերատօրները պիտի հսկեն ապա՝ որ օրավարձի ու աշխատանքի պայմանները կօօպերատիվ հիմնարկութիւնների մէջ սահմանւին համաձայնութեամբ արհեստակցական միութիւնների կամ սինդիկատների հետ։

Կօնգրէսը յայտարարում է նաև, որ կապիտալիզմի դէմ մղելիք պայքարի մէջ աշխատաւոր դասակարգի շահը մեծապէս պահանջում է, որ սինդիկատները (արհեստակց. միութիւնները), կօօպերատիվները (գործակցական միութիւններ) և Սօցիալիստ կուսակցութիւնը (սօցիալիզմի քաղաքական թեւը), պահպանելով հանդերձ իւրաքանչիւրը իր ավտոնոմիան, ինքնօրինութիւնը, միացած լինին միշտ աւելի և աւելի սերտ կապերով"։

*

Աշխատաւորական օրէնսդրութեան վերաբերեալ բեզոլիւսիօնի մէջ առած է.

Կապիտալիստական արդիւնագործութեան հետ օրաւուր աճող բանւորական շահագործումը ստեղծել է մի կացութիւն, ուր բացարձակապէս անհրաժեշտ է կեանքն ու առողջութիւնն ապահովող, հովանաւորող օրէնսդրութիւն։ Ոչ մի երկրում այդ հովանաւորող օրէնքները չեն գոհացնում, գէթ մօտաւորապէս, գոյութիւն ունեցող կարիքները. մինչդեռ, սակայն, նրանք կարող են որոշ չափով գոհացիլ, առանց վնասելու ինդուստրիային, արդիւնաբերութեանը։

Կօնգրէսը վերյիշում է հետևեալ հիմնական պահանջները, աշխատաւորական օրէնսդրութեան վերաբերեալ, ընդունւած տակաւին 1889-ի Պարիզեան Համագումարի մէջ.

1. Ութ ժամեայ աշխատանքի օր։
2. Արգելել երեխաների աշխատանքները, 14 տարեկանից վար։
3. Վերացնել գիշերային աշխատանքը, բացի այն գործառնութիւններից, որոնք անհրաժեշտ են հանրային բարօրութեան համար։
4. Առնւազը 36 ժամ շաբաթական ընդմիջեալ հանգստութիւն, բոլոր աշխատաւորների համար։
5. Ապահովել հաւաքումների ու դաշնակցութիւնների իրաւունքը (*droit de coalition*).
6. Աղդու վերահսկողութիւն բոլոր արդիւնաբերական ու երկրագործական գործառնութիւնների մէջ—աշխատակցութեամբ բանւորական լիազօրների։

Թէպէտև Պարիզի այդ պատմական սօցիալիստական ժողովը (առաջին համագումարը Նորագոյն Ինտերնացիոնալի) առաջ բերեց ուրիշ միջազգային համաժողովներ, գումարւած կառավարութիւնների ձեռքով (1890-ին Բերլինում, Վիլհելմ կայսեր նախաձեռնութեամբ և 1906-ին Բերնում)— այնուամենայնիւ ընդհանրապէս այն ժամանակից ի վեր դեռ շատ քիչ բան է արւած աշխատաւորական ապահովութեան համար. և այդ այն պատճառով՝ որ իշխող, ունևոր դասա-

կարգերը ընդդիմանում են աշխատաւորական բէֆորմներին, երկիւղ կրելով իրենց դասակարգային շահերի համար...

Բանւորական օրէնսդրութեան աշխարհում որևէ առաջադիմութիւն, որևէ նւաճում կարող է կատարւել միմիայն իրենց աշխատաւորների ճիգերով։

Ուստի Կոնգրէսը հրաւիրում է բոլոր երկրների աշխատաւորներին—քաղաքային արդիւնաբերութեան, առևտրի, երկրագործութեան և բոլոր միւս ճիւղերի մէջ—յաղթահարել իշխող դասակարգերի դիմադրութիւնը և անդուլ պրօպագանդով ու յարաճուն զօրաւոր կազմակերպութեամբ նւաճել օրէնքներ, աշխատաւորի կեանքն ապահովող։

*

„Միջազգային համերաշխութեան“ բանաձևը յայտարարում է.

Կոպենհագի Միջազգային Սոցիալիստական կոնգրէսը՝

Ղեկավարելով աշխատաւորական շարժման գերազանցապէս միջազգային բնոյթը,

Եւ յիշատակելով գործօն համերաշխութեան աւանդութիւնները հին Ինտերնացիոնալի օրերից ի վեր (1864-ից),

Կոչ է անում բոլոր երկրների աշխատաւորներին, որպէսզի նրանք չը զլանան կատարել համերաշխութեան իրենց պարտքը ամեն անգամ, երբ որևէ երկրի մէջ պայթում է մի մեծ կռիւ Աշխատանքի ու Կապիտալի միջև և երբ այդ երկրի աշխատաւորները իրենց սեփական ուժերով անկարող են տևողաբար պատերազմել թշնամու հետ։ Ուրիշ երկրների աշխատաւորական կազմակերպութիւնները պէտք է նման պարագաներում՝ օգնութեան դան պայքարողներին իրենց նիւթական նպաստներով։

Ապա բանաձևը յիշատակում է երկու մեծ հակամարտ ուժերը. մի կողմից գործատէրերի, կապիտալիստների ազգային միութիւնն, միջազգային համերաշխութիւնը, հսկայական տրէստներն ու կարտէլները, միւս կողմից աշխատաւորական ազգային ու միջազգային միութիւնը... Երկու մեծ ուժեր հետզհետէ կենտրօնանալով, դասակարգային պայքարը ընդունում է միշտ աւելի ընդարձակ ծաւալում... „Անհրաժեշտ է կենտրօնացնել ամբողջ երկրագնդի աշխատաւոր դասակարգերի ուժերը, որպէսզի նրանք ապագայում օգնութեան դան որևէ երկրի կամ որևէ ճիւղի աշխատաւորներին, որոնց դէմ կը ծառանայ իր սպառնալին ուժով՝ միացեալ կապիտալիզմը“...

Կոնգրէսը յանձնարարում է՝ ստեղծել միշտ աւելի սերտ, մտերիմ յարաբերութիւններ արհեստակցական միութիւնների միջև, թէ ամեն մի երկրում, և թէ միջազգայնօրէն։ Նա հրահանգում է միւս կողմից նոյնպիսի մտերմական կապեր հաստատել տարբեր երկրների սոցիալիստական մամուլների միջև։ Երբ որևէ երկրի մէջ կը պատրաստւի կամ կը պայթի մեծ ընդհարում, այդ երկրի սոցիալիստ օրգանները պարտաւոր են շուտընդփոյթ հաղորդել ճշգրիտ տեղեկութիւններ կացութեան մասին իրենց արտասահմանեան պաշտօնակիցներին, որոնք իրենց հերթին պարտաւոր են անմիջապէս շահագործել այդ տեղեկութիւնները, համակրութիւն յարուցանել աշխատաւորական խաւերի մէջ և փարատել բուրժուական աղբիւրներից տարածւող թիւրիմացութիւններն ու ստայօդ առասպելները, որոնք գալիս են միշտ մոլորեցնելու հանրային կարծիքը։

Այդ տեսակէտից իսկ ստիպողական անհրաժեշտութիւն է—ասում է Ինտերնացիոնալը—ունենալ ամեն տեղ սոցիալիստական ուժեղ ու ազդեցիկ մամուլ, ազատագրելու համար ժողովրդային զանգւածները կապիտալիստական մամուլի ազդեցութիւնից ու ներշնչումներից։

*

Միլիտարիզմի և պատերազմների առթիւ Կոպենհագի Կոնգրէսը վերյիշում է անցեալ որոշումները։ Պատերազմի վտանգը չի վերանում, ասում է նա. և այդ վտանգի հետ շարունակ աճում է զինւորումը բոլոր երկրներում։ Ինտերնացիոնալը վերստին յայտարարում է՝

Որ այլևայլ երկրների աշխատաւոր ժողովուրդները չունին իրար մէջ հակառակութիւններ, չունին պատերազմելու ցանկութիւն. որ ներկայիս պատերազմները առաջ են գալիս կապիտալիզմից, միջազգային տնտեսական մրցութիւնից, որով բռնւած են կապիտալիստ պետութիւնները համաշխարհային վաճառականոցում. պատերազմների պատճառ է հանդիսանում և միլիտարիզմը (միլիոնաւոր կանգուն բանակների գոյութիւնը), որ ծառայում է իբրև տիրապետութեան հզօրագոյն գործիք բուրժուազիայի ձեռքում՝ ստրկացնելու համար աշխատաւոր դասակարգերը։

Պատերազմները իսպառ կը վերանան միայն այն ժամանակ, երբ կը վերանայ ինքը կապիտալիստ հասարակութիւնը։ Աշխատաւոր դասակարգը, որ տանում է իր ուսերի վրայ պատերազմի ամենածանր բեռը, որ ամենից շատ է տառապում նրանից, բնականաբար և ամենից աւելի շահագրգռւած է նրա անհետացումով։ Ամբողջ աշխարհի սոցիալիստ աշխատաւորութիւնը այդպիսով հանդիսանում է միակ հաստատուն երաշխաւորը միջազգային խաղաղութեան։ Ահա թէ ինչու Կոնգրէսը վերստին պարտաւորեցնում է սոցիալիստ կուսակցութիւններին՝ բացատրել, լուսաբանել ամենուրեք պատերազմի իսկական պատճառները, լուսաւորել այդ կողմից մանաւորապէս երիտասարդութիւնը և կրթել ու դաստիարակել այդ վերջինը ժողովուրդների միջազգային եղբայրութեան ոգով։

Եւ հրահանգելով հանդերձ սոցիալիզմի բոլոր պարլամենտական հատւածներին՝ մերժել սիստեմատիկաբար պատերազմի ֆինանսական միջոցները, Կոնգրէսը միաժամանակ պարտաւորեցնում է նրանց՝

1. Պահանջել անդադար միջազգային, միջկետական բոլոր ընդհարումների խաղաղ լուծումը՝ հաշտարար ատեանների միջոցով,

2. Պահանջել շարունակաբար ընդհանուր զինաթափութիւն։

3. Պահանջել, որ վերացւի գաղտնի դիւանագիտութիւնը (*diplomatie secrète*) և հրատարակւին կառավարութիւնների միջև կապած և կապւելիք բոլոր դաշնագիրները։

4. Պահանջել, վերջապէս, բոլոր ժողովուրդների ինքնօրինութիւնը, ավտոնոմիան և պաշտպանել այն, ընդդէմ ամեն ճնշման ու ռազմական յարձակման։

Իսկ ի՞նչ անել, երբ պատերազմի ուրուականը արդէն ցցւած է ժողովուրդների առջև, երբ պատրաստւում է անխուսափելիօրէն ընդհարում...

Այդ պարագայի համար Կոնգրէսը վերստին շեշտում է Շտուտգարտի համաժողովի վճիռը.

„Երբ պատերազմը կը սպառնայ պայթիլ երկու երկրների միջև — նրանց աշխատաւոր տարրերը և պարլամենտական հատւածները պատրաստ են ի գործ դնել իրենց բոլոր միջոցները — Միջազգային Բիւրօի օգնութեամբ — արգելելու համար ընդհարումը. այդ միջոցները տարբերւում են, նայեած այս կամ այն երկրի դասակարգային պայքարի խստութեան և ընդհանուր քաղաքական կացութեան։

„Երբ, այնուամենայնիւ, ընդհարումը տեղի կունենայ — սոցիալիստ աշխատաւորութիւնը պարտաւոր է փութով միջամտել, դադարեցնելու համար և շահագործել այդ նպատակով՝ պատերազմի յարուցած տնտեսական ու քաղաքական տագնապը, յուզելու համար ազգաբնակութեան խորունկ շերտերը և փութացնելու կապիտալիստական տիրապետութեան դահավիժումը“։

*

ԱՒՍՏՐԻԱԿԱՆ ՎԷՃ։ Երկար ու աղմկալի վիճաբանութիւն յարուցեց աւստրիական սինդիկատների միութեան հարցը, որ շօշափում է ազգայնական կնճիռը այդ բազմացեղ պետութեան մէջ։ Աւստրիայի սոցիալիստական կուսակցութիւնը, ինչպէս յայտնի է, ունի ապակենտրոն կազմակերպութիւն, հիմնւած առանձին ազգայնական ճիւղաւորութիւնների ինքնօրինութեան, ավտոնոմիայի սկզբունքի վրայ։ Այդպէս — քաղաքական կազմակերպութիւնը։ Իսկ տնտեսականը (արհեստակցականը կամ սինդիկատային կազմութիւնը) եղել է մինչև օրս կենտրոնական, քանի որ կենտրոնացման սիստեմը այդ ճիւղի մէջ համարւել է աւելի ձեռնտու և նպատակայարմար՝ կապի-

տալիզմի տնտեսական գրոհներին աջողութեամբ դիմադրելու համար։ Ամբողջ Աւստրիայի արհեստակցական շարժումը ղեկավարուել է Վիեննայից, ուր կենտրոնի նիստն է։

Սակայն վերջերս չեխերի մէջ առաջացել է անջատական շարժումն։ Ծնունդ է առել տասնեակ հազարաւոր չեխ արհեստակցութեան մէջ մի հատուած (փոքրամասնութիւն), որ կամենում է կազմակերպուել և ղեկավարուել ինքնագլուխ, իր ազգային շրջանակներում։ Կենտրոնը լինի ազգային—ոչ միջազգային. նրա գործելավայրը լինի Պրագան—ոչ Վիեննան։

Ազգային յաւիտենակա՞ն պրոբլեմը... Չեխ սոցիալիստները, հրաժարուելով հանդերձ նացիոնալիզմի, նեղ հայրենասիրութեան տենչանքներից, ի միջի այլոց պատճառաբանում են, որ իբենց ցանկութիւնն է՝ որ չեխ հարուստ սինդիկատների տարեվճարները, դրամական խոշոր նպաստները գործադրուեն յօգուտ նոյն չեխ աշխատաւորութեան շարժումների, բարգաւաճման, որ նրանք թափուին չեխ սոցիալիստ կուսակցութեան գանձարանը և ոչ թէ ուղղուին Վիեննա, միջազգային դրամարկղը։

Չեխերի առաջարկը, սակայն, հանդիպեց գրեթէ ամբողջ կոնգրէսի ուժգին դիմադրութեան և միանգամայն ապարդիւն անցան չեխ պարագլուխ Նեմեցի փաստաբանական փայլուն ճառերն ու միջազգայնական հաւաստիացումները։ Կոնգրէսը վճռեց, որ տնտեսական, արհեստակցական կազմակերպութիւնը բոլոր երկրներում պէտք է լինի մէկ, ներդաշնակ, անբաժանելի։ Այդպէս են հրահանգում և մի շարք անցեալ կոնգրէսները։

Այդ աղմկայոյզ որոշումն անցաւ գրեթէ միաձայն, ընդդէմ միմիայն չեխերի մի հատուածի։ Չեռնպահ մնացին Ֆինլանդացիք և դաշնակցականները։

*

Անցնենք այժմ V-րդ մասնաժողովի խնդիրներին։ Միջազգային քաղաքական բնոյթ ունեցող մի շարք բանաձևեր դրուած էին Ինտերնացիոնալի քննութեան։ Մի երկուսը յիշեցինք արդէն սկզբում։ Միաձայն, առանց վիճաբանութեան ընդունուում է դաշնակցականների բանաձևը — ցարիզմի արևելեան քաղաքականութեան վերաբերմամբ — որ հետևեալն է.

Նկատելով՝

Որ պարսկական յեղափոխութեան սկզբից ի վեր և հակառակ անգլո-ռուսական համաձայնութեան *), ցարի կառավարութիւնը բոլոր միջոցներն ի գործ է դրել վիժեցնելու համար սահմանադրական շարժումը.

Որ շատ յաճախ նա մինչև իսկ միջամտել է զինուած ուժով, իր սահմաններն ապահովելու և իր հպատակները պաշտպանելու պատրուակով, բայց իրօք պարսիկ ռամկավարների ճիգերը խորտակելու բացայայտ նպատակով։

Որ ռուս զօրքերն ու ոստիկանութիւնը Ատրպատականում բացարձակապէս հալածել են յեղափոխականներին և Հ. Ց. Դաշնակցութեանը պատկանող վարիչներին.

Որ այսօր և տակաւին ռուս կառավարութիւնը իր բազմաթիւ գաղտնի գործակալների միջոցով շարունակում է իր դաւերն ու գրգռումները Պարսկաստանում։ Որ ռուսական զօրքերի մի մասը դեռ մնում է պարսից հողի վրայ, չը նայած Մէջլիսի և Թեհրանեան կառավարութեան կրկնուած բողոքներին.

Նկատելով՝

Որ միևնոյն ռուսական կառավարութիւնը եռանդով „աշխատում է" Թիւրքիայում, մասնաւորապէս Թիւրքաց Հայաստանում, ուղարկում է այնտեղ գործակալներ, գրգռելու համար յետադիմական, աւատապետական քիւրդ տարրերը հայերի դէմ, խռովութիւններ ձգելու և հակայեղափոխութեան փոթորիկը յարուցանելու նպատակով.

Որ Պօլսի ռուսական դեսպան Չարիկովը և Էրզրումի ռուս հիւպատոսը ստացել են հրահանգներ նոյն ուղղութեամբ.

Նկատելով մի խօսքով՝

Որ ցարիզմը, լինելով յաղթական՝ իր ազատասպան արշաւանքում սեփական պետութեան մէջ և խորապէս ատելով սահմանադրական կարգուսարքը իր սահմանների վրայ, ձգտում է սիստեմատիկաբար, յամառութեամբ՝ վերականգնելու բռնակալ ռէժիմը Պարսկաստանում ու Թիւրքիայում.

Հանդէպ այդ ծանր իրողութիւնների, որ կազմում են մշտնջենական վտանգ Արևելքի երկու երիտասարդ ռասկավարութիւնների համար՝

Կոպենհագի Համագումարը կոչ է անում Եւրոպայի սոցիալիստական կուսակցութիւններին, օգտուելու իրենց տրամադրութեան ներքոյ գտնուած բոլոր միջոցներից՝ ցարիզմի այդ յետադէմ շահատակութիւններին վերջ դնելու նպատակով" *)։

*

Սալոնիկի աշխատաւորական կազմակերպութիւնը առաջադրել է իր կողմից բողոքի հետևեալ բանաձևը, բուլգար սոցիալիստների միջոցով.

Ի նկատի առնելով

1. Եւրոպայի կապիտալիստական պետութիւնների գաղութային քաղաքականութիւնը հանդէպ Թիւրքիոյ.

2. Սահմանադրութեան հրատարակումը, որ տալիս է իւրաքանչիւրին Մարդու և Քաղաքացու իրաւունքներ.

3. Սինդիկատային և գործադուլային իրաւունքների բռնաբարումը Թիւրքիոյ կառավարութեան կողմից.

4. Աշխատաւորական դասակարգի հանդէպ մղուած միահեծան քաղաքականութեան աւերիչ հետևանքները.

Միջազգային Սոցիալիստական Կոնգրէսը յայտարարում է, որ

1. Միմիայն բալկանեան պետութիւնների ռամկավարական համաձայնութիւնը (entente démocratique) կարող է պայքարել ընդդէմ եւրոպական պետութիւնների կապիտալիստական և գաղութային քաղաքականութեան։

2. Միմիայն ընդարձակ ազատութեան շնորհումը կարող է նպաստել Նոր Թիւրքիոյ զարգացման։

3. Եւ ողջունում է Թիւրքիոյ մէջ ծնունդ առնող սոցիալիստական շարժումը։

Մի քիչ տարտամ ու անորոշ է սալոնիկցիների այս բանաձևը և նրա առթիւ տեղի ունեցաւ բուռնական երկար վիճաբանութիւն։ Առաջարկւում են բարեփոխումներ (amendement)։ Վիճում են բալկանեան պետութիւնների դաշնակցութեան մասին, վիճում են և այն մասին, թէ արդեօք մի այդպիսի բանաձև ունի՞ որևէ առնչութիւն սոցիալիստական կոնգրէսի հետ, գալի՞ս է նա սոցիալիստներից։ Էլլենբոգեն, Բապպոպորտ և ուրիշներ տրամադիր էին բացասել այդ։ Պոլ Լուի առաջարկում էր „ռամկավարական"

*) Անգլիացի սոցիալիստներ առաջարկեցին փոխել վերջին դարձուածը՝ „հակառակ անգլո-ռուսական համաձայնութեան"։ Նրանց կարծիքով, Անգլիան իր համաձայնութեան դաշնագրով հնէնց լիազորութիւն էր տալ Ռուսաստանին՝ խեղդելու պարսկական յեղափոխութիւնը եւ յօգտագործելու Պարսկաստանը...

Երկար չը վիճաբանելու համար, ընդունուեց անգլիացիների առաջարկը՝ գրել ի տեղի „հակառակ անգլո-ռուսական համաձայնութեան" —„հետեւանօք անգլո-ռուսական համաձայնութեան" (*just in consequence of the Anglo-Russian agreement*)։

*) Փորիկ խլրտում յարուցեց այդ անմեղ բանաձեւն անգամ ռուս սոցիալ-դեմօկրատների պատգամաւորութեան մէջ։ Առաջարկը „Դաշնակցութեան" կողմից էր գալիս... պէտք էր ուրեմն խոշորացոյցով գնել նրա իւրաքանչիւր բառն ու տառը։ Եւ ահա սկսնդալ... Բանաձեւը խօսում է ինչ որ դաշնակցական „վարիչների" մասին ատրպատականի շարժման մէջ, յիշում է ռուս կառավարութեան հալածանքը... դարձեալ դաշնակցականների դէմ... Սոցիալ-դեմօկրատները յուզուած դիմումներ են անում մասնաժողովի նախագահին, պահանջում են „Դաշնակցութեան" պատգամաւորից ուղղել բանաձեւը... „Ինչո՞ւ չեն յիշած Թաւրիզի սոցեալ-դեմօկրատները", ինչո՞ւ չի յիշած, որ ռուս կառավարութիւնը նրանց էլ է հալածել։ Ինչո՞ւ է շարժման ղեկավարութիւնը վերագրած „Դաշնակցութեան" (ս.-դ.-ները անպատճառ այդ ձեւով էին ուզում մեկնաբանել բանաձեւի մի դարձուածը)— եւայլն եւայլն։ Եւ ահա, ի վերջոյ, ս.-ր.-ական պատգամաւոր Ավկսենտիեվի միջոցով սոցիալ-դեմօկրատներ սպառնում են „Դաշնակցութեան" ներկայացուցչին, որ մտադիր են խնդիրը բարձրացնել Համագումար-Ժողովի մէջ, „մերկացնել" այնտեղ Հ. Ց. Դաշնակցութեան կատարած դերը Պարսկաստանում, յայտարարել ի լուր Ինտերնացիոնալի, որ դաշնակցական զօրավար Եփրեմը վերջերս հրաց-սնազարկ է արել սոցիալ-դեմօկրատ ռազմիկներին եւայլն։

Բոլոր դիմումներն ապարդիւն անցան եւ Համագումար-Ժողովի մէջ էլ սոցիալ-դեմօկրատները խոնարհութեամբ հրաժարուեցին իրենց „սենսասիօն-մերկացումներից"։

բառի տեղ մտցնել բանաձևի մէջ „սոցիալ-ռամկավարական“, կամ որ միևնոյն է՝ սոցիալիստական... Եւայլն և այլն։

Թիւրքիոյ և բալկանեան պատգամաւորութիւնների կողմից խօսում են՝ Վարանդեան և Ռակովսկի։

Առիթից օգտուելով, „Դաշնակցութեան“ պատգամաւորը համառօտակի բնորոշում է Թիւրքիոյ նորածագ սոցիալական շարժումը։

„Չեմ մտնի, ասում է նա, բալկանեան դաշնակցութեան ծանր պրոբլեմի քննութեան մէջ, մի պրոբլեմ՝ որի իրականացումը թերևս նոյնքան հեռաւոր է, որքան եւրոպական պետութիւնների դաշնակցութիւնը (confédération)։ Դա չի արգելում, ի հարկէ, որ մենք սկզբունքով ընդունենք այն։ Ես միայն կը յանձնարարեի՝ չը մտցնել բանաձևի մէջ այնպիսի բառեր („սոցիալիստ“—ի տեղի „ռամկավար“), որոնք զրկում են մեր բէզօլիւսիոնը գործնական իմաստից և նետում այն՝ պլատոնական բաղձանքների աշխարհը։ Պահպանենք, ուրեմն, „ռամկավար“ բառը (entente démocratique), ինչպէս որ գրել են մեր Սալոնիկի ընկերները։

Դրա հետ միասին չեմ կարող չը նկատել այն փոքր ինչ սառը, սկեպտիկ, թերահաւատ վերաբերումը, որ արտայայտւում է այս ժողովի մէջ դէպի Թիւրքիոյ աշխատաւորական շարժումը, դէպի Սալոնիկի կազմակերպութիւնը և նրանց բանաձևը։ Աստղներ եղան, որ իբր այդ վերջինը չէ էլ բղխում զուտ սոցիալիստական աղբիւրից, թէ պրոլետարական շարժման մի քանի արտայայտութիւնները Թիւրքիայում՝ արտաքին ներմուծումներ են, գաղութային պետութիւնների ձեռքով կատարուած և այլն։

Այդպիսի կարծիք տիրելով ձեր մէջ, ես այլ ևս չեմ զարմանում, որ սալոնիկցիների բանաձևը առանձնապէս չի տաքացնում ձեզ։

Պէտք է, սակայն, չը մոռանալ, որ աշխատաւորական շարժումը Թիւրքիոյ մէջ ունի արդէն բաւականաչափ լուրջ սկզբնաւորութիւն, որ արժանի է ձեր խրախուսանքին։ Հանդէպ մի վախկոտ, թոյլ, անկերպարան բուրժուազիայի՝ մենք տեսնում ենք այնտեղ ուժեղ կորիզներ աշխատաւորական կազմակերպութեան, սոցիալիզմի նշանաբաններով։ Պրոլետարական շարժումը՝ եւրոպական Թիւրքիայում և գիւղացիականը՝ Հայաստանում։ Դուք, անշուշտ չէք մոռացել դրծագուլների այն համաճարակը, որ պայթեց սահմանադրութեան ծանուցումից անմիջապէս յետոյ, չէք մոռացել և սինդիկատների փակման առթիւ ծագած ուժգին խմորումը, „սոցիալական վէճը“ նորընծայ օսմանեան պարլամենտի մէջ, մեր ընկեր-պատգամաւորների բուռն բողոքը կառավարութեան յետադիմական ձեռնարկների դէմ և այլն։ Այդ նոյն օրերում էր, որ Սալոնիկի աշխատաւորական կազմակերպութիւնը ցոյց տուեց բաւականաչափ ուժ ու կորով, գումարեց բողոքի մեծ միտինգներ, հոգարաւոր բանուորների մասնակցութեամբ, և կռիւ յայտարարեց Ֆէրիդ փաշայի կառավարութեանը.

„Ահա մի շարք նկատումներ, որոնք թելադրում են մեզ՝ աւելի ջերմ ուշադրութիւն շնորհելու Սալոնիկի բանաձևին և ընդունելու այն։

Ռակովսկի ծանրանում է Թիւրքական քաղաքականութեան վրայ, խարանում է երիտասարդ Թիւրքիոյ բռնած դիրքը դէպի աշխատաւորական շարժումը։

„Մենք պարտաւոր ենք, ասում է նա, բողոքել երիտասարդ Թիւրքերի յետադէմ քաղաքականութեան դէմ։ Եւրոպայում նրանց արժէքը շատ են բարձրացնում, նրանց ազատամտութիւնը չափազանցնում են։ Մենք պէտք է պարզենք, որ Երիտասարդ Թիւրքիան այն ժամանակ միայն կարող է գրաւել Եւրոպայի համակրութիւնը, երբ կը հրաժարւի իր ճնշողական քաղաքականութիւնից աշխատաւորների նկատմամբ“։

Ի վերջոյ բանաձևն ընդունուեց, մի քանի փոքրիկ փոփոխութիւններով։

Բայց հետևեալ օրը բուլգարները եկան ու առաջարկեցին, որ բանաձևի մէջ աւելի սուր կերպարանք տրւի Թիւրքերի կառավարութեան դէմ ուղղուած բողոքին։ Կամեցան մտցնել մի շարք ածականներ—„մարդասպան“ և այլն, — որ սովորաբար գործածւում են ստոլիպինեան, համիդեան ու նման բէժիմների նկատմամբ։

„Դաշնակցութեան“ պատգամաւորը այդտեղ միջամտեց ընդդէմ բուլգարների. „Մեր բէզօլիւսիոնի շահն իսկ պահանջում է—ասաց նա—որ չը ընկնենք չափազանցութիւնների մէջ. ես չեմ ուրանում, որ երիտասարդ Թիւրքերի կառավարութիւնը ճնշումներ ու հալածանքներ ի գործ է դնում, բայց ամեն մի ածական—իր տեղում“...

Կարճատև վէճ է ծագում սերբ ու հայ պատգամաւորի միջև։ Առաջինը օրինակ բերելով ալբանական շարժման ընթացքում ի գործ դրած Թիւրք կառավարութեան վայրենութիւնները, միանգամայն տեղին է գտնում, որ այդ կառավարութիւնը որակի Ինտերնացիոնալի կողմից ամենաուժեղ ածականներով։ Երկրորդը յիշեցնում է, որ, ալբանական շարժման պատկերը դեռ պարզուած չէ և կառավարական ամենախիստ հակաճնշումը կարող է արդարանալ, եթէ գործ ունենք վանդէական, հակայեղափոխական շարժման հետ“։

Միջամտում է աւստրիական պարլամենտի անդամ Զայց։ Հաւանութիւն տալով „Դաշնակցութեան“ պատգամաւորին, նա ինքն ևս յանձնարարում է „չափ պահպանել—յանուն իսկ կօնգրէսի արժանապատուութեան—և խոյս տալ օսմանեան կառավարութեան հանդէպ այնպիսի որակումներից, որոնք աւելի սազական են ռուս ու այլ բռնակալ կառավարութիւնների վերաբերմամբ“։

Խնդիրը դրանով փակւում է։ Բողոքը Թիւրք կառավարութեան ճնշումների դէմ (գլխաւորապէս տնտեսական աշխարհում) պահպանում է իր ուժը, բայց „մարդասպան“ ու նման ածականները դուրս են մնում։

*

Ծանրակշիռ և այժմէական բանաձևներից մէկը առաջադրեց Ինտերնացիոնալին Ֆրանսիական Միացեալ Սոցիալիստական Կուսակցութեան կողմից։ Նա վերաբերում է սոցիալիստական կուսակցութիւնների միացման խնդրին (բոլոր երկրներում)։

Միութեան այդ բանաձևի ծագման գլխաւոր առիթը ռուսական կուսակցութիւնների ներքին դժտութիւններն են։ Դեռ կօնգրէսից առաջ Ժօրէս իր „Humanité“-ի մէջ մի քանի անգամ կշտամբելով այդ աղանդական բաժանումներն ու կռիւները, ուժգին յորդոր կարդաց ռուս կուսակցութիւններին՝ միացնելու իրենց ճիգերը բռնապետական թշնամու դէմ։

Ֆրանսիացիների բանաձևը մեկնում էր Ամստերդամի կօնգրէսի յայտնի որոշումից։ Մի քանի տաք ճառերից յետոյ—արտասանուած, ի հարկէ, ոչ ռուսական կուսակցութիւնների կողմից—բանաձևն ընդունուեց միաձայն, առանց քուէարկութեան։

Եւ որպէսզի բէզօլիւսիոնը այդ կարևոր խնդրի առթիւ չը մնայ սոսկ պլատոնական մի բաղձանք, Ինտերնացիոնալը յանձնարարեց Բրիւսէլի Միջազգային Սոց. Բիւրոին, իր միջնորդութիւնն ու աջակցութիւնը ցոյց տալ հակամարտ կուսակցութիւնների միութիւնը գլուխ բերելու համար։

Կօնգրէսն աւարտում է իր աշխատանքները, ամբողջ շաբաթուայ տենդային գործունէութիւնից յետոյ։ Արտասանւում են փակման ու „Մնաս բարև“-ի ճառեր. նորէն տիրում է հակայական դահլիճի մէջ տօնական տրամադրութիւն, նորէն հնչում է սոցիալիստական, համաշխարհային ռազմերգը բոլոր բերաններից և հազարաւոր պատգամաւորները ցրւում են դէպի Եւրոպայի ու աշխարհի այլևայլ ծայրեր, տանելով իրենց հետ Ինտերնացիոնալի, Միջազգային Կօնգրէսի իղձերը, որոշումները, ղեկավարող հրահանգները։

Առաջիկայ Համագումարը տեղի կունենայ 1913-ին։

Վիեննա։

ՄԻՋԿՈՒՍԱԿՑԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎ

„Ինտերնացիոնալի“ նիստերը փակուելուց յետոյ, անմիջապէս տեղի ունեցաւ Կոպենհագում մի առանձին խորհրդաժողով Ռուսաստանի մի շարք սոցիալիստական կուսակցութիւնների։

Ներկայ էին պատգամաւորներ՝ Ռուս սոցիալիստ-յեղափոխական կուսակցութեան, Լեհական սոց. կուսակցութեան (P. P. S.), Լատիշ սոցիալ-դեմօկրատ միութեան, Հրէական „Սերպի“ և Հ. Յ. Դաշնակցութեան։ Կային և երկու ֆինն սոց.-դեմօկրատներ, որպէս հիւրեր *)։

Նպատակը... Նորէն, այսպէս ասած, ծանօթանալ իրար հետ, տեղեկութիւններ տալ իւրաքանչիւր վայրի ընդհանուր կացութեան ու կազմակերպական վիճակի մասին և, եթէ հնար է, վերսկսել կոնֆէրանսների, խորհրդաժողովների շարանը, որ ծագումն էր առել նախքան համառուսական շարժումը և որ ընդհատուել էր այդ շարժման ու նրա հետևանք՝ ռէակցիայի յորձանքի միջոցին։

Դա մասամբ մի տեսակ պատասխան-արձագանք էր Հ. Յ. Դաշնակցութեան վերջին (Վառնայի) Համագումարի ընդունած որոշումին ու կոչին։

Ժողովը բազմամարդ էր, որովհետև մեր թուած կուսակցութիւնները մասնակցում էին իրենց ամբողջ պատգամաւորութիւններով, որ զրկուած էին Կոպենհագի Միջազգային կոնգրէսին։ Առանձնապէս տպաւորիչ էր ներկայութիւնը երեք պատկառելի վետերանների՝ լեհ գիտնական-սոցիալիստ 75-ամեայ Լիմանովսկու և ռուս հռչակաւոր յեղափոխականներ՝ Նատանսօնի ու Վոլխովսկոյի, պատկանող ս.-ր.-ական կուսակցութեան։ Վերջինի կողմից կային նաև՝ Զերնով, Ավկսենտիև, Արատսկի, Ռուբանովիչ, Բունակով, Նիկոլայև և ուրիշներ։

Լեհերի պատգամաւորութեան մէջ էր Վրօնսկի, P. P. S.-ի հին ու անխոնջ մարտիկը, որին տեսել ենք դեռ 1904-ի առաջին մեծ, պարիզեան կուսակցաժողովում, ապա քիչ յետոյ նաև ժընէվեան միջկուսակցային խորհրդաժողովների մէջ։

„Դաշնակցութեան“ կողմից ներկայ են՝ Դ...ման, Հիրակունի և Վարանդեան։

Նշանակւում են երկու քարտուղար՝ խօսակցութիւնները արձանագրելու համար։

Ապա Վարանդեանը բաց է անում ժողովը, „Դաշնակցութեան“ անունից, հետևեալ խօսքերով.

„Ընկերներ, երկար ճառելու պէտք չը կայ, ձեզ ամենքիդ յայտնի է ներկայ խորհրդաժողովի առարկան—մի ժողովի՝ որ, շտապում եմ, աւելացնել, չունի պաշտօնական բնաւորութիւն։

„Հ. Յ. Դաշնակցութիւնը իր վերջին Համագումարում, ներկայութեամբ Կովկասի, Թիւրքիայի, Պարսկաստանի և Հայկական գաղութների պատգամաւորութեանց, միաձայն բաղձանք է յայտնել, որ Ռուսաստանի այլևայլ սոցիալիստական ու յեղափոխական հատուածները միանան ընդհանուր գործողութեան մէջ, ընդհանուր բռնապետական թշնամու դէմ, և միաձայն նաև որոշել է, որ կազմակերպութեան պաշտաճ մարմինները դիմումներ անեն այդ նպատակով։

„Տարաբախտաբար, ներկայ պարագայում, մեզ հնարաւորութիւն չի ներկայանում՝ գումարելու այստեղ բոլոր սոցիալիստական ու յեղափոխական կուսակցութիւնները, բայց յուսով ենք, որ այս ժողովը վերջինը չէ, ինչպէս որ նա առաջինն էլ չէ։

„Սոցիալիստական տարբեր կուսակցութիւնների այդ միութեան խնդիրը, ինչպէս տեսնում էք, դրուում է նաև Ինտերնացիոնալի Կոնգրէսի մէջ, որպէս խիստ հասունացած ու այժմէական մի խնդիր։ Սակայն, Ինտերնացիոնալը, ըստ երևոյթին, հասկանում է այդ միութիւնը ձուլման մտքով։ Իսկ մենք, որ գիտենք Ռուսաստանի պայմանները, կուսակցութիւնների երկրամեայ յարաբերութիւնները, ծրագրային ու տակտիկային տարաձայնութիւնները և այլն, մենք կարծում ենք, որ այդ տեսակ ձուլման մասին խօսք չի կարող լինել, գէթ ընդերկար։

„Բայց դրա փոխարէն՝ մենք կարծում ենք, որ հնարաւոր և անհրաժեշտ է յեղափոխական, մարտական ուժերի որոշ համերաշխ գործակցութիւն, կօորդինացիա—և այդ մասին է, որ կը խնդրէինք խորհրդակցել ներկայ ժողովում։

„Ես ընդգծում եմ մարտական ուժերը բառերը։ Մեզ, դաշնակցականներիս, Ռուսաստանի ներկայ ծանր ու տագնապոտ վիճակի մէջ, ամենից աւելի հետաքրքրում է կացութեան մարտական կողմը։ Գուցէ այն է պատճառը, որ մենք սկզբից իսկ՝ եղել ենք միշտ գործնական կուսակցութիւն։ Գուցէ դա մեր թուլութիւնն է։ Գուցէ մենք մեղանչել ենք մեր սոցիալիստական credo-ի, հաւատամքի դէմ, կենտրօնացնելով սկզբից ի վեր մեր ուժերը գլխաւորապէս քաղաքական կռիւների և ազատութեան տարբերական նուաճումների վրայ—թէ Թիւրքիայում, թէ Անդրկովկասում և թէ Պարսկաստանում։

„Հնարաւոր է։ Բայց յամենայն դէպս, մենք անկեղծօրէն մտածել ենք միշտ, որ հանդէպ հզօր ու քստմնելի բռնակալութեանց, որոնց լծի տակ խորտակւում են կուլտուրական ամեն տեսակ արտայայտութիւններ ու ձեռնարկներ,—այդ տակտիկը, քաղաքական տարբի գերակշռութեամբ, միակ հնարաւորն է և ամենից համապատասխանն է կենդանի ու նզովեալ իրականութեան պահանջներին։

„Թւում է, արդարև, թէ ցարական ինքնակալութեան ներկայ զարհուրելի ճնշման ներքոյ՝ չը կայ մեզ համար, Ռուսաստանի սոցիալիստական կուսակցութիւնների համար, աւելի ստիպողական և հրատապ մի խնդիր, քան այդ տարբերական ազատութիւնների նուաճումը—թէկուզ և բուրժուազական ազատութիւնների—որոնք հանդիսանում են անհրաժեշտ ու անխուսափելի հանգրուան դէպի մեր ընդհանուր, մեծ իդէալը, դէպի կատարեալ, սոցիալիստական Ազատութիւնը։

„Եթէ այդ այդպէս է, ապա—մտածում է Հ. Յ. Դաշնակցութիւնը—անհրաժեշտ է, որ բոլոր ակտիվ, գործօն կուսակցութիւնները կենտրօնացնեն իրենց ճիգերը։

*) Հրաւիրուած էր այդ խորհրդաժողովին եւ ռուսական սոցիալ-դեմօկրատիայի „Osqovhus“ կոչւող շաբաթական մարտական հատուածի մի ներկայացուցիչը, Վոյնով. բայց նա դրականապէս իր մասնակցութեան խոստումը տալուց յետոյ, չ՚եկաւ ժողովին, թերեւս արգելքի հանդիպելով իր կուսակիցների կողմից։

գերը գլխաւորապէս ինքնակալութեան դէմ մղելիք կռուի վրայ։ Եւ՝ „մարտական կռուի“ վրայ—եթէ թոյլ կը տաք այս ոճը գործածել... Պատրաստել պէտք է՝ ոչ թէ կրաւորական, այլ ակտիվ, զինուած ու մասսային դիմադրութիւն։

„Ընկերներ. կարծեօք, չեմ սխալուի, եթէ ասեմ, որ ի շարս այն պատճառների, որոնք առաջ են բերել համառուսական Յեղափոխութեան ֆիասկօն, ոչ-վերջին տեղն են բռնում այդ երկու պատճառները.

1. Յեղափոխական ուժերի պառակտումն ու երկպառակութիւնները—մէկ կողմից։

2. Մարտական տարրի պակասութիւնը, մասսային ու ռազմական պատրաստութեան ծայրայեղ թուլութիւնը—միւս կողմից։

„Եւ մեզ թւում է, որ եթէ կամենում ենք օգտագործել անցեալի դասերը, ապա պէտք է ջանանք վերացնել ընդհանուր ուժերով այդ երկու պատճառները։

„Համերաշխ գործակցութեան հրաւէրներ եղել են և անցեալում։ Այսպիսի խորհրդաժողովներ գումարուել են և նախայեղափոխական շրջանում... Եթէ այն ժամանակ ուժերի միացումը անհրաժեշտ էր դիտուում, ապա նա կրկնապատիկ անհրաժեշտ է այժմ, Յեղափոխութեան քախքախումից յետոյ, երբ բռնակալութիւնը չափել է արդէն ամբողջ խորութեամբ Յեղափոխութեան ռազմական պատրաստութիւնը, երբ նա արդէն գիտէ, թէ ինչքան դիմադրական կարողութիւն ունի հարիւր միլիոնաւոր ժողովուրդը և նրա յեղափոխական կուսակցութիւնները և երբ այդ գիտակցութիւնը նոր ուժ է հաղորդում նրան, բռնակալութեանը։

„Կայ մի այլ խոշոր հանգամանք, դրդիչ միութեան։ Դա այն է՝ որ ներկայումս և այսուհետև de facto Յեղափոխութեան միակ կրողը Ռուսաստանում լինելու է սոցիալիզմը, լինելու են սոցիալիստական կուսակցութիւնները։ Բուրժուական բադիկալիզմը (արմատականութիւնը), որ շարժման յայտնի վայրկեաններում տրամադրուած էր յեղափոխականօրէն և որ քիչ չը նպաստեց 1905 թուի յաղթանակներին — շուտով իջաւ թատերաբեմից և մեծ մասամբ նեռուեց բէակցիայի գիրկը։

„Ես չեմ մտնում ոչ այդ պատմական volte-face-ի (դիմադարձութեան) վերլուծումի մէջ, ոչ էլ ուզում եմ գնահատել սոցիալիստական կուսակցութիւնների այդ կղզիացման օբ'եկտիվ—առարկայական—և սուբ'եկտիվ—ենթակայական—պատճառները։ Փաստն եմ արձանագրում։ Իսկ փաստն այն է, որ յիրաւի, սոցիալիստական կազմակերպութիւնները այսուհետև մեն-մենակ պիտի տանեն իրենց ուսերի վրայ Ռուսաստանի „բուրժուական յեղափոխութեան“ ամբողջ ահագին ծանրութիւնը։ Այդ փաստն ևս հրամայականօրէն պահանջում է, որ մենք սեղմենք մեր շարքերը և միացնենք մեր ճիգերը — գէթ համերաշխ գործակցութեան մէջ, քաղաքական ձեռնարկների հողի վրայ։

„Զը մոռանանք և այն, որ անցեալ Յեղափոխութեան միջոցին, վճռական պատճառների շարքում ունեցանք մի այնպիսի ահագին, ծանրակշիռ ու նպաստաւոր գործօն, որպիսին էր եապոնական պատերազմը — մի գործօն, որի նմանը այնքան էլ յաճախ չի արտադրում պատմութիւնը...

„Վերջապէս, հարկ կա՞յ արդեօք յիշեցնելու ձեզ վերջին մեծ, ամենամեծ մինուսը, այն՝ որ ռէակցիայի ներկայ համաստիւռ թագաւորութեան մէջ տեսնում ենք ողբալի մնացորդները միայն նախկին յեղափոխական կուսակցութիւնների, տեսնում ենք ընդհանուր, համատարած կազմալուծում... Բացառութիւն չեն կազմում նաև կովկասեան կազմակերպութիւնները, որ երբեմն բաւականաչափ ուժեղ էին և որոնք վերջին տարիներս ենթարկուեցին մի վայրենի արշաւանքի։ Բացառութիւն չի կազմում և „Դաշնակցութիւնը“։

„Ընկերներ, ըստ երևոյթին, ուժերի համագործակցութեան անհրաժեշտութիւնը զգում են գրեթէ բոլոր գործող կուսակցութիւնները։ Մնում է հնարաւորութեան խնդիրը։ Ահա այդ խնդիրն էլ դրուում է այստեղ ձեր քննութեան։ Կարո՞ղ ենք արդեօք գտնել շփման կէտեր, քաղաքական գործունէութեան համար, այլևայլ դաւանանքների պատկանող սոցիալիստական հատուածների միջև։ Եթէ այո, ապա ինչպէ՞ս պատրաստել, կազմակերպել ընդհանուր գործը։

„Այսքանը—իմ կողմից։ Ընորհակալութիւն „Դաշնակցութեան“ անունից՝ ձեր տուած արձագանքի համար։ Ձեզ, կարծում ենք, հասկանալի կը լինի, թէ ինչու այդ կազմակերպութիւնը այդքան տենդային կերպով բռնուած է ուժերի միացման մտահոգութեամբ։ Եւ այն՝ յանձին իր երեք խոշոր հատուածների — ռուսահայկական, թիւրքահայկական, պարսկահայկական։ Ասե՞լ ձեզ արդեօք, որ թիւրքահայերն ու պարսկահայերը ևս խորապէս շահագրգռուած են այդ խնդրով։ Թիւրքիա և Պարսկաստանը շարունակում են լինել թատերաբեմ ռուս կառավարական ինտրիգների, դաւերի։ Տարբերական ազատութիւնները, ճիշտ է, նուաճուած են այնտեղ, բայց նրանք չեն կարող համարիլ ամուր ու յարատև, քանի դեռ կանգուն կը մնայ սահմանների վրայ ռուսական բռնապետութիւնը, յաւիտենօրէն դաւող ու խառնակող... Ռուսական ազատագրութեան հարցը այդպիսով միաժամանակ տաճկական և պարսկական մի հարց է։

„Ի վերջոյ—դրական ու կոնկրետ առաջարկի առթիւ։ Յայտնելով մեր ջերմ բաղձանքը ուժերի համագործակցութեան նկատմամբ, մենք չենք յաւակնում առաջադրելու այստեղ դիրեկտիվներ և կոնկրետ ձևակերպութիւններ։ Բայց կարծում ենք, խորհրդաժողովը ինքը կը հոգայ այդ դիրեկտիվները և կը տայ գործնական հրահանգներ, ունենալով իր մէջ աւելի փորձուած և կացութեանը աւելի գիտակ կուսակցութիւններ ու դէմքեր“։

Այնուհետև սկսւում է խորհրդակցութիւնը, Զերնովի նախագահութեամբ։ Ժողովի բնաւորութեան առթիւ կարճատև վիճաբանութիւնից յետոյ, որոշւում է, որ նախ կուսակցութիւնների ներկայացուցիչները տան զեկուցումներ իւրաքանչիւրը իր կազմակերպական վիճակի և իր գործելավայրի յեղափոխական կացութեան մասին, կանգ առնելով առանձնապէս մարտական խնդրի վրայ։

Խօսք է առնում Լեհ Սոցիալիստ Կուսակցութեան ներկայացուցիչ Վրօնսկի։ Նկարագրում է Լեհաստանի ընդհանուր կացութիւնը համառուսական յեղափոխութիւնից յետոյ, բիւրօկրատական վայրենի հա-

լածանքները, որոնք մի առանձին ուժով մղում են ԼԵՀ Սօց. կուսակցութեան դէմ, որպէս ամենագործօն, ամենաարմատական տարրի։ Բ. Բ. Տ.-ը ԼԵՀաստանում, „Դաշնակցութիւնը“ Հայաստանում—Համանման, վիճակակից կազմակերպութիւններ են, նոյն էական սկզբունքներով ու տակտիկային համոզումներով։ Բ. Բ Տ.-ը ևս հարկադրուած է իր հայրենիքի մէջ կռիւ մղել միաժամանակ երեք ֆրօնտի վրայ. կռիւ յանուն ազգային բռնաբարուած իրաւունքների, կռիւ յանուն քաղաքական յեղաշրջման և, վերջապէս, կռիւ յանուն աշխատաւորութեան շահերի ու սօցիալիզմի։ Առաջին կռիւի մէջ նա գրեթէ մենամենակ է, բռնակալութեան ու սև ուժերի դիմաց, ինչպէս „Դաշնակցութիւնը“ հայկական միջավայրում։ ԼԵՀական բուրժուազիան հայկականի պէս ինքնա, թուլամորթ, միանգամայն յարմարուել է տիրող կացութեանը. նա չունի այլևս դիմադրական կարողութիւն ու կամեցողութիւն։ Միւս յեղափոխական կուսակցութիւններից... սօցիալ-դեմօկրատիան—որ անբաժան մի հատուածիկն է համառուսական Սօցիալ-դեմօկրատիայի—աւելի շուտ խանգարիչ գործօն է հանդիսանում ազգային իրաւունքների պաշտպանութեան անհրաժեշտ պայքարի մէջ... ինչպէս Կովկասում։ Այդպէս, օրինակ, Բ. Բ. Տ.-ը բռնի ռուսացման և ձուլման ախորժակների դէմ մաքառելու համար, քարոզում է շարունակ բօյկոտի ենթարկել ռուս պետական դպրոցները, որոնց ծաւալն ու ոգին աւելի են „զարգացել“ վերջին ռէակցիայի հետ և որոնք միանգամայն վնասակար ու խեղաթիւրիչ ազդեցութիւն ունին ԼԵՀ երիտասարդութեան վրայ։ Եւ այդ բօյկոտը այսօր ահագին ծաւալ է ընդունել ԼԵՀաստանում։ Սօցիալ-դեմօկրատական հատուածը, իբրև միանգամայն անտարբեր ազգայնական խնդիրներում, եռանդով քարոզում է այդ բօյկոտի դէմ և այդպիսով անուղղակի սատար է լինում ռուսացման ձգտումներին։

1907 թուին գումարուած ԼԵՀ Սօցիալիստ Կուսակցութեան ընդհանուր ժողովը յայտարարում էր, որ ցարիզմի քաղաքականութիւնը, յենուած ռուս հասարակութեան մի մասի վրայ, միշտ աւելի և աւելի մատնում է կատաղի նացիօնալիստական (ազգայնամոլ) ոգի, որի նմանը չի կարելի գտնել նոյնիսկ նախկին բռնակալութեան օրով“...

Եւ համաձայն այդ յայտարարութեան, կուսակցութիւնը հրահանգում էր.

1. Բոլոր ուժով կռիւ մղել այդ նացիօնալիստական, ազգայնամոլ ձգտումների դէմ։

2. Պատրաստուել ապագայ զինուած կռիւների համար, կռիւներ, որոնք Ռուսաստանի պէս մի բռնակալ պետութեան մէջ հանդիսանում են, որպէս առաջնակարգ անհրաժեշտութիւն իւրաքանչիւր սօցիալիստ կուսակցութեան համար։

3. Ուժեղացնել այդ նպատակով կուսակցութեան մարտական թևը, աճեցնել կուսակցութեան անդամների ընդունակութիւնը՝ զանգուածային ու զինուած ճակատամարտների համար։

Բ. Բ. Տ.-ի ընդհանուր ժողովը յայտարարում էր.

„Ցեղափոխութեան աջողութիւնը կախուած է ոչ միայն այն հանգամանքից, որ շարժումը կը բռնէ ժողովրդի ամենալայն խաւերը, այլ և նրանից՝ կը լինի՞ն արդեօք այդ զանգուածների մէջ բաւական թուով անհատներ, որոնք ընդունակ լինին ոչ միայն ղեկավարել քաղաքական-սօցիալական գործունէութիւնը, այլ և զինուած շարժումները։

Ընդհանուր ժողովը հրահանգում էր՝ հոգ տանել աշխատաւոր դասակարգի զինաւորման և զինավարժութեան համար, տարածել ժողովրդական լայն խաւերում ռազմական ծանօթութիւնները, և արծարծել միաժամանակ նրանց մէջ այն համոզումը՝ որ զինուած կռիւը հնարաւոր է...

Զերնհաս ատեանի այս մի քանի հրահանգներից երևում է արդէն, թէ ինչ է ներկայացնում Բ. Բ. Տ.-ը, ինչով է նա տարբերուում իր հայրենիքի միւս կուսակցութիւններից և նախ՝ սօցիալ-դեմօկրատիայից, որ այնտեղ, ԼԵՀաստանի հողի վրայ ևս, հանդիսանում է ընդհանրապէս նոյն կրաւորական „գործադուլային“ ու „պրօպագանդային“ մարմինը, ինչպէս կայսրութեան ուրիշ վայրերում։

Եւ ԼԵՀ Սօց. Կուսակցութիւնը գործում է համաձայն իր կօնգրէսի որոշումներին։ Ռէակցիայի վերջին սև թուականներում նա լեհ ժողովրդի միակ ռազմական մարմինն է, որ ազդու միջոցներով կռիւ է մղում կառավարութեան դէմ, սիստեմատիկ կերպով ոչնչացնում է, տերրօրի ենթարկում բիւրօկրատիայի վատթարագոյն ներկայացուցիչներին, կոտորում է շարունակ լրտեսներ ու պրովօկատօրներ և միաժամանակ մերթ ընդ մերթ կազմակերպած մարտախմբերով յարձակւում է կառավարական հիմնարկութիւնների վրայ — փոստերի, բանկերի, մաքսատների—գրաւում է պետական գումարներ՝ իր կռիւի անհրաժեշտ պէտքերը հոգալու համար։

*

Զերնօվ զեկուցանում է ռուս-սօցիալիստ-յեղափոխական (ս.-ր.) կուսակցութեան մասին։ Պատմում է համառօտակի նրա ուշագրաւ ելևէջները վերջին մի շարք տարիների ընթացքում, կառավարութեան բարբարոս հալածանքները, Ազեվեան հրէշաւոր մերկացումը և ներքին կազմալուծման չարիքները, կանգ է առնում մասնաւորապէս մարտական գործի վրայ, քանի որ Խորհրդաժողովը իր ուշադրութեան կենտրօն էր դարձրել այդ կէտը։

Ս.-ր.-ները, Զերնօվի ասելով, սկզբից ի վեր, աշխատել են—որքան իրենց ուժերը ներել են այդ—աճեցնել մարտական, զինուորական պաշարը իրենց ազդեցութեան ենթակայ զանգուածների մէջ։ Սակայն չեն կարողացել մեծ բան անել այդ ուղղութեամբ։ Պատճառը, ասում է նա, յեղափոխական-մարտական աւանդութիւնների բացակայութիւնն է ռուս ընդհանրութեան մէջ, ժողովրդի ծայրայեղօրէն խաղաղասէր բնոյթը, խառնուածքը և այլն։ Ռուս ժողովուրդը, ասում է նա, տարբեր է կովկասեան ու այլ ժողովուրդներից, նա սովոր չէ զէնքի գործածութեան և դա ահագին խոչընդոտ է յեղափոխական կուսակցութիւնների համար։ Զերնօվ պատմում է վերջին տարիների էվոլիւցիայից ուշագրաւ դրւագներ—որ այստեղ անկարելի է ի ցոյց դնել—պատմում է այն մի շարք փորձերը ժողովրդին զինաւորելու, մարտական խմբեր պատրաստելու, զէնքի

վարժեցնելու նրանց և ընդհանուր ապստամբութեան մղելու... փորձեր, որոնք ընդհանուր առմամբ անաջող են անցել, չեն յարատևել և զարնուել են միշտ նոյն հիմնական խոչընդոտին — ռուս ժողովրդի մարտական անընդունակութեանը։

Ս.-Ր.-ները ձգտել են և ձգտելու են այսուհետև ևս՝ անհատական տերրորը դարձնել մասսային. բայց որ գլխաւորն է, նրանք պիտի ձգտեն անդուլ ու եռանդուն պրոպագանդով արմատ բռնել զօրքերի մէջ... Որովհետև համոզուած են, որ ժողովրդի զանգուածային ու զինուած ապստամբութիւններն անգամ միշտ կը վիժեն, եթէ զօրքի գէթ մի մասը չը յարի յեղափոխութեան։

***

„Դաշնակցութեան“ մասին զեկուցանում է ընկեր Շիրակունի։

„Ես, դժբախտաբար, չեմ կարող, ասում է նա, վերջացնել իմ զեկուցումը այնպիսի լաւատես գոյներով, ինչպէս այդ արեց Բ. Բ. Տ.-ի մեր ընկերը։ Ես կը հետևեմ ժողովից ընդունուած զեկուցագրին, բայց կը լինեմ աւելի համառօտ, ենթադրելով, որ շատ բան ձեզ արդէն ծանօթ է։

Ծրագրային խնդիրների մասին պիտի ասեմ, որ 1904 թուից այս կողմը մեր կուսակցութիւնը իր ծրագրով կրել է մեծ փոփոխութիւն, թէև ոչ ըստ էութեան, այլ ըստ նրա արտաքին ձևի։ „Դաշնակցութեան“ հիմնական ծրագիրը մշակուած նրա Ա.-ին համագումարում, կուսակցութեան հիմնարկութեան առաջին տարիներում, յենւում է սոցիալիստական սկզբունքների վրայ, բայց յարմարեցրած այն միջավայրին, ուր նա գործում էր սկզբից ի վեր՝ Թիւրքիային։ Մեր կուսակցութիւնը իր գոյութեան սկզբից աւելի մարտական և գործնական մի մարմին լինելով, շատ քիչ ուշադրութիւն է նուիրել թէորիական հարցերի և բացառաբար ծանրանալով զինական-մարտական գործի վրայ, նա բոլորովին մի կողմ էր թողել իր անդամների խնամոտ մշակութիւնը կուսակցութեան սկզբունքներով. սրա հետևանքը եղաւ այն, որ կուսակցութեան շարքերը մտած բազմաթիւ ընկերներ շատ քիչ թէորիական պատրաստութիւն ունենալով, կուսակցութեան գործունէութեան միակ խնդիրը ճանաչում էին այն գործնական աշխատանքները, որ նա կատարում էր պատմական վայրկեանի պահանջով, այսինքն արիւնոտ կռիւ տաճիկ կառավարութեան և նրան աջակցող անգիտակից ցեղերի դէմ։

Երբ 1904—5 և յետագայ թուականներին մենք սկսեցինք գործել նաև Ռուսաստանում, ուր տարբեր պայմանները մեզ հնարաւորութիւն էին տալիս արտայայտելու մեր կուսակցութեան բնոյթի ոչ միայն զինական-մարտական, այլև սոցիալական կողմը, մեր շատ ընկերների համար, գլխաւորապէս ոչ զարգացածներից, դա համարուեց դաւաճանութիւն կուսակցութեան աւանդութիւններին և մեր ծրագրի հետ ոչ մի առնչութիւն չունեցող նորմուծութիւն, որի պատճառ համարուում էին մի խումբ երիտասարդ ընկերներ։ Գտնուեցին անբարեխիղճ անհատներ, որոնք շահագործեցին մասսաների այդ միամիտ մտածողութիւնը և մի առ ժամանակ կարողացան իրենց շուրջը խմբել բաւական ստուար բազմութիւն աշխատաւոր ժողովրդի, իբրև նշանաբան ունենալով՝ „Դաշնակցութիւնը“ միայն Թիւրքիոյ մէջ քաղաքական կռիւ մղելու համար է։ Կռիւը միաժամանակ Ռուսաստանի դէմ՝ մեր ուժերից վեր է, իսկ դասակարգային պայքարը հակասում է մեր ծրագրին“։

Մեծ ճիգ թափեց կազմակերպութիւնը՝ ազատելու համար մոլորուած ընկերներին այդ շահատակ անձերից, որոնք մի ժամանակ մինչև իսկ կեղծ կնիք չինեցին և նոր „կենտրոն“ հաստատեցին։ Կուսակցութեան IV Ընդհ. Ժողովի որոշումը վճռականօրէն դատապարտելով այդ յետադիմական շարժումը, մշակեց մի նոր ծրագիր, որ հիմնուած կուսակցութեան հին ծրագրի վրայ, նոր պայմանների և պահանջների համեմատ աւելի շեշտում էր կուսակցութեան սոցիալական բնոյթը։ Մասսան դարձեալ հաւատարիմ մնաց կուսակցութեան դրօշակին, իսկ շանտաժիստները ի վերջոյ դարձան գաղտնի ոստիկանութեան գործակալներ։

Այդպէս չը վերջացաւ այն ժամանակներում կուսակցութեան մէջ առաջ եկած մի այլ շարժում ձախակողմեան թևից։ Այս շարժման մասնակցում էին շատ ընկերներ, որոնք նպատակ էին դրել կուսակցութիւնը մաքրել ոչ-սոցիալիստ տարրերից և նրան տալ ժամանակակից սոց. կուսակցութիւններին վայել կերպարանք և գործունէութիւն։ Այդ ձախակողմեան ընկերներից ոմանք չսպասեցին մինչև IV Ընդհ. Ժողովի վերջանալը և յայտարարելով, որ „Դաշնակցութիւնը“ անկարող է զաւել, անջատուեցին կուսակցութիւնից։ Այսպիսով մենք կորցրինք մի քանի եռանդուն և օգտակար ընկերներ. բայց անջատուածների խումբը այնքան փոքր էր և IV Ընդհանուր Ժողովի ընդունած ծրագրից յետոյ՝ տարբերութիւնը նրանց պահանջների և կուսակցութեան գործունէութեան մէջ այնքան չնչին էր, որ այս անջատումը զգալի հարուած չը տուեց մեզ։ Ցաւելով պիտի ասել, որ այս փոքրիկ շարժումը քաջալերութիւն գտաւ մեր ռուսական էս-էր ընկերների կողմից... Բուն յեղափոխութեան շրջանում մեր կուսակցութիւնը չէր կարողացաւ ուղղակի և ակտիւ մասնակցութիւն ունենալ, որովհետև նա հարկադրուած էր իր ամբողջ ուժերը լարել պաշտպանելու համար հայ մասսան ֆիզիքական ոչնչացումից, որ նրան սպառնում էր ռուս կառավարութեան և նրա գրգռած թուրքական հորդաների կողմից։ Հայ-թուրքական ընդհարումները, որոնք վերջերում ուղղակի պատերազմի կերպարանք ստացան, ձիաւոր և հետևակ զօրքով, թնդանօթներով և այլն, չը նայած իրենց աւերիչ ազդեցութեան, ունեցան նաև իրենց դրական կողմը նրանով, որ մեր ժողովուրդը վարժուեց զէնքի գործածութեան և գիտակից կազմակերպման, ինքնապաշտպանութեան և յարձակողական գործողութիւնների համար։ Մենք զինեցինք մեր ժողովուրդը մասամբ կուսակցութեան միջոցներից, մասամբ ժողովրդի հանգանակած գումարներով, և կուի հետևանքը այն եղաւ, որ այժմ իսկապէս դժուար է որոշել, թէ ով աւելի վնաս կրեց՝ հայութի՞ւնը, թէ թուրք մասսան և կառավարութիւնը, վերջինս իր բազմաթիւ պաշտօնեաների կորստով, որոնք վրիժառու հարուածների ենթարկուեցին — նահանգապետից սկսած մինչև գօրոգովոյը։

Ներկայումս գրեթէ մեռած է կեանքը ամբողջ կով-

կասում, ինչպէս և առհասարակ Ռուսաստանում. բայց եթէ մի կուսակցութիւն կայ Կովկասի մէջ, որ էլի կենդանութեան նշոյլներ է ցոյց տալիս, դա „Դաշնակցութիւնն“ է, որ շարունակում էր գործունէութիւնը և ամեն տեղ դեռ ունի իր մարմինները։ Ռուս կառավարութիւնը հալածում է մեզ նաև Կովկասից դուրս, մանաւանդ Պարսկաստանում, ուր մարմինը ընդարձակ մասնակցութիւն ունեցաւ յեղափոխական կռիւների մէջ։

Կազմակերպութեան ուժերի մասին աւելի մանրամասն կարող է ձեզ տեղեկութիւն տալ ընկեր Դ...ը, բայց ես կասեմ, որ զինավարժութեան յատուկ դպրոցներ ունենալը մեզ համար հոգաց ինքը ռուս կառավարութիւնը, իր յղացած հայ-թուրքական ընդհարումներով, որ արդէն մի դպրոց դարձաւ զինավարժութեան։

Ժողովականները հետաքրքրուեցին իմանալ, ի՞նչ չափով զինուած ուժ կար „Դաշնակցութեան“ տրամադրութեան տակ, մօտիկ անցեալի փոթորկոտ օրերում, հայ-թաթարական ընդհարումների միջոցին։

Այդ հարցումին պատասխանեց ընկեր Դ...ման, որի ներկայութիւնը ռուս ու լեհ սոցիալիստների, առանձնապէս վետերան-առաջամարտիկների, ուշադրութեան առարկայ էր։ „Դաշնակցութեան“ հին զինուորը իր սովորական պարզ, հակիրճ ու կտրուկ ձևով բնորոշեց մի քանի խօսքով կուսակցութեան ռազմական պատկերը վերջին մեծ ընդհարումների միջոցին։

„Այնուամենայնիւ — վերջացրեց նա — ընդհանուր վիճակը մխիթարական է։ Մեզ մօտ այսօր՝ ոչ թէ գեներալներ կան առանց բանակի, այլ բանակ կայ, առանց գեներալների... Ցաք ու ցրիւ ամեն տեղ — Թիւրքիա, Պարսկաստան, արտասահման — ուր մղել է նրանց ռէակցիայի ալիքը՝ այդ հալածական գեներալները մի օր, կուսակցութեան ազդանշանն ստանալուն պէս, վերստին կը հաւաքուին բոլոր ծայրերից, կը զարկեն ահկոչնակը, կը փողահարեն — և անմիջապէս բանակը կը համախմբուի նրանց ղեկավարութեան տակ..

„Կազմակերպութիւնը յանձին իր ղեկավարների, բարեբախտաբար, ազատ է մնում ռուս կառավարութեան ծուղակներից — մի կառավարութեան, որ ձգտում է ափաշկարայ ջնջելու մեր ազգի ամենաթարմ, գաղափարական տարրերը։ Կազմակերպութիւնը պատրաստւում է, որպէս զի պատուով դիմագրաւէ ապագայ նոր դաւերին ու փոթորիկներին, որոնցից գուցէ դեռ ազատւած չէ մեր տարաբախտ ժողովուրդը։ Այդ ժողովրդի գոյութեան հարցը մեր սեփական գոյութեան պատճառն է եղել և „Դաշնակցութիւնը“ սկզբից ի վեր — Թիւրքիայում, Կովկասում, Պարսկաստանում — եղել է նախ և առաջ յեղափոխական-ինքնապաշտպան կազմակերպութիւն. նա կուել է տարբերական ազատութիւնների համար, նա եղել է միաժամանակ ամենահզօր պատնէշը Կովկասի մէջ՝ հակայեղափոխական յորձանքների դէմ“ (բուռն ծափեր)։

Այնուհետև խօսում են լատիշների և հրէական կուսակցութեան ներկայացուցիչները։

Ժողովականները խորհրդակցում են նաև „կօնկրետ“ առաջարկների շուրջը։ Ալբանսկի անում է մի քանի առաջարկներ ապագայ համերաշխ գործակցութեան համար։ Ժողովը սակայն գտնում է նրանց վաղաժամ։ Անհրաժեշտ է մի այլ խորհրդաժողով, պաշտօնական բնոյթ ունեցող։

Հակակերպւում և միաձայն ընդունւում է հետևեալ որոշումը.

Մասնաւոր Խորհրդաժողովը, կայացած 1910 թ. սեպտեմբեր 2, Միջազգային Սոցիալիստական կոնգրէսի միջոցին, մասնակցութեամբ՝ Ռուս Սոցիալիստ-Յեղափոխականների, Լեհ Սոցիալիստ Կուսակցութեան, Հ. Յ. Դաշնակցութեան, Հրէական Սոցիալիստ Կուսակցութեան, Լատիշ Ս.-Դ. Միութեան պատգամաւորների և երկու հիւրերի — լսելով համառօտ զեկուցումներ այդ կուսակցութիւնների կացութեան և ռազմական գործունէութեան մասին, որոշեց բաղձանք յայտնել առաջին երեք կուսակցութիւնների կենտրօնական կազմակերպութիւններին.

1) Որպէս զի նրանք ամենամօտիկ ապագայում հրաւիրեն Խորհրդաժողով, մասնակցութեամբ այդ կուսակցութիւնների և իրենց գաղափարակից կազմակերպութեանց լիազօր ներկայացուցիչների, — մի Խորհրդաժողով, որ պիտի սահմանէ համերաշխ գործակցութիւն ապագայ քաղաքական ձեռնարկների համար։

2) Որպէս զի այդ Խորհրդաժողովին հրաւիրուին Կայսրութեան մէջ գործող ըստ կարելւոյն մեծ թւով սոցիալիստական կուսակցութիւններ։

Պրօտօկոլը ստորագրւում է երեք խոշոր հատուածների ներկայացուցիչներից.

ՌՈՒՍ ՍՕՑ.-ՅԵՂ. ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ. Ռուճակով
ԼԵՀ ՍՕՑ. ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ (*P. P. S*). Վ. Բօճակի
ՀԱՅ ՅԵՂԱՓ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ. Վ. Սարանդեան

ԼԵՀ ՍՕՑԻԱԼԻՍՏՆԵՐԸ „ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ“ ՄԱՍԻՆ

Լեհաստանի երեք հատուածների ամենաազդեցիկ կուսակցութեան — *P. P. S.*-ի — կենտրօնական օրգանը *), մի ընդարձակ յօդուածում, „Սոցիալիզմը Հայաստանի մէջ“ վերնագրով, վերլուծում է Կոպենհագի Միջազգային Համագումարին ներկայացուած Հ. Յ. Դաշնակցութեան Տեղեկագիրը, իր կողմից աւելացնելով մի քանի մեկնութիւններ։ Առաջ ենք բերում թարգմանաբար յօդուածի մի քանի կէտերը.

„Հայաստանը իր քաղաքական կացութեամբ նմանում է Լեհաստանին։ Նա պատռուած ու բաժանուած է երեք պետութիւնների միջև և մշտնջենաւոր պայքարի մէջ պաշտպանում է իր ժողովրդական իրաւունքները։ Մօտիկ անցեալում նա ապրեց յեղափոխութիւնը իր ռուսական հատուածում, իսկ վերջին ժամանակներս ահագին մասնակցութիւն ունի թիւրքական ու պարսկական յեղափոխութիւնների մէջ։ Այսօր Ասիայի այդ երկրի համար — օսմանեան յեղաշրջումով — ծագել է իր սահմանադրական զարգացման արշալոյսը։

„Հայաստանի բոլոր երեք հատուածների վրայ տարածում է իր գործունէութիւնը հայ սոցիալիստ կազմակերպութիւնը — „Դաշնակցութիւնը“։ Նրա աշխատանքը բազմակողմանի է. նա միաժամանակ ղեկավարում է յեղափոխական, քաղաքական և սոցիալական շարժումները“։

Ապա պատմելով „Դաշնակցութեան“ կատարած դերը

*) «*Naprzod*», հրատ. Կրակով, աւստրիակ. Լեհաստան։

Թիւրքիայում ու Պարսկաստանում, նրա պրոպագանդը քրիստոնեաների ու մահմեդականների համերաշխութեան գործի համար, յօդուածագիրն անցնում է Ռուսաստան։

„Ամենքին յայտնի է „Դաշնակցութեան“ արժէքը Ռուսաստանի յեղափոխական շարժումների մէջ։ Այդտեղ նա հանդիսանում է մի „կարծր ընկոյզ“ ռուս կառավարութեան համար, շնորհիւ իր գերազանց զինուորական կազմակերպութեան։ Ցարիզմը հարկ տեսաւ հայկական պօգրոմներ սարքել թաթարների միջոցով, բայց „Դաշնակցութիւնը“ աջողեց յետ մղել նրանց։

„Ռուս յեղափոխութիւնից, թւում է թէ միմիայն „Դաշնակցութիւնն է քաղել պարզ ու որոշ հրահանգ։ Նա շատ լաւ է ըմբռնել, թէ ինչ վնասներ է հասցրել շարժման գործին կուսակցական երկպառակութիւնը և յանձին իր Ընդհանուր Ժողովի որոշել է ճիգ թափել՝ ուժերի միութիւն առաջ բերելու... „Դաշնակցութեան“ Զեկուցագիրը քննադատում է և ռուս սոցիալիստների մեծամասնութեան տակտիկը, տնտեսական մեթոդի գերակշռումը, կրաւորական գործադուլները և յայտարարում է, որ անհրաժեշտ է զինաւորել և զինավարժել մասսաները։

„Կարդալով այդ կուսակցութեան գործունէութիւնն ու ծրագիրները երկրի երեք հատուածների մէջ, դուք տեսնում էք այնտեղ առողջ քաղաքական միտք, որ պարզ ըմբռնումն ունի կացութիւնների մասին և գիտէ նրանցից քաղել օգուտներ“։

ԱՐԵՒՄՏՅԵԱՆ ԽՄՈՐՈՒՄՆԵՐ

(ՆՈՐ ՀԱՍԱՐԱԿԱՊԵՏՈՒԹԻՒՆ)

Պաղ, անխռով և անյողդողդ վճռականութեամբ պատմութիւնը գծում է իր ճակատագրական շրջագիծը—մութ, բռնաւոր ուժերի թագաւորութիւնից դէպի լիակատար Ժողովրդապետութիւն...

Վերջինը կ'իրականանայ Սոցիալիզմի իրականացումով։ Բայց նախ քան այդ՝ պատմական էվոլիւցիան պիտի անցնի որոշ հանգրուաններ։ Հասարակապետութիւնը, Բէպիւբլիկը, ամենագլխաւոր և ամենամօտիկ հանգրուանն է։ Ինքնակալ և սահմանադրական միապետութիւնները պիտի վերածուին ամենուրեք հանրապետական կարգերի։ Այդպէս է անդրդուելի ձգտումը համաշխարհային էվոլիւցիայի։ Այդպէս են պահանջում և արևմտեան ու արևելեան սոցիալիստական կուսակցութիւնների ծրագիրները։ Սոցիալիզմը էապէս հանրապետական է, ինչպէս որ նաև Ռամկավարութեան տրամաբանական եզրակացութիւնն է։

Ասել չէ, ի հարկէ, թէ միապետական-սահմանադրական կարգերի մէջ անհնարին է կամ դժուարին է սոցիալիզմի, ընկերվարութեան ազատ պրոպագանդը։ Աշխատաւորական շարժումը պակաս չի աճում ու բարգաւաճում միապետական Անգլիայի, Գերմանիայի, Իտալիայի մէջ, ուր կայ—մանաւանդ առաջին երկրում—բաւականաչափ ընդարձակ սահմանադրութիւն ու ռամկավարութիւն։

Միւս կողմից՝ ժամանակակից հանրապետութիւնը — դիցուք Ֆրանսիականը—ունի մի շարք ստուերային կողմեր՝ թէ քաղաքական առաջադիմութեան և թէ տնտեսական բարօրութեան տեսակէտից. դասակարգային հակամարտութիւնն ու պայքարը ունևորի և աղքատի, առանձնաշնորհեալ բուրժուազիայի և կեղեքւած աշխատաւորութեան միջև՝ շեշտւած են նոյնքան ուժով ու կատաղութեամբ, ինչպէս հարևան միապետութիւնների մէջ։

Զը նայեած, սակայն, այդ ստուերային կողմերին՝ ներկայի հանրապետութիւնները իրենց ընդհանուր ու հաւասար ընտրողական իրաւունքով, պարլամենտական աւելի պարզ ու ռամկավար կարգերով, ժողովրդական աւելի շեշտւած գերիշխանութեամբ ու միջամտութիւններով (օրէնսդրութեան մէջ), Բէֆերէնդումով ու Հանրային նախաձեռնութեամբ (Շվեյցարիայում)՝ անհամեմատ աւելի բարձր ու գերադասելի են անգամ լայն-սահմանադրական միապետութիւններից, ուր քաղաքական, կրօնական ու այլ աշխարհներում դեռ իշխում է — իրաւապէս, մասամբ իրապէս միջնադարը իր անհեթեթ նախապաշարումներով, ուր դեռ կանգուն է „աստուածային ծագման“ իրաւունքը, ուր երկրի գերագոյն հրամանատարութիւնը յանձնւած է մի թագաւորխրտուիլակի, որ կարող է իսպառ զուրկ լինել խելքից, մտաւոր ու բարոյական արժանաւորութիւններից, որ կարող է լինել նոյնիսկ մի ապուշ, կամ մի մանուկ, պատանի—ինչպէս Պորտուգալիայի դժբախտ թագաւորը—բայց որ այնուամենայնիւ կոչւած է, իր դարաւոր, ժառանգական արտօնութեան զօրութեամբ, նախագահելու մի ամբողջ երկրի ճակատագրին, իր սանկցիաները (նիւրագործումը) հաղորդելու պետութեան ամենածանրակշիռ տնօրինումներին։

Պատմութիւնը, այո, իր անողոք անիւով կոխկռտում է այդ հնացած, միջնադարեան ֆէտիշները, և ժողովրդական արթնացող գիտակցութիւնը հետզհետէ, մերթ այստեղ, մերթ այնտեղ, երկրագնդի հասունացած շրջաններում, գրոհ է տալիս հինաւուրց ու չարագործ խրտուիլակների դէմ, հռչակում է բարձրաձայն իր ազատ, անկաշկանդ հանրապետութիւնը...

Ահա Պորտուգալիան ևս—հանրապետական։ Ապստամբութիւն, ճակատամարտ, պատնէշներ, արիւն, աւերած և ի վերջոյ—թագաւորի և ամբողջ արքայատոհմի գահավէժ փախուստ... Հի՜ն, ծանօթ տեսարաններ...

Վաղը թերևս հերթը կը գայ Սպանիային. նշանները երևում են արդէն. իսկ մօտիկ անցեալի արիւնահեղ ըմբոստացումը, որ ճնշւեց այնքան բարբարոսաբար և որ վերջացաւ Ֆերրերի եղեռնական մարտիրոսութեամբ — ապացոյց էր, որ այդ երկիրը դժշակւում է“ ամենաբուռն պրոպագանդով ու խմորումով, որ Ալֆոնս XIII-ի ոճրագործ գահը կանգնած է հրաբխի վրայ... Ցպաւորութիւնը ահագին է Եւրոպայի բոլոր ծայրերում և մանաւանդ բռնապետական որջերի մէջ...

Յեղափոխական խմորումը ծայր տւեց վերջերս և... հօհենցօլլերնեան Գերմանիայի մէջ, բիսմարկեան զրահաւորւած և պողպատեայ զանգւածների աչքի առջև... նոյնիսկ Վիլհելմեան վեհապանծ մայրաքաղաքում։ Բերլինի մեծ, արդիւնաբերական թաղերից մինը քիչ առաջ կատարեալ ապստամբութեան թատերաբեմ էր—արիւնով ու սարսափներով—որպիսին չէր տեսել Գերմանիան իր քաղաքական յեղափոխութեան օրերից ի վեր...

Դա թերևս պատասխանն էր ըմբոստ կայզերի վերջին ճառին, ուր այդ անուղղելի ֆանֆարոնը, մի անգամ ևս իլուր աշխարհի հուչակում էր իր „աստուածային ծագման“ իրաւունքը հանդէպ ժողովրդական յաւակնութիւնների...

Խմորւում է և Գերմանիայում... Հիւսւում է հին, կայսերական Գերմանիայի համար այն սև մահապատանը, որ Հայն է երգել է իր Weber-ի մէջ.

„Altdeutschland, wir weben dein Leichentuch!
Wir weben hinein den dreifachen Fluch!
Wir weben, wir weben“!...

„Պառա՛ւ Գերմանիա, մենք գործում ենք քո դիապատանը,
Գործում ենք նրա մէջ եռապատիկ անէծք,
Գործում ենք, անդադար գործում՛...

Խմորւում է ամենուրեք... Ազատութեան զանգն է, որ հնչում է—ահեղ, բոթաբեր զօղանջներով — աշխարհի բոլոր բռնաւորների, իշխողների ու հարստահարիչների ականջներին։ Ազատութեան Զա՜նգն է, որ ծանուցանում է բոլոր հինաւուրց շէնքերի ու դաւանանքների մօտալուտ փլատակումը և տիեզերական կարմիր Հանրապետութեան անխուսափելի գալուստը...

ՑԻՆԻԶՄԻ ԾԱՅՐԱԿԷՏԸ

Դումա, Սենատ, Դատարան, Վարչութիւն — բոլո՜ր, բոլոր հաստատութիւնները գեանատարած փուում են ցարիզմի ոտքերի տակ և մի եղկելի, շնային ստրկամտութեամբ կատարում են նրա կամքը, նրա քմահաճ հրահանգները ամեն տեղ, կեանքի բոլոր ասպարէզներում։

Ահա և հայ-թուրքական աշխարհադղորդ ողբերգութեան „դատաստանական“ ֆինալը, վախճանակէտը... Սենատոր Կուզմինսկի, յայտնի է, իր կատակ-„քննութիւնից“ յետոյ մեղադրանքի վճիռ էր արձակել Բագւի ոճրագործ պաշտօնէութեան մի քանի ներկայացուցիչների դէմ։ Կառավարիչ Սենատը եկաւ ահա և հանդիսաւոր կերպով բեկանեց այդ վճիռը...

Ո՞չ ոք մեղաւոր չէ։ Մեղաւոր են միայն հայերը։ Ոստիկանութիւնը եղել է իր կոչման բարձրութեան վրայ, պատժելով „յեղափոխական հայերին“։ Նիկոլա II-ի Սենատը ցաւում է միայն, որ թուրք խուժանը և նրա ներշնչող-ոստիկանութիւնը չեն կարողացել լաւ պատժել յեղափոխականներին...

Հին ռէժիմի հայատեաց չարագործներին փաստաբանում է տխրահռչակ արքայապաշտ Զամիսլովսկի և ահա նրա բովանդակ փաստաբանութեան հիւթը, իր մի քանի խօսքերի մէջ.

„Թուրքերը կոտորում էին հայերին՝ նրանց յեղափոխական տրամադրութեան պատճառով... Նակաշիձէի սպանելուց յետոյ, նրա ընտանիքը արժանացաւ բարձրագոյն հեռագրի, որի մէջ նա որակւած էր „իր պարտքին անձնուէր“ բառերով։ Այդ բառերն արդէն ապացոյց են, որ Նակաշիձէն վեր էր ամեն կասկածից. իսկ նա ինքը անմեղ էր ճանաչել դատապարտեալ պաշտօնեաներին“. *Ergo*...

Ցինիզմը աւելի հեռուն գնալ չի կարող։

Սև-հարիւրակեան կառավարութիւնը շարունակում է իր խրախճանները, յաղթանակի գինովութեան մէջ։ Բայց կը գայ, յուսո՜վ ենք, նաև հատուցման ժամը...

ԱԶԴԱՐԱՐՈՒԹԻՒՆ

„Դրօշակ“-ի № 5 — 6-ի մէջ յայտարարւած էր „Նոր-Դար“-ի խմբագիր Սպանդար Սպանդարեանի մասին ծանօթ տեղեկութիւնը, քաղւած անցեալ տարուայ աշնանը, նոյն աղբիւրից, որի շնորհիւ մերկացւել ու հանրային դատաստանին են մատնւել նշանաւոր լրտես-պրովոկատորներ, սկսած Հարտինգ-Լանդեսենից մինչև Թուչենկո և Կապլինսկի։

Մեղադրեալը և հասարակական կարծիքը դատ են պահանջում խմբագրութիւնս, միանգամայն համաձայն այդ օրինաւոր պահանջին, պատրաստ է յանձնելու գործը արտասահմանեան միջկուսակցային յեղափոխական ատեանին, կազմւած ռուս, լեհ ու այլ հատւածների հեղինակաւոր ներկայացուցիչներից։

Մեղադրականը փաստող ու հաստատող վկաներն են՝ Լէօնիդ Մենշիկով և Վլադիմիր Բուրցեվ։

«ԴՐՕՇԱԿ»

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ

ԱԶԴ

Ֆիլիպէի ընկերներէն Յարութիւն Թրէնքեան, որ երկու տարի առաջ իր գործած մէկ յանցանքին համար դատապարտւած էր ժամանակաւոր հեռացման, վերջերս գտնւած է ծանր յանցանքներու մէջ — յանդգնելով շահագործել Կազմակերպութեան անունը։ Ի գիտութիւն Դաշնակցական բոլոր մարմիններուն և ընկերներուն կը յայտարարենք վերոյիշեալ Յարութիւն Թրէնքեանը վերջնականապէս դուրս ծգւած պալքանեան շրջանի դաշնակցական շարքերէն։

Հ. Յ. Դ. ՊԱԼՔ. ԿԵՆՏՐ. ԿՕՄԻՏԷ

„ԴՐՕՇԱԿԻ“ ՏՊԱՐԱՆԻՑ ՆՈՐ ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

Գր. ս.

Ա. ԱՐԱՐԱՏՍԿԻ, Ուղեցոյց ընկերներին (ընթերցանութեան համար տեսական ուսմունքներ և հրահանգներ) . . . . . — 30
Մ. ՎԱՐԱՆԴԵԱՆ, Համաժողովրդական բանակ . . . — 50
Rapport, prés. au Congrès S. I. de Copenhague („Դաշնակցութեան“ զեկուցումը Կոպենհագի Միջազգ. Սոց. Համագումարին)։
Նոյնը գերմաներէն լեզուով։

ՄԻՔ. ՎԱՐԱՆԴԵԱՆԻ

ՎԵՐԱԾՆՈՒՈՂ ՀԱՅՐԵՆԻՔԸ

ԵՒ

ՄԵՐ ԴԵՐԸ

(«ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ» XX-ԱՄԵԱԿԻ ԱՌԻԹՈՎ)

ԳԻՆՆ Է 3 ՖՐԱՆԿ

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ 1 Ռ. 50 Կ։

Հասցէ՝ *Réd. du „DROSCHAK“, Genève (Suisse)*։